ԷՋՄԻԱԾՆ

1986

9

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԽՕՍՔ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ

Իբրև ընդհանրական Հայրապետը Հայ Առաքելական Եկեղեցու, հայրական սիրով ողջունում ենք Լիբանանի մեր սուրբ Եկեղեցու հաւատացեալներին և հայցում Աստուծոյ օգնականութիւնը որ վերծ պահի նրանց ամէն տեսակի փորձութիւններից, որպէսզի նրանք շարունակեն ապրել ու գործել լիբանանեան օրինեալ երկրի մէջ, բոլոր մահմեդական և քրիստոնեայ համայնքների մեծ ընտանիքում խաղաղ ու համերաշխ:

Այս առթիւ Մեր եղբայրական սիրոյ ողջոյնն ենք առաքում յատկապէս մեր սուրբ Եկեղեցու Կիլիկեան Աթոռի Գահակալ՝ Նորին Սրբութիւն Տ. Տ. Գարեգին Բ Կաթողիկոսին և նրա գործակիցներին, մաղթելով նրանց Սուրբ Հոգւոյ աստուածային ուժն ու եռանդը, որպէսզի անվտանգ ու ապահով պահպանեն իրենց եկեղեցիները և համայն հայ հաւատացեալներին ի Լիբանան:

Մենք, լսելով վերջերս Պէյրութում տեղի ունեցած աղետալի դէպքերի և սպանութիւնների մասին, ուղղեալ Հայ Եկեղեցու կաւակների դէմ, Մեր խոր վիշտն ու վրդովմունքն ենք յայտնում և ապասում, որ վերջ գտնեն հակահայ արարքները Լիբանանի մէջ, վասնզի Ամենայն Հայոց Կաթողիկոսական Աթոռը ի Սուրբ Էջմիածին և համայն մեր հաւատացեալ ժողովուրդը ի Սովետական Հայաստան չեն կարող անտարբեր մնալ, երբ իրենց հաւատակից քոյրերի ու եղբայրների կեանքը և մարդկային իրաւունքները Լիբանանում կամ այլուր աշխարհի վրայ, վտանգւում են ու ոտնակոխ արւում անպատասխանատու ուժերի կողմից:

Մեր տնական աղօթքն է, որ աշխարհում ամենուրեք յաղթանակի մարդկանց և ազգութիւնների խաղաղ գոյակցութեան ու համերաշխ գործակցութեան ոգին, որը մեր օրերի աշխարհում միակ հնարաւոր ճանապարհն է մարդկային կեանքի բարօրութեան, առաջադիմութեան ու երջանկութեան:

Թող բարին Աստուած այդ խաղաղարար ոգին առատապէս բաշխի լիբանանեան սուրբ գրական երկրին և այնտեղ բնակուող մահմեդական ու քրիստոնեայ բոլոր համայնքներին, որպէսզի Միջերկրականի Մարգարիտը շուտով վերագտնի իր երբեմնի լուսաւոր կեանքն ու միջազգային հեղինակութիւնը:

ՎԱԶԳԷՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
4 յունիս 1986 թ.

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԱՍԽԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Խորապես վգացված ենք սիրո և հոգատարության պատգամի համար՝ ուղղված լիբանանահայ մեր համայնքին այս տագնապալի ժամանակներում: Ձեր պատգամը արդեն հրապարակվել է հայկական մամուլում: Ամբողջ սրտով շնորհակալ ենք Ձեր հայրական ոգով տոգորված վերաբերմունքի համար:

Եղբայրական սիրով՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ

Անթիլիաս,
17 հունիսի 1986 թ.



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ Ս. ԳԵՂԱՐԴԱ ՎԱՆՔՈՒՄ

Հունիսի 27-ը մեծ ուրախության օր էր Այրիվանքի միաբանության համար: Վեհափառ Հայրապետը ուխտի պիտի գար Ս. Գեղարդա վանք: Ցերեկվա ժամը մեկին, ուղեկցությամբ Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանի, Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպիսկոպոս Պոլատյանի, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին եպիսկոպոս Ներսիսյանի, Նոր Նախիջևանի և Ռուսաստանի առաջնորդական տեղապահ Տ. Տիրան վարդապետ Կյուրեղյանի, ինչպես նաև Մայր Աթոռի ֆինանսական բաժնի վարիչ պր. Գառնիկ Քեհյայանի ու միջեկեղեցական հարաբերությունների բաժնի քարտուղար պր. Պարգև Շահբազյանի, Նորին Սրբությունը ժամանեց Ս. Գեղարդա վանք: Պատշաճ ընդունելությունից հետո, Վեհափառ Հայրապետը իր ուղեկիցներով առաջնորդվեց տաճար: Պատմական տաճարի սրբական կամարների ներքո տիրեց խորհրդավոր լռություն: Ապգիս Սրբազնագույն Հայրապետը մեր Ս. Եկեղեցու, ապգի, ինչպես նաև աշխարհի հարատև խաղաղության մտահոգությունները իր հոգում, գլխահակ աղոթում էր՝ հաստատապես համոզված լինելով, որ աշխարհի և մեր ժողովրդի վաղվա ապահովությունը անպայմանորեն կապված է Աստուծո պարգևած խաղաղության հետ: Աղոթքից հետո Վեհափառ Հայրապետը վանահոր առաջնորդությամբ դիտեց Ս. Գեղարդա վանքի ողջ հնամալիրը՝ մի անգամ ևս հիանալով մեր շինարար ու ստեղծագործ նախնիների տաղանդով: Աստուծո փառքի համար կերտված աղոթքի այս տները կառուցելիս մեր նախնիները թափանցել են ժայռերի խորքը՝ երկնելու համար կարմանահրաշ, անկրկնելի ժայռափոր տաճարների այս շարքը: Տաճարի համալիրը դիտելուց հետո, Նորին Սրբությունը դիտեց նաև վանքի հարավարևմտյան կողմում մի քանի շաբաթ առաջ բացված «Տարոնական Ոգուն» նվիրված գեղեցիկ աղբյուր-հուշարձանը, որի մեկենասն է փարիզահայ Մարտիկ-Օհան Տակառյանը:

Վանքի ներքին, հոգևոր, կազմակերպչական և վանական տնտեսության մասին մանրամասն տեղեկություններ տվեց վանահայրը: Կարճ հանգստից հետո Նորին Սրբությունը մասնակցեց իր պատվին կազմակերպված ճաշին, որը տեղի ունեցավ վանքի վանական սեղանատանը: Արժանապատիվ Տ. Եղիշե ավագ քահանա Սարգսյանը միաբանության և աշխատակիցների անունից մի անգամ ևս բարի գալուստ մաղթեց Նորին Սրբությանը: Վեր հանելով Հայոց Հայրապետի երեսնամյա հայրապետական փառավոր գործունեությունը,

արժանապատիվ տեր հայրը ասաց նաև, որ «...Ս. Գեղարդա վանք ուխտի եկողները և հպարավոր այցելուները այստեղ, մեր վանքում ականատես են մեր Սուրբ Եկեղեցու ճշմարիտ նյութական և հոգևոր վերապարթոնքին, որը արդեն երեսուն տարի է, որ շարունակվում է: Երբեմն փորձել եմ մեր օրերի եկեղեցական վերապարթոնքը համեմատել անցյալի մեր եկեղեցական վերապարթոնքների հետ, բայց հավատացեք, որ համեմատության ոչ մի եզր չեմ գտել, քանզի անցյալի նմանօրինակ եկեղեցական լուսավոր շարժումները դժբախտաբար եղել են կարճատև: Փառք Աստուծո, մեր օրերի վերապարթոնքը, սկսված Ձերդ Սրբության մարգարեաշունչ տեսիլքով և միայն Ձեր Սրբական անձին յուրահատուկ լավատեսությամբ, արդեն շարունակվում է երեսուն տարի, որի համար մեր Եկեղեցին ու մեր ազգը պարտական են Ձեր սուրբ Անձին: Մենք միշտ աղոթող ենք Ձեր թանկագին կենաց համար: Թող Աստված երկար ու քաջառողջ կյանք պարգևի Ձերդ Վեհափառությանը: Իսկ դրանում բոլորս հաստատ համոզված ենք, քանի որ Ձեզ հետ է մեր ամբողջ ազգի անմնացորդ սերն ու աղոթքը»:

Վեհափառ Հայրապետը իր պատասխան խոսքում դրական գնահատելով Ս. Գեղարդա վանքի միաբանության ջանքերը հոգևոր սպասարկման ասպարեզում՝ պատվիրեց է՛լ ավելի ուշադիր և հոգատար լինել հավատացյալների նկատմամբ: Նայելով ծերունապարդ և իմաստուն մեր Հայրապետին, զգում ես, որ մեծագործ Հայրապետը իր անձնական երջանկությունը, երիտասարդ մընալու գաղտնիքը տեսնում է միայն իր Հոտի և մեր Ս. Եկեղեցու վերապարթոնքի և միասնականության մեջ, որը երաշխիքն է մեր ազգի և Եկեղեցու գալիք հաջողությունների:

Այսօր Հայոց Հայրապետը ուխտի է եկել Ս. Գեղարդա վանք՝ իր ուխտը նորոգելու և Ս. Գեղարդա բարձունքից դիտելու և հիանալու վերածնված մեր երկրի բերքառատ դաշտերով ու այգիներով և օրհնելու իր երկրի բախտը տնօրինող մեր սքանչելի ժողովրդին:

Ուշ երեկոյան Նորին Սրբությունը օրհնելով վանքի միաբանությանն ու աշխատակիցներին՝ իր ուղեկիցների հետ ուրախ տրամադրությամբ վերադարձավ Մայր Աթոռ:

Ուխտդ կատար, Վեհափառ Տեր:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԱՐԿԱՎԱԳ ՍԱՐԳՍՅԱՆ





ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՂՄՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Սույն թվականի հունիսի 11-ին Մոսկվայում, Մամուլի և Նորությունների Գործակալության շենքի Մեծ դահլիճում, տեղի ունեցավ Սովետական Միության Խաղաղության կոմիտեի և Սովետական Միության Խաղաղության ֆոնդի համատեղ նիստը: «Աշխարհն առանց պատերազմների, առանց վենքերի» կարգախոսով գումարված սույն ժողովին մասնակցում էին Սովետական Միության խաղաղության շարժման շուրջ 500 ղեկավար աշխատողներ:

Ժողովի գլխավոր բանախոս՝ Սովետական Միության Խաղաղության կոմիտեի նախագահ Յ. Ա. Ժուկովի հանգամանալից վեկուցումից հետո, խաղաղության հարցերին նվիրված ելույթներով և գործնական առաջարկներով հանդես եկան այլ հռետորներ: Ապա ժողովն ընդունեց հատուկ փաստաթուղթ, որտեղ ի մասնավորի ընդգծվում էր, թե ատոմական վենքի այս դարում ցանկալի չէ, որ աշխարհում որևէ մարդ կամ որևէ երկիր վոհ դառնա միջուկային հրկիպման: Պետք չէ թույլ տալ, որ միջուկային պատերազմ սանձազերծվի: Մարդկությունը պետք է կարողանա ձերբազատվել միջուկային վենքից մինչև 2000 թվականը:

Խաղաղության կողմնակիցների ժողովին, հանուն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու, մասնակցեց Շիրակի թեմի առաջնորդ Տ. Նարեկ եպս. Շաքարյանը:

«Տեր Աստված, տուր աշխարհիս խաղաղություն». Ամեն:

ԹՂԹԱԿԻՑ





ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Սույն թվականի հունիսի 9-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 11.00-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, տեղի ունեցավ ճեմարանի 1985—1986 թթ. ուսումնական տարվա ամավերջի հանդիսությունը:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, վանքի պաշտոնեությունը և այլ հրավիրյալներ:

Հանդիսությանը հրավիրվել էին ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ստեփան Վարդանյանը և տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը:

Հանդիսությանը ներկա էին նաև գերաշնորհ Տ. Սիոն, Տ. Հուսիկ, Տ. Ներսես, Տ. Գարեգին սրբազան հայրերը:

Հանդեսը սկսվեց Հայկական ՍՍՀ պետական հիմնով, որին հաջորդեց «Ճեմարանի քայլերգը»՝ ուսանողների կատարմամբ:

Հանդիսության բացման խոսքով հանդես եկավ ճեմարանի փոխտեսուչ Տ. Հայկազուն վրդ. Նաջարյանը:

«Վեհափառ Տեր, հարգելի տիար Ստեփան Վարդանյան, գերաշնորհ սրբազան հայրեր, հոգեշնորհ և քահանա հայրեր, սիրելի դասախոսներ, սաներ և ներկաներ:

Հավաքվել ենք այստեղ ներկա լինելու հոգևոր ճեմարանի 1985—1986 ուսումնական տարեշրջանի փակման հանդիսության: Մեր Տերը ավանդեց մեզ ուսուցանել և քարոզել: Այդ քրիստոսավանդ առաքելության հետևելով Ս. Գրիգոր Լուսավորիչ հիմնեց հավատքի այս Մայր օջախը, և այդ նույն հավատքի օջախից ծնունդ առած Մաշտոց վարդապետ երկնքից իջեցրեց հայոց տառերը, որպեսզի հայը կարողանար թափանցել ճշմարիտ լույսի էությանը: Այս լույս օջախը հաճախ ավերվեց, հաճախ քանդվեց, բայց քրիստոսատուր լույսը անթեղվեց և ոչ թե հանգավ «զի խաւար նմա ոչ եղեւ հասու»: Եվ ինչպես փյունիկը դարձյալ ծնվեց, այնպես Քրիստոս դարձյալ Հարություն առավ:

Կարող է թվալ, թե հավաքվել ենք մի սովորական հաշվետվության ներկա լինելու: Գուցե արտաքուստ այո՛, բայց ներքուստ ո՛չ: Չէ՞ որ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ավելի քան 15 տարիներ խոկաց, աղոթեց մինչև հասավ իր առաքելության լուսավոր օրվան: Չէ՞ որ Մաշտոց ավելի քան 10 տարիներ աղոթեց, տառապեց իր փնտրտուքի ճանապարհին, մինչև կարողացավ դեպի լույսի աղբյուրը տանող աստիճանները գտնել: Հրաշքները միանգամից են պատահում, բայց մինչ այդ ներքուստ, հյուլե առ հյուլե, կաթիլ առ կաթիլ հավաքվում, և մի օր պայթում են, ինչպես հունդը բոպե առ բոպե վարգանում և մի օր միանգամից որպես ծաղիկ իր գեղեցկահյուս դեմքն է մեկ պարկում:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ԴԱՍԻ, ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՀԵՏ
(9 հունիսի 1986 թ.)

Фундаментальная библиотека

Այս տարեշրջանը ճեմարանի ողջ պատմության մեջ՝ հնից մինչև այսօր, գուցե մի փոքրիկ էջ է, որի խորհուրդը և ծալքերը ապագան միայն կարող է ցույց տալ:

Վեհափառ Տեր, այս անցնող ուսումնական տարեշրջանին Ձեր գլխավորությամբ դասախոսական կազմը և տեսչությունը հույսով ցանեցին հավատքի սերմերը: Մի հավատք, որ մեր ժողովրդի պատմության, մշակույթի, էության մի մասն է: Մենք՝ մեր մեծ անցյալի և ավանդությանց համեստ հետևորդներս, ցանեցինք նման սերմնացանին, որ արևածագին իր լույս սերմերը սփռում է մայր հողի մեջ՝ հավատալով, որ սուրբ հողը գուրգուրելու և խնամելու է դրանք մինչև մի հրաշք օր ծլեն և հասակ առնեն:

Մենք ցանեցինք, Վեհափառ Տեր, և հավատում ենք, որ Աստված աճեցնելու է այդ սերմերը՝ հեռու որոմներից և փշերից, մինչև մի օր հասունանան և իրենք էլ իրենց հերթին մշակները լինեն Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ լինված Էջմիածնական հավատքով և Մայր Հայաստանի տեսիլքներով»:

Ապա ելույթ ունեցավ ճեմարանի երգչախումբը՝ ղեկավարությամբ հոգևոր ճեմարանի եկեղեցական երաժշտության դասախոս բարեշնորհ Հայկ սարկավագ Ֆրունզյանի: Երգչախումբը հանդիսավորությամբ կատարեց «Էջ Միածինն ի Հօրէ» և «Որք վարդարեցին» շարականները:

Այնուհետև ավարտական լսարանի ուսանող Ռավմիկ սրկ. Իսախանյանը արտասանեց մի հատված Վահագն Դավթյանի «Լույս Առավոտի» բանաստեղծական շարքից: Արամ Խաչատրյանի «Պոեմ» ստեղծագործության դաշնամուրային գեղեցիկ կատարմամբ հանդես եկավ Հովակիմ սրկ. Քիլեջյանը:

Ե լսարանի սան Գևորգ սրկ. Գյուլգյուլյանը շնորհակալական իր խոսքում ի միջի այլոց ասաց.

«Կրկին անգամ համախմբվել ենք այս նվիրական հարկի ներքո տոնախմբելու հոգևոր ճեմարանի 1985—1986 քառասուներորդ հոբելյանական ուս. տարվա հանդիսավոր փակումը:

Պահն այս թե՛ ուրախալի է և թե՛ հուզումնալից մեզ համար: Ուրախալի, քանի որ բարեհաջող ավարտեցինք 1985—86 ուս. տարեշրջանը: Հուզումնալից, քանի որ մենք Ե լսարանի 7 սարկավագներս հրաժեշտ ենք տալիս այս նվիրական հաստատությանը՝ հոգևոր ճեմարանին:

Ճեմարանի հարկի ներքո մենք բացեցինք մեր հոգու դռները՝ այնտեղ ներառնելու այն ամեն լավն ու բարին, ինչը անտրտունջ ու համբերատար մատուցեցին մեզ հոգևոր ճեմարանի տեսչությունը և դասախոսական կազմը՝ ի գլուխ ունենալով Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին: Ուսման ընթացքում մենք զգացինք Վեհափառ Հայրապետի մասնավոր ուշադրությունը հոգևոր ճեմարանի հանդեպ, ուր դաստիարակվում ու հոգևոր սնունդ են ստանում մեր ժողովրդի բազում ուսումնատենչ զավակներ՝ ի սպասավորություն Հայաստանյայց Առաք. Ս. Եկեղեցու և հայ ժողովրդի, որ «ի Հայաստան և ի սփիւռս աշխարհի»: Վերջին ուս. տարում մենք ուրախությունն ու բախտավորությունն ունեցանք անձնապես վայելելու Վեհափառ Հայրապետի հայրական սերն ու հոգատարությունը, որ հակառակ իր բազմաբեղ վիճակին հանձն առավ մեր լսարանի քարոզխոսության դասընթացը:

Վեհափառ Տեր.

Թույլ տվեք սարկավագ եղբայրներիս որդիական սերն ու երախտագիտությունը հայտնել Ձերդ Սրբությանը և վստահեցնել, որ մեր ողջ կյանքն ու ստացած գիտելիքները կներդնենք մեր Եկեղեցու պայծառության համար:

Մեր շնորհակալական խոսքն ունենք ասելու նաև ճեմարանի տեսչությանը՝ հանձինս Տեսուչ Տ. Եղնիկ քհն. Պետրոսյանի և փոխտեսուչ Տ. Հայկազուն վրդ. Նաջարյանի, և դասախոսական կազմին, վասն զի 5 երկար տարիներ առաջ, երբ մենք ոտք դրեցինք ճեմարանի շեմքից ներս, մեր սրտերը ծարավ էին ու մեր հոգիները կարոտ հոգևոր սնունդի և դուք եղաք մեր սրտերի ու հոգիների լուսավորիչը և այնտեղ սերմանեցիք բարի սերմնացանի առատ սերմերը և այն ամենը, ինչ կարող է տալ հայրը իր հարազատ որդուն: Եղաք մեկ համար հայր, եղաք ուսուցիչ և եղաք բարեկամ, տխրեցիք և ուրախացաք մեկ հետ: Եվ ահա եկել է արդեն հրաժեշտի պահը: Սակայն ավարտել ճեմարանը չի նշանակում բաժանվել նրանից: Ինչպես զավակը իր ողջ կյանքի ընթացքում պարտական է իր հարազատ ծնողքին, այնպես էլ մենք, որպես Ձեր հոգևոր զավակները, սիրելի դասախոսներ, պարտական ենք և երախտապարտ Ձեր անկեղծ սիրույն ու նվիրումին: Սիրելի դասախոսներ, սիրելի ուսանողներ, մենք այսուհետ էլ հոգեպես Ձեզ հետ ենք, Ձեր հաջողությունները նաև մերն են, Ձեր հույզերն ու ապրումները նույնպես: Կրկին անգամ շնորհակալ ենք Ձեզանից:

Պարտք ենք համարում մեր շնորհակալությունը հայտնելու նաև Մայր տաճարի լուսարարապետ գերաշ. Տ Հուսիկ արք. Սանթուրյանին, որ հանդիսացավ մեր եկեղեցական

արարողությունների ուսուցիչը՝ ջանք ու եռանդ չխնայելով այդ գործում:

Վեհափառ Տեր, սիրելի ներկաներ.

Այս պահից սկսվում է մեր կյանքի մի նոր ժամանակահատված, բացվում մի նոր ուղի՝ հայ հոգևորականի կյանքի նվիրական ուղին: Հուսով ենք, որ պիտի կարողանանք պայքարել կյանքի ալեկոծումների դեմ և կդառնանք մեր Եկեղեցու արժանավոր ու նվիրված զավակները:

Այս խոհերով ու հույսերով, Վեհափառ Տեր, թույլ տվեք ողջ ուսանողության անունից մատչիլ ի համբույր Ձերդ Սրբության սուրբ աջույն՝ ստանալու Ձեր հայրական օրհնությունը»:

Այնուհետև ճեմարանի երգչախումբը՝ ղեկավարությամբ ճեմարանի երաժշտության դասախոս Կոմիտաս Քեշիշյանի, կատարեց Տիգրան Չուխաջյանի «Ով մեծասքանչ դու լեզու» երգը: Որից հետո Բ լսարանի սան Գարսևան Երանյանը արտասանեց Պարույր Սևակի «Մայրենի լեզու» բանաստեղծությունը:

Դ լսարանի սան Սամվել Հովհաննիսյանի դաշնամուրային հիանալի կատարմամբ հնչեցին Կոմիտասի «Օրորոցայինը» և Առնո Բաբաջանյանի «Էքսպրոմտը»: Ապա ճեմարանի սաների երգեցիկ խումբը հուզումով երգեց «Մայր Արաքսի ափերով» երգը:

Հոգևոր ճեմարանի ուսումնա-դաստիարակչական աշխատանքների մասին հաշվետու զեկուցմամբ ելույթ ունեցավ ճեմարանի տեսուչ Տ. Եղնիկ քհն. Պետրոսյանը:

«Վեհափառ Տեր,

Մեծահարգ Տիար Ստեփան Վարդանյան, Գերագնորհ Սրբազան Հայրեր, սիրելի ներկաներ,

Ամենակալ Աստուծո ողորմությամբ և Վեհափառ Հայրապետի օրհնությամբ, բոլորվեց Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի 1985—86 ուսումնական տարին:

Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանն այսօր հանդիսանում է Հայ Եկեղեցու կարևոր վարկերակներից մեկը: Այստեղ պատրաստվում են հոգևորականներ, որոնք կոչված են ծառայելու Հայ Եկեղեցուն և հայ ժողովրդին ի Հայաստան և ի Սփյուռս աշխարհի: Այս փաստն ինքնին հուշում է մեզ, որ մեր ժողովրդի, հատկապես սփյուռքի հայության հոգևոր-մշակութային կյանքի բարձրությունը կախված կլինի նրանից, թե ինչպիսի շրջանավարտներ կտա Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանը: Այս առումով կրթական այս սրբազան հաստատությունը ունի չափազանց կարևոր նշանակություն և արժանի է մեծագույն ուշադրության:

Անցած 41 տարիների ընթացքում հոգևոր ճեմարանը տվել է շուրջ 120 շրջանավարտներ, որոնք, հիմնականում ալնիվ, ուսյալ, ուղղամիտ, հայրենասեր և հավատավոր հոգևորականներ, անխոնջ կերպով ծառայել են մեր ժողովրդին և մեր Եկեղեցուն: Կարելի է ասել, որ ճեմարանը բավարար չափով կատարել է իր վրա դրված պարտականությունը՝ հասցնելով պատրաստված հոգևորականներ՝ վերապարթոնք ապրող Հայ Եկեղեցու համար:

Այսօր, սակայն, մեզ չի կարող գոհացնել անցած տարիների ճեմարանի արդյունքի բնական շարունակությունը: Մեք պետք է ձգտենք ավելիին, նվազագույնը՝ կրկնակիին, հաշվի առնելով հատկապես սփյուռքի հրատապ պահանջները և այն հանգամանքը, որ մինչև վերջերս սփյուռքին հոգևորականներ մատակարարող Երուսաղեմի դպրեվանքն այսօր, փաստորեն, անգործունյա վիճակ ունի:

Թող Աստված ուժ և կարողություն տա մեզ՝ մեր վրա դրված պարտականությունը հաջողությամբ կատարելու համար:

Հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը անցնող ուս. տարվա ընթացքում

Հաճելի ավանդություն է դարձել արդեն, որ 30 տարի շարունակ հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը բարեհաճում է գլխավորել Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, հակառակ իր բազմազբաղվածությանը. Նորին Սրբությունը իր դասավանդություններով մի առանձին փայլ է տալիս մեր այս փոքրիկ կրթական հաստատությանը:

Անցնող ուս. տարվա ընթացքում իրենց ուսուցչական աշխատանքները շարունակեցին Հայկազուն վարդապետ Նաջարյանը, Եղնիկ քհն. Պետրոսյանը, Պարգև Շահբազյանը, Հայկ սրկ. Ֆրունջյանը, Արտակ քհն. Սիմոնյանը, Երվանդ Մելքոնյանը, Եղիշե քհն. Բաղրամյանը, Արտաշես Մաթևոսյանը, Խորեն Պալյանը, Նորիկ Գրիգորյանը, Հուսիկ քհն. Լազարյանը, Եղիշե ավագ քահանա Սարգսյանը, Երվանդ Գրիգորյանը, Արմեն Հովսեփյանը, Եղրաս աբեղա Ներսիսյանը, Կոմիտաս Քեշիշյանը, Թադեոս Ասմարյանը, Ռուբիկ Կարապետյանը, Ռուբա Ղալաջյանը: Վերոհիշյալ դասախոսներից բացի դասախոսական աշխատանքի հրավիրվեցին պարոնայք Խաչիկ Բաղիկյանը, Կարեն Մաթևոսյանը և Վլադիմիր Կիրակոսյանը:

Տեսչական Կազմը

Հոգևոր ճեմարանի տեսչությունն այս տարի ուներ հետևյալ կազմը.

Տեսուչ՝ Եվնիկ քին. Պետրոսյան
Փոխտեսուչ՝ Հայկակուն վրդ. Նաջարյան
Քարտուղար՝ Հուսիկ քին. Լազարյան
Ընդհանուր դաստիարակ՝ Եղրաս աբեղա Ներսիսյան
Վերակացուներ՝ Աշոտ սրկ. Թովմասյան
Վաչագան Հովհաննիսյան
Լևոն Պետրոսյան
Գրադարանավար՝ Հենրիկ Բալյան:

Հոգևոր ճեմարանի ուսանողությունը.

1985—86 ուսումնական տարում ճեմարանն ունեցել է 44 ուսանող, բաժանված 5 լսարանների վրա: 1 ուսանող հեռացվել է ճեմարանից հիվանդության պատճառով:

Այս ուսումնական տարին ճեմարանը փակում է 43 ուսանողով, ըստ հետևյալի.

Ե լսարան—7 ուսանող
Դ լսարան—8 ուսանող
Գ լսարան—10 ուսանող
Բ լսարան—7 ուսանող
Ա լսարան—10 ուսանող
Նախապատրաստական—1 ուսանող

Ուսանողներից 11-ը սփյուռքից են՝ Լիբանան, Սիրիա, Իրաք, Հնդկաստան, Եգիպտոս, Ռումինիա, Արգենտինա: 2 ուսանող ՌՍՖՍՀ-ից, և 2-ը Ադրբեջանից:

Անցնող տարվա ընթացքին հոգևոր ճեմարանի 5 շրջանավարտներ ձեռնադրվել են կուսակրոն քահանա, 1-ը ամուսնացյալ: Իսկ հոգևոր ճեմարանի ավարտական լսարանի 7 ուսանողներ ձեռնադրվել են սարկավագ:

Այս ուսումնական տարում, 1986 թ. մարտի 13—14-ին, հոգևոր ճեմարանի 8 շրջանավարտներ հաջողությամբ հանդես եկան դիպլոմային աշխատանքների պաշտպանությամբ: Այս տարի ևս հոգևոր ճեմարանը տվեց իր հերթական հունձքը՝ 7 շրջանավարտներ:

Ուսումնական գործունեության հետ զուգահեռ անցած ուս. տարում կատարվել են նաև դաստիարակչական աշխատանքներ: Ծանոթանալու համար հայ ժողովրդի հին և նոր նվաճումներին, ուսանողները այցելել են Սաղմոսավանք, Կեչառիս, Երևանի Պետական պատկերասրահ, Հայաստանի Պատմության Պետական թանգարան, ԺՏՆՑ և այլ վայրեր, հաճախակի ներկա են եղել համերգների, թատերական ներկայացումների, կինոդիտումների, մեկնել 4-օրյա ձմեռային պտույտի՝ Աղվերան և վաղը պիտի մեկնեն ամավերջի ավանդական 4-օրյա պտույտի դեպի Գուգարքի վանքերն ու ճարտարապետական հուշարձանները:

Հոգևոր ճեմարանի ուսուցիչներ պարոնայք Պարգև Շահբալյանի, Երվանդ Մելքոնյանի և Խաչիկ Բաղդիկյանի ղեկավարությամբ ուսանողները հոգևոր ճեմարանի հարկի տակ կազմակերպել են գրական երկու երեկոներ՝ մեկը նվիրված հայոց լեզվին, մյուսը՝ Եղեռնին:

Իսկ այժմ, Վեհափառ Տեր, թույլ տվեք հոգևոր ճեմարանի տեսչության, դասախոսական կազմի և ուսանողության անունից ջերմապես շնորհակալություն հայտնել Ձերդ Սրբությանը, այն հոգատար վերաբերմունքի և հայրական խնամքի համար, որ տածում է Ձեր Սուրբ անձը հոգևոր ճեմարանի նկատմամբ:

Ցանկանում եմ շնորհակալական խոսք ասել նաև Մայր Աթոռի միաբանությանը և պաշտոնեությանը իրենց ցուցաբերած կանական օժանդակությունների համար:

Հոգևոր ճեմարանի տեսչությունը շնորհակալություն է հայտնում Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդին՝ ի դեմս մեծահարգ տիար Ստեփան Վարդանյանի, որ իր բարի կամեցողությամբ և անհրաժեշտ օգնությամբ օժանդակում է հոգևոր ճեմարանի գործունեությանը:

Վեհափառ Հայրապետ, այժմ թույլ տվեք ընթերցել հոգևոր ճեմարանի ուսման առաջավորների անունները և խնդրել Ձերդ Սրբությանը տալ նրանց տեսչության կողմից սահմանված պարգևները:

Ե լսարան—4,5 միջինով առաջինն է հանդիսանում Ռաֆմիկ սրկ. Իսահանյանը
4,3 միջինով երկրորդն է Գևորգ սրկ. Մկրտչյանը
Դ լսարան—4,8 միջինով առաջինն են՝ Գևորգ Աջապահյանը և Սամվել Հովհաննիսյանը
4,6 միջինով երկրորդն է Ռուբեն սրկ. Հարությունյանը
Գ լսարան—4,4 միջինով առաջինն է՝ Մուրադ Սողոմոնյանը
4,3 միջինով երկրորդն են՝ Սիմոն Առուշանյանը, Սերժիկ Մանսուրյանը և Սարգիս Ղանդիլյանը
Բ լսարան—4,7 միջինով առաջինն է՝ Գարսեվան Երանյանը
4,6 միջինով երկրորդն է Գրիգոր Անալյանը
Ա լսարան—4,7 միջինով առաջինն է՝ Զավեն Ղարիբյանը
4,4 միջինով երկրորդն է Անդրանիկ Խաչատրյանը

Գերապանց վարքի համար սահմանված մրցանակը տրվում է Բ լսարանի սան Կամո Մովսիսյանին:

Եկեղեցասիրության համար՝ Բ լսարանի սան Անդրանիկ Գալստյանին:

Եկեղեցական երաժշտության մեջ ձեռք բերած հաջողությունների համար «Կոմիտաս վարդապետի» երկրորդ կարգի մրցանակով պարգևատրվում է Ե լսարանի ուսանող Հովակիմ սրկ. Քիլեջյանը»:

Այնուհետև ճեմարանի տեսուչ Տ. Եղնիկ քհն. Պետրոսյանը հրավիրեց Վեհափառ Հայրապետին՝ տալու իր հայրական օրհնությունը հոգևոր ճեմարանի դասախոսական կազմին և ուսանողությանը:

Վեհափառ Հայրապետն ասաց.

«Ինչպես ամեն տարի, մեծ հաճույքով, ներկա եմ գտնվում մեր հոգևոր ճեմարանի դպրոցական տարեշրջանի փակման այս հանդիսության: Բոլորդ լավ հիշում եք, որ ամեն տարի բացման հանդիսության պահին, ավանդական սովորության համաձայն, կարդացվում է Ավետարանից «Սերմնացանի առակ»-ը: Ես վերստին ուզում եմ հիշեցնել այդ առակի շատ համոզեցուցիչ և ճշմարիտ իմաստը: Հիսուս, ինչպես գիտեք, շատ անգամ որոշ պատգամներ, ճշմարտություններ արտահայտելու համար դիմել է առակների ձևին: Եվ այս էլ նշանավոր առակներից մեկն է՝ իր պարզության և իր խորիմաստության մեջ:

Սերմնացանը սերմանում է, որոշ սերմեր ընկնում են ապառաժների վրա և չորանում են, ուրիշ սերմեր ընկնում են մացառների մեջ և չեն կարողանում աճել, և երբեմն էլ սակայն ընկնում են պարարտ հողի վրա ու տալիս են առատ արդյունք՝ մեկի տեղ երեսուն, վաթսուն, և հարյուր նույնիսկ: Ամեն դպրոցական տարվա սկզբում սկսվում է ցանելու շրջանը, տարեվերջին տեղի է ունենում հունձքի հավաքը: Այժմ մենք հարց կարող ենք տալ, թե արդյոք մեր հոգևոր ճեմարանի ուսանողները այս մի տարվա ընթացքում, ի՞նչ չափով կարողացան այդ իրենց բաշխված սերմերը աճեցնել: Սիրելի ուսանողներ, ես ձեզանից ամեն մեկին անձնապես չեմ ճանաչում: Ճանաչում եմ միայն վերջին դասարանի աշակերտներին՝ յոթ սարկավագներին, որոնց ես դասավանդել եմ: Իմ անձնական վկայությունը դրական է բոլորի համար, տարբերություններ կան բնականաբար, բայց մեր շրջանավարտ սարկավագները՝ յոթն էլ, պարարտ հող հանդիսացան գոնե իմ առարկայում և կարողացան լավ արդյունքներով փակել իրենց աշխատանքի շրջանը: Այս վկայությունից, որ լսեցինք քիչ առաջ տեսուչի կողմից արտասանված, երևաց, որ նաև մյուս առարկաների մեջ առավել կամ նվազ չափով այդ է եղել արդյունքը: Ես հետևաբար շնորհավորում եմ՝ և՛ հոգևոր ճեմարանի տեսչությանը, և՛ դասախոսական կազմին, և՛ ձեզ, սիրելի ուսանողներ, որ կարողացաք ձեր ուժերի ներած չափով աճեցնել այն սերմերը, որ ընկան ձեր մտքի, հոգու անդաստանների վրա:

Ես մի բան էլ ուզում եմ ավելացնել. իմ ցանկությունն է, որ մեր ուսանողները ընդհանրապես, մանավանդ այս հանդիսավոր պահուն, հիշեն, որ իրենք, հավիվ 40 ուսանողներ, անբաժան մասն են կազմում ամբողջ մեր Հայրենիքի ողջ ուսանողության: Այս գիտակցությամբ, բնական է և անհրաժեշտ, որ դուք ձեզ մենակ չզգաք, չկարծեք թե միայն դուք կաք իբրև ուսանող հայ ժողովրդի ծառայության հրավիրվելու ապագային: Մտաբերենք, որ հենց այս օրերին, մեր ամբողջ Հանրապետության մեջ, տասնյակ հպարավոր ձեզ նման պատանիներ, երիտասարդներ նույնպիսի հանդիսությունների ներկա պիտի լինեն իրենց հաշվետվությունը տալու համար: Բերքահավաք պիտի լինի ամբողջ մեր Հայաստանի տարածքի վրա, և տասնյակ հպարավոր ձեզ նման վկայականներ կամ պարգևատրումներ պիտի ստանան: Ամեն մեկը տարբեր մասնագիտության է հետևել բնականաբար, ոմանք բժշկության, ուրիշներ իրավաբանության, լեզվաբանության, ինժեներության, արվեստների և այլն: Բայց մասնագիտությունները տարբեր լինելով հանդերձ, բոլորին միացնում է մի ընդհանուր ոգի, գաղափար՝ քաղաքացիական գիտակցությունը՝ հայ ժողովրդի կավակը լինելու, անբաժանելիորեն կապված նրա ճակատագրի հետ՝ ներկայիս և ապագային: Դուք էլ ձեր մասնագիտությամբ գիտելիքներ ստացաք՝ կրոնագիտական, որ նույնքան Մենք կարևոր ենք նկատում, ինչքան ուրիշ մասնագիտությունները: Բայց դուք էլ պետք է նույնքան կարևոր նկատեք ուրիշ մասնագիտությունները, ոչ թե միայն ձեր մասնագիտությունը: Ես հաճախ, երբ արտասահման եմ գտնվում՝ արտահայտել եմ այն միտքը, որ մեր Եկեղեցին անհայրենիք Եկեղեցի չէ: Նույնիսկ բացառություն լինելով աշխարհի բոլոր Եկեղեցիների մեջ, մեր Եկեղեցին Հայաստանի անունն է կրում: Առանց Հայաստանի՝ Հայաստանյայց Եկեղեցին կարելի չէ նույնիսկ ըմբռնել, և Մեր բոլոր արտահայտությունների մեջ Հայաստանի շունչը, գաղափարը առկա պետք է լինի:

Այո՛ մեր Եկեղեցին անհայրենիք Եկեղեցի չէ եղած ի սկզբանե, հատկապես Սուրբ Մեսրոպ Մաշտոցից այս կողմ: Կարելի չէ մեր Եկեղեցու մեծ իրագործումները հիշել կամ գնահատել առանց Հայրենի-

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ, ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԵՏ
(9 հունիսի 1986 թ.)

քի շահի հետ կապելու: Հնարավոր չէ այդ, որովհետև դարեր շարունակ մինչև մեր օրերը, մինչև մեր հանգուցյալ կաթողիկոսը, մինչև Գարեգին Հովսեփյանցը, Մեր բոլոր Մեծ Հայրապետների հոգու մեջ հավասար չափով ճառագայթել են Քրիստոսի Ավետարանը և հայոց պատմության գիրքը: Ես վստահ եմ, որ դուք այստեղ դաստիարակվում եք այս ոգով: Հավատարիմ պետք է մնաք այդ ավանդներին, այդ լույս գաղափարներին, որպեսզի լինեք արժանավոր ծառայողները Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու, և ուր էլ լինեք հետագայում՝ Հայաստանում, կամ սփյուռքի տարածքի վրա, ձեր սեպուհ պարտականությունը նկատեք ձեր հոգու և գիտակցության մեջ դրոշմելու Մայր Հայրենիքի շունչը, մեր վերածնված արդի Հայաստանի շահերի գիտակցությունը:

Ահա այս մի քանի մտորումներով և խոհերով, ես կրկին շնորհավորում եմ ձեզ բոլորիդ և մաղթում եմ բարի և հանգիստ արձակուրդ՝ սպասելով, որ առաջիկա տարի՝ սեպտեմբերին, հոգևոր ճեմարանի դռները վերստին բացվեն, և ես նորից լինեմ այստեղ իմ օրհնությունը ձեզի բաշխելու, ամեն»:

Ամավերջի հանդիսությունն ավարտվեց Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված «Հայր մեր»-ով:

* * *

1986 թ. հունիսի 11-ին, ամավերջի քննությունները հանձնելուց և հոգևոր ճեմարանի 1985—86 ուսումնական տարեշրջանի հանդիսավոր փակումից հետո, այս տարի ևս ճեմարանի ուսանողությունը մեկնեց չորսօրյա պտույտի՝ գլխավորությամբ ճեմարանի տեսուչ Տ. Եղնիկ քահանա Պետրոսյանի:

Դեռ նոր էր արևը բարձրացել Արարատյան դաշտի վրա, երբ ուսանողները ավտոմեքենաներով ուղևորվեցին Գուգարք: Ճանապարհը ձգվում էր փարթամ դաշտերով և ծաղկուն բնակավայրերով՝ ձյունապատ Արագածի հայացքի տակով:

Հեքիաթային մի երկիր է Գուգարաց աշխարհը, մի երկիր, ուր առաջին անգամ այդտեղ ոտք դնողի համար ամեն ինչ երապ է դրվում: Ամեն մի քար խոսում է պատմության լեզվով, ամեն մի ծառ շնչում դարերի շնչով: Մթին կիրճերում վազող փրփրաբաշ գետերի շուրթերից պոկված քամին հին-հին քաջերի ու խոլական հսկաների մասին ասքեր է պատմում: Թվում է, թե մի պահ ավերակ բերդի աշտարակից լսվում է բերդապահի կանչը, և դղրդյունով փակվում է դեպի Շահնշահ Զաքարյանի անհամար գանձերի թաքստոցը տանող մուտքի մամռապատ ժայռը: Պատմում են, թե ավարառու մոնղոլները, լսելով Զաքարյան իշխանի անհամար գանձերի մասին, բազմաթիվ անգամներ արշավել են Գուգարքի վրա, սակայն նրանց հաջողվել է այդ գանձերի միայն մի չնչին մասը հափշտակել: Եվ մինչև այսօր դրանք թաքնված են մնում կա՛մ Լոռվա բերդի գաղտնարաններում, կա՛մ մոտակա ժայռերի թաքստոցներում և կա՛մ էլ ահեղագոչ Միսխանա գետի առափնյա քարանձավների մեջ: Գուցե առասպել է սա, հին-հին դարերից եկած մի լրույց: Գուգարաց աշխարհում առասպելն ու ճշմարտությունն ապրում են կողք-կողքի:

Երբ դուրս եկանք դեռևս ձյունածածկ լեռների մեջ բացված երկար թունելից, մեր առջև տարածվեցին Ստեփանավանի գեղատեսիլ անտառները, ընդարձակ դաշտերն ու մշուշի մեջ կորած լեռները:

Ահա և քաղաքային կենսունակ կյանքով ապրող Ստեփանավանը՝ Հայաստանի այս հյուսիսային գեղեցիկ քաղաքը:

Ստեփանավանում ուսանողներին ընդունեց տեղի Ս. Սարգիս եկեղեցու վանահայր Տ. Եղիա քհն. Թավայանը: Տեր հայրը ուսանողներին ծանոթացրեց Ս. Սարգիս եկեղեցու պատմությանը:

Այնուհետև ուսանողները մասնակցեցին «Երեկոյան» ժամերգության:

Ստեփանավանի Ս. Սարգիս եկեղեցին կառուցված է ԺԱ դարում: Հետագա դարերում վերանորոգվել է մի քանի անգամ և այժմ գտնվում է բարգավաճ վիճակում:

Հաջորդ օրը ուսանողներն ուղևորվեցին Գուգարաց աշխարհի հռչակավոր Լոռվա բերդ: Բերդը գտնվում է Ստեփանավանից մոտավորապես 5 կիլոմետր հյուսիս-արևելք, Զորագետի ձախ ափին: Լոռվա բերդը կառուցվել է ԺԱ դ. սկզբներին Դավիթ Անհողինի կողմից, իսկ հետագայում, Կյուրիկե Ա-ի ժամանակ (1049—1089), հանդիսացել է Կյուրիկյան թագավորության մայրաքաղաքը: Շուրջ տասը հազար բնակչություն ունեցող բերդաքաղաքը պատմական Հայաստանի հյուսիսային մասի ամենախոշոր բարգավաճ քաղաքներից մեկն է եղել: Դավիթ Անհողինի կինը այդտեղ մի եկեղեցի է կառուցել տվել. այն հայ միջնադարյան ճարտարապետության հետաքրքրաշարժ կառույցներից մեկն է՝ ծածկի լիցքը թեթևացնելու նպատակով գմբեթի շաղախի մեջ տեղադրված կավանոթների պատճառով: Երկար ժամանակ ուսանողները հիանում էին բերդի ամրակուռ պարիսպներով ու աշտարակներով, Զորագետի ու Միսխանայի անդնդախոր կիրճերով, բերդի տարբեր շինություններից մնացած բեկորներով: Երեկոյան կը-

րույցներում նրանք ի մի էին բերում օրվա տպավորությունները, անդրադառնում հայ ժողովրդի դարավոր պատմությանն ու փառահեղ անցյալին:

Հաջորդ օրն ուսանողներն ուրախ երգ ու ծիծաղով ուղևորվեցին դեպի Շիրակի դաշտ՝ Մարմաշենի վանք: Վահրամաբերդ գյուղի մոտ, Ախուրյան գետի ձախ ափին, ոչ մեծ մի հարթության վրա, վեհորեն բարձած է Մարմաշենի վանքը՝ շրջապատված պըտղատու այգիներով: Մոտակա բլրակից նայելիս թվում է, թե գեղատեսիլ Անիից մնացած մի բեկոր է նա, անձեռակերտ մի գոհար, մարմնացած աղոթք ու սրբություն: Վանքի մոտով դանդաղորեն հոսում է Ախուրյանը, որ կարծես դարավոր վրույցի է բռնվել Մարմաշենի համալիրի գլխավոր՝ Կաթուղիկե եկեղեցու հետ, և նրանց ամեն մի խոսքը դարերի փորձն ունի, դարերի իմաստությունը: Մարմաշենի վանքը, համաձայն հարավային պատի արձանագրության, կառուցվել է 988—1029 թթ. Վահրամ Պահլավունու կողմից: Հետագայում այստեղ է ամփոփվել և հայրենասեր իշխանի մարմինը: Մարմաշենի վանքը, հատկապես Կաթուղիկե եկեղեցին, հայ ճարտարապետության Բագրատունիների ժամանակաշրջանի լավագույն հուշարձաններից է: Մարմաշենի վանքը բաղկացած է երկու հուշարձանախմբերից՝ Մեծ և Փոքր (Վերին): Առաջին խմբի մեջ մտնում են չորս եկեղեցիներ և Կաթուղիկե եկեղեցու գավիթը, ուր և գտնվում է Վահրամ Պահլավունու գերեզմանը: Ուսանողները նախ շարականներ են երգում ու աղոթում Կաթուղիկեի խնկաբույր կամարների ներքո, ապա, եկեղեցու ընդհանուր կառուցվածքին ծանոթանալուց ու պատերի արձանագրությունները կարդալուց հետո, ակնածանքով ու սիրով իամախմբվում են Վահրամ Պահլավունու գերեզմանի շուրջ, հայ ժողովրդի պատմության անցած դասերից վերհիշում քաջ իշխանի գործունեությանը նվիրված հատվածները:

Հաջորդ օրը ուսանողները անմոռանալի հիշողություններով և ուրախ տրամադրությամբ բռնում են տունդարձի ճանապարհը՝ կարճ դադար առնելով Քասախ գետի ափին՝ Զրամբար կոչվող վայրում:

ԹՂԹԱԿԻՑ



ՏՈՆ ԿԱԹՈՂԻԿԵ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ. ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔԻ ՊԱՀԻՆ

(Մայր տաճար, 1 հունիսի 1986 թ.)

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՀԽ-Ի «ՀԱՎԱՏՈ ԵՎ ԿԱՐԳԻ» ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՏՆՕՐԵՆ ԴՈԿՏ. ԳԱՍՄԱՆԻ (ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՑ ԶԱԽ), ՆՐԱ ՏԵՂԱԿԱԼ ԳԵՆՆԱԴԻՈՒ ՏԱՄՈՒԼԻՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵՎ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՄԻԱԲԱՆՆԵՐԻ ՀԵՏ

(16 հունիսի 1986 թ.)

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հունիսի 1-ին, կիրակի.—Տօն Կաթուղիկէ Ս. Էջմիածնի:

Այսօր Մայր տաճարում, օրվա մեծ տոնի առթիվ, Ավագ ս. սեղանի վրա հանդիսավոր ս. պատարագ մատուցեց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պոլատեանը և «Հայր մեր»-ից առաջ ոգեշունչ քարոզ խոսեց՝ «Եկայք շինեսցուք սուրբ վիճակն լուսոյ, քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի» (Շարական) բնաբանով:

Ս. պատարագի ընթացքում կատարվեց Մաղթանք Ս. Էջմիածնի:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հունիսի 4-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ աբեղա հայրերի և սարկավագների հավաքույթ:

Հունիսի 8-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Պսակ աբեղա Կարապետյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Խաղաղութիւն թողում ձեզ, զխաղաղութիւն զիմ տամ ձեզ. ոչ որպէս աշխարհս տայ, տամ ես ձեզ» (Հովհ. ԺԴ 27) բնաբանով:

Հունիսի 15-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Մաշտոց աբեղա Խաչիկյանը:

«Հայր մեր»-ից առաջ «Թագաւոր երկնաւոր զկեղեցի քո անշարժ պահեա. եւ զերկրպագուս անուանդ քում պահեա ի խաղաղութեան» (Շարական) բնաբանով ոգեշունչ քարոզ խոսեց Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Ներսես եպս. Պոլատյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը, ինչպես նաև ԵՀԽ-ի Կենտրոնից՝ «Հավատո և կարգի» հանձնաժողովի ղեկավար հայր դոկտ. Գասմանը և տեղակալ Գենադիոս Տամուլիս վարդապետը:

Հունիսի 19-ին, հինգշաբթի.—Սրբոց թարգմանչացն մերոց Սահակայ և Մեսրոպայ:

Այսօր Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, օրվա տոնի առթիվ, հանդիսավոր ս. պատարագ մատուցեց Տ. Եղրաս աբեղա Ներսիսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Որ երկոքումբք սուրբ լուսաւորչօք տանս Թորգոմայ՝ հաստատեցեր զեկեղեցիս Հայաստանեայց՝ զլոյս իմաստից ի մեզ ծագելով» (Շարական) բնաբանով:

Հունիսի 22-ին, կիրակի.—Գիւտ տփոյ Սրբուհւոյ Աստուածածնի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա տոնի առթիվ հանդիսավոր ս. պատարագ մատուցեց Տ. Պարգև աբեղա Մարտիրոսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Կին դու, ահա որդի քո» (Հովհ. ԺԹ 26) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հունիսի 25-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ աբեղա հայրերի հավաքույթ:

Հունիսի 29-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Զավեն աբեղա Խաչատրյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Թոյլ տուք մանկտւոյդ և մի արգելուք զդոսա գալ առ իս, զի այդպիսեացդ է արքայութիւն երկնից» (Մատթ. ԺԹ 13) բնաբանով:

ՖՐԱՆՍԻԱՑԻ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԻ ԱՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ

Սույն թվականի մայիսի 8-ին, Քրիստոսի Համբարձման տոնի օրը, Մայր Աթոռ այցելեց Ֆրանսիացի ուխտավորների մի մեծ խումբ՝ առաջնորդությամբ Փարիզում Կրոնական տեղեկատվության և փաստագրության կենտրոնի աշխատակից հայր Ժակ Ֆուռնիեի: Խումբը, որ բաղկացած էր Ֆրանսիայի տարբեր քաղաքներում բնակվող Հռոմեական կաթոլիկ Եկեղեցու հավատացյալներից, նպատակ ուներ քրիստոնեական տարբեր Եկեղեցիների կենտրոններ այցելելու միջոցով գործնական մասնակցություն բերել էկումենիկ շարժմանը և նպաստել միջեկեղեցական հարաբերությունների զարգացմանը:

Առավոտյան ժամը 10-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Առաջին Ամենայն Հայոց կաթողիկոսը Վեհարանում ընդունեց հյուրերին և բարի գալուստ մաղթեց նրանց ի Սուրբ Էջմիածին:

Ուխտավորների անունից ողջույնի խոսք ասաց հայր Ժակ Ֆուռնիեն՝ նշելով, որ իրենց սույն ուղևորության նպատակն է մոտիկից ծանոթանալ Հայ Եկեղեցու և քրիստոնյա հայ ժողովրդի ներկա կյանքին: Ապա, անդրադառնալով Ֆրանսիայի հայոց թեմի և ֆրանսիական կաթոլիկ Եկեղեցու հարաբերություններին, ավելացրեց. «Բարեկամական այն սերտ կապերը, որ պահպանում է Փարիզի ձեր հոգևոր առաջնորդը իմ Եկեղեցու հետ, կարևոր տարրեր են մեր երկու Եկեղեցիների առավել մերձեցման: Էկումենիկ փոխանակությունների ոլորտում նրա ներկայությունը Փարիզում դառնում է հետզհետե ավելի օգտակար և վճռական: Բոլոր նրանք, ովքեր Ֆրանսիայում աշխատում են Եկեղեցիների միջև եղբայրական կապերի ամրացման ի նպաստ, ջերմորեն ցանկանում են, որ ձեր Եկեղեցին առավել ճանաչվի Ֆրանսիայում, որպեսզի եկեղեցական միության իրականացումը պայմանավորված չլինի միայն մի քանի աստվածաբանների գործունեությամբ, այլ՝ ամբողջ քրիստոնյա ժողովրդի: Այս է Սուրբ Էջմիածին մեր այցելության նպատակը: Մենք գիտենք, որ Հայ Եկեղեցին անցել է ծանր տառապանքների բովից՝ կրելով միշտ Տիրոջ Խաչը, բայց մենք գիտենք նաև, որ նրա տառապանքները եղել են ու մնում են Քրիստոսի պատգամներին նրա հավատարմության աղբյուրը: Այս հանդիպումից հետո մենք ցանկանում ենք առավել միանալ միմյանց, քանի որ Սրբերի Հաղորդությունից օգտվում է նաև ամբողջ Եկեղեցին»:

Իր խոսքի վերջում հայր Ֆուռնիեն ամբողջ խմբի անունից երախտագիտություն հայտնեց Նորին Սրբության ընդունելության համար՝ հայցելով նրա օրհնությունները:

Պատասխան խոսքում Հայոց Հայրապետը համառոտակի ծանոթացրեց հյուրերին Հայ Եկեղեցու անցած պատմական ուղու կարևոր հանգրվանները, որոշ տեղեկություններ հաղորդեց նաև նրա այսօրվա կյանքի և

գործունեության վերաբերյալ և իր խոսքն ամփոփեց՝ նշելով, որ ներկա դարաշրջանում Եկեղեցիների մերձեցումն ու նրանց եղբայրական գործակցությունը կարևոր անկյունադարձ է քրիստոնեական Եկեղեցիների պատմության մեջ, և որ էկումենիկ շարժումն այդ տեսակետից նշանակալի առաքելություն ունի կատարելիք ոչ միայն եկեղեցական շրջանակներում, այլև դրանցից դուրս՝ ժողովուրդների բարեկամության և աշխարհի խաղաղության պահպանման գործում:

Ընդունելության ավարտին փոխանակվեցին հուշանվերներ:

Ակնուհետև ֆրանսիացի ուխտավորներն առաջնորդվեցին Մայր տաճար՝ ներկա լինելու Համբարձման տոնի առթիվ Ավագ խորանի առաջ մատուցվող սուրբ պատարագին: Նրանք խոր հավատով ու երկյուղածությամբ հետևեցին հայոց պատարագի արարողությանը և պատարագիչ հոր ձեռքից ստացան սուրբ հաղորդություն:

Հավարտ պատարագի Մայր Աթոռի հյուրերը մեծ հետաքրքրությամբ ծանոթացան մայրավանքի շրջափակում գտնվող հուշարձաններին: Նրանք այցելեցին Ալեք և Մարի Մանուկյան Գանձատուն, Մայր տաճարին կից եկեղեցական արվեստի թանգարան, Հին և Նոր Վեհարանների ցուցասրահներ և իրենց անկեղծ հիացմունքն արտահայտեցին հայ ժողովրդի ստեղծագործ տաղանդի նկատմամբ, «ժողովուրդ, որ կարողացել է սրբությամբ պահպանել իր եկեղեցական և ազգային դարավոր ավանդները՝ ժամանակի փոթորիկների միջից դրանք բերել-հանձնելու համար նոր սերունդներին»:

Նույն օրը, հետմիջօրեին, ֆրանսիացի ուխտավորները հոգեպես մխիթարված, գոհունակ սրտով և շնորհակալ զգացումներով հրաժեշտ տվեցին Հայոց Հայրապետին և մեկնեցին Սուրբ Էջմիածնից:



Академия наук Армянской ССР
Фундаментальная библиотека

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻ ԿԱՊԵՐ

Սույն թվականի ապրիլի 10—24 օրերին, ԱՄՆ-ի «Քրիստոնեական Եկեղեցիների Ազգային Խորհրդի» (ՔԵԱԽ) հրավերով, Միացյալ Նահանգներ ուղևորվեցին Սովետական Միության Եկեղեցիների ներկայացուցիչները: Պատվիրակության կազմի մեջ էր նաև Նոր-Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդական տեղապահ հոգեշնորհ Տիրան վրդ. Կյուրեղյանը:

Ապրիլի 10-ին պատվիրակության անդամները ժամանեցին Չիկագո: Սովետական Միության Եկեղեցիների ներկայացուցիչները էկումենիկ հանդիպումներ ունեցան տեղի կանանց եկեղեցական և աշխարհիկ կազմակերպությունների հետ:

Ապրիլի 13-ին պատվիրակության անդամները խմբերի բաժանված ներկա եղան տեղի Եկեղեցիներում մատուցված ս. պատարագների արարողություններին: Հաջորդ օրերին Էվնսթն քաղաքում տեղի ունեցան հանդիպումներ ՔԵԱԽ-ի և Սովետական Միության Եկեղեցիների ներկայացուցիչների միջև: Երկուստեք զեկուցումներ կարդացվեցին, որոնց նյութն էր՝ Եկեղեցու ունեցած ներդրումը իրենց ժողովուրդների մշակույթի և պատմության՝ անցյալի և ներկայի մեջ: Հանդիպումներից մեկում զեկուցումով հանդես եկավ նաև հոգեշնորհ Տիրան վրդ. Կյուրեղյանը և ընդգծեց Հայ Եկեղեցու մեծագույն և բազմակողմանի նպաստը հայ մշակույթի նվաճումներին: Զեկուցումներից հետո տեղի էին ունենում կարծիքների աշխույժ փոխանակություններ:

Ապրիլի 17—22 օրերին պատվիրակության անդամները բաժանվեցին վեց փոքր խմբերի և մեկնեցին նահանգներ՝ տարբեր քաղաքների եկեղեցական հարանվանությունների հետ հանդիպումներ ունենալու:

Հոգեշնորհ Տիրան վրդ. Կյուրեղյանն ու Ռուս Ուղղափառ Եկեղեցու երկու ներկայացուցիչներ եղան Միչիգանի նահանգի վեց քաղաքներում և էկումենիկ հանդիպումներ ունեցան տեղի եկեղեցական կազմակերպությունների ներկայացուցիչների և մամուլի աշխատողների հետ:

Ապրիլի 22-ին պատվիրակության անդամները հավաքվեցին Նյու Յորքում, որտեղ կազմակերպվեց հանդիպում ՔԵԱԽ-ի գլխավոր քարտուղար Հարրի Բրաուերի և Սովետական Միության Եկեղեցիների ներկայացուցիչների միջև:

Ապրիլի 24-ին, առավոտյան, պատվիրակության անդամները մեկնեցին Մոսկվա:

*
* *

Սույն թվականի հունիսի 18-ին փոխադարձ էկումենիկ այցով Սովետական Միության քաղաքամայր Մոսկվա ժամանեց ԱՄՆ-ի ՔԵԱԽ-ի կողմից՝ 138 հոգուց բաղկացած մի պատվիրակություն՝ ղեկավարությամբ Մարտին Բեյլի:

Պատվիրակության անդամները բաժանվելով խմբերի ուղևորվեցին Միության տարբեր քաղաքներ՝ ծանոթանալու եկեղեցական հարանվանությունների եկեղեցական և ազգային կյանքին: Խմբերից երկուսը եղան Սովետական Հայաստանում:

Առաջին խումբը (22 հոգի)՝ ղեկավարությամբ Կառլոս Հարվրդի և Բոբ Փրայսի, հունիսի 23-ին ժամանեցին Երևան: Նրանք ծանոթացան քաղաքի տեսարժան վայրերին, այցելեցին մշակութային կենտրոններ, երեկոյան ներկա եղան Պարի Պետական համույթի համերգին:

Հաջորդ օրը հարգելի հյուրերը այցելեցին Զվարթնոց, Ս. Հռիփսիմե վանք, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, որտեղ ծանոթացան եկեղեցական առօրյային:

Նույն օրը, Վեհարանում, խմբի անդամներին ընդունեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը: Վեհափառ Հայրապետը խմբի

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԱՄՆ-Ի «ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ» ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՏ ՎԵՀԱՐԱՆԻ ԱՌՋԵՎ
(26 հունիսի 1986 թ.)

անդամներին ընդարձակ տեղեկություններ տվեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու դարավոր գործունեության մասին:

Հետ միջօրեին հյուրընկալվողները ուղևորվեցին Գառնի, Ս. Գեղարդա վանք, որտեղ վանահայր Տ. Եղիշե քհն. Սարգսյանը հյուրասիրություն կազմակերպեց ի պատիվ հարգարժան հյուրերի:

Հունիսի 25-ին ամերիկացի հյուրերը հյուրընկալ Սովետական Հայաստանից մեկնեցին եղբայրական Վրաստանի քաղաքամայր Թբիլիսի:

*
* *

Նույն օրը Թբիլիսիից Երևան ժամանեց ՔԵԱԽ-ի պատվիրակության երկրորդ խումբը (23 հոգի)՝ գլխավորությամբ Ժերար Վամոսի և Դոն Նիդլի:

Հյուրերը ծանոթանալով Հայաստանի քաղաքամայր Երևանի կարևոր պատմամշակութային օջախներին՝ ուղևորվեցին Էջմիածին. այցելեցին վանքերը և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարանները:

Նույն օրը, Վեհարանում, հյուրերին ընդունեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը: Հարցապրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետը հյուրերին ծանոթացրեց Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի անցած դրժվարին և հերոսական պատմական ճանապարհին, անդրադարձավ արդի ժամանակներում Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու միջեկեղեցական հարաբերություններում ունեցած կարևոր դերին և նշանակությանը:

Հունիսի 27-ին հյուրերը «Զվարթնոց» օդանավակայանից ջերմ և անմոռանալի տպավորություններով մեկնեցին Լենինգրադ:

Հայաստան այցելած ԱՄՆ-ի ՔԵԱԽ-ի պատվիրակության անդամներին ուղեկցում էր Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդական տեղապահ հոգեշնորհ Տիրան վրդ. Կյուրեղյանը:

*
* *

Սույն թվականի մարտի 28-ին, Մոսկվայի Դանիլովի վանքում, տեղի ունեցավ հանդիսավոր նիստ՝ նվիրված Ռուս Եկեղեցու Պատրիարքության «Արտաքին Եկեղեցական Հարաբերությունների Բաժնի» (ԱԵՀԲ) հիմնադրմանը:

Հանդիսության գլխավոր բանախոսն էր ԱԵՀԲ-ի պատասխանատու քարտուղար Ա. Ս. Բուևսկին: Հարգելի վեկուցողը իր խոսքի մեջ անդրադարձավ նաև Հայ Եկեղեցու՝ միջեկեղեցական հարաբերություններում ցուցաբերած կարևոր մասնակցության՝ խաղաղության ամրապնդման և ժողովուրդների բարեկամության ի նպաստ, որպես ապացույց մատնանշեց երջանկահիշատակ Գեվորգ Զ կաթողիկոսի և Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի հայրենասիրական նախաձեռնությունները՝ խաղաղությանը նպաստող միջեկեղեցական ժողովներ գումարելու գործում:

Ապա ողջույնի ելույթներ ունեցան վանական եկեղեցական հարանվանությունների ներկայացուցիչներ:

Հանուն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու վեկուցումով հանդես եկավ Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Տիրան վրդ. Կյուրեղյանը:

Եկրափակիչ խոսքով ելույթ ունեցավ ԱԵՀԲ-ի նախագահ, Մինսկի և Բելոռուսիայի միտրոպոլիտ Ֆիլարետը: Ելույթի ընթացքում միտրոպոլիտ Ֆիլարետը անդրադարձավ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու միջեկեղեցական հարաբերություններում ունեցած մեծ ներդրումին, ընթերցեց Վեհափառ Հայրապետի շնորհավորական հեռագիրը հանդիսության մասնակիցներին:

*
* *

Սույն թվականի հունիսի 14—17 օրերին, Էստոնիայում, տեղի ունեցավ «Եվրոպական Եկեղեցիների Համաժողովի» (ԵԵՀ) անդամների IX գլխավոր նիստի պատգամավորների խորհրդակցություն՝ Պուխտիցայի Ուսպենսկի կուսանոցում:

Նիստը գլխավորում էր ԵԵՀ-ի պրեզիդենտ, Տալինի և Էստոնիայի միտրոպոլիտ Այեքսին: Նիստին ներկա էր նաև ԵԵՀ-ի գլխավոր քարտուղար դոկ. Գ. Ուիլյամսը:

Միջոցառմանը հանուն Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու իր մասնակցությունը բերեց՝ Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդական տեղապահ՝ հոգեշնորհ Տիրան վրդ. Կյուրեղյանը:

ԹՂԹԱԿԻՑ

ՏԵՍԻԼՔ ՀԱՎԵՐԺԱԿԱՆ*

Ամեն գիշեր, ուշ ժամերին, երբ ննջում էր աշխարհն համայն,
Նա ծնրադիր ու մտածկոտ Վաղարշապատ քաղաքից դուրս,
Հնձանի մոտ կամ ջրհորի, աղոթում էր պաղատագին,
Հիշում կույսերն անմեղ, անբիծ, հավատի վոհ սուրբ Հռիփսիմյանք.
Անմահ Բանին մատակարար լուսավորիչ կույգ Առաքյալք:
Լոկ աղոթք չէր և կամ խնդրանք նրա խոսքը հոգուց բխած,
Չէր երախտիք նրա համար, որ ինք փրկվեց Խոր Վիրապից,
Դա ծարավն էր, տոչորումը իր Տիրոջ հետ հաղորդության,
Որ բերում էր նրան այդտեղ ամեն գիշեր այդ ուշ ժամին:

Եվ մի գիշեր, երբ խավարն էր պատել չորսդին, աստղերն երկնի
Տարօրինակ մի ճաճանչով փայլում էին պսպղագին,
Երբ ամեն կապ հաղորդության կտրվել էր երկրի վրա
Եվ աղոթքով երանական նա տարվել էր ու վերացել,
Հանկարծ զգաց, որ ինք մասն է զվարթնոց դասին և ոչ մարդկանց:

---

* «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը հրատարակելով «Տեսիլք Հավերժական» բանաստեղծությունը՝ շնորհավորում է հեղինակին՝ Ներսես եպիսկոպոս Պողպատյանին, իր քահանայական ձեռնադրության 25-ամյակի առթիվ: Մաղթում ենք, որ սրբազան հայրը հավերժականի տեսիլքով շարունակի իր ծառայությունը ի սպաս Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և հայ ժողովրդի:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ճիշտ այդ պահին, բաց երկնքում աստղերն ամեն խմբվեցին,
Լույսն հավաքվեց և դարձավ ծով լուսաճաճանչ մի լուսարձակ
Երկնից երկիր դեպ արձակված, նույն այդ պահին երկնի հրեշտակք
Համանվագ ու քաղցրալուր երգն երգեցին, բյուր օրհնություն
Բերին աշխարհ, նիրհող մարդկանց՝ մեծին, փոքրին ու բոլորին:
Լույսն առավել պայծառացավ, կարծես բացվեց մի պատուհան
Երկնի վրա լուսապայծառ, և այդ լույսի հեղեղի հետ
Իջավ աշխարհն Այրարատյան Աստվածորդին ոսկեպսակ,
Աստվածորդին այն փառահեղ, պերճ զգեստով՝ ոսկի, արծաթ,
Բեհեկներով ակնվական, հպար ակամբ՝ կմրուխտ, հակինթ:
Իջավ աշխարհն Այրարատյան ու իր ձեռքի ոսկի ուռամբ
Բախեց գլխին ժանտ վիշապի, Սանդարամետը դղրդաց
Եվ աստվածներն հին կրոնի ու մպդեպի վառ ատրուշանք
Դարձան մոխիր ու ավերակ, դարձան անցյալ ու հիշատակ;

Խոսեց Արքան տիեզերքի՝ Լուսավորչին Հայաստանի,
«Վայրն այս սուրբ է իմ իսկ իշմամբ և հաճությամբ, կառուցիր տուն
Դու պաշտաման՝ վերածնված փոքու հոտին քո Հայկազյան»:
Նույն այդ պահին, բաց երկնքում ուրվագծվեց լույս շողերով
Նախատիպը Մայր տաճարի, աչքին առջև Տեսանողի:
Հավատի հայր Լուսավորիչն զգլխանքից երանական
Երբ սթափվեց, երեք անգամ խաչակնքեց ու ծնրադրեց,
Որ Տերն իրեն արժանացրեց կենդանության հաղորդվել
Աստվածային սուրբ խորհրդին, հավերժական այս տեսիլքին:

Պալատն ամբողջ քնել էր խոր, մեծ տեսիլքին նա անհաղորդ,
Ննջել էին պահակները տոթ գիշերվա մեղկ թմբիրով:
Ոչ ոք եղավ ականատես, ոչ ոք եղավ ունկամբ վկա
Մեծ տեսիլքին այս աննման, բացի մեկից՝ Լուսավորչից:
Պալատ մտավ Լուսավորիչն առավոտյան վաղ քան արփին,
Փոխվել էր նա, պայծառացել, նոր ավյունով գեղեցկացել,
Հայոց արքա Արշակունի Մեծ Տրդատին նկարագրեց
Տեսիլն ահեղ և փառավոր, նախորդ գիշեր իրեն շնորհված:
Ծունկի իջան հայոց արքան, արքայազունք պալատական,
Եվ ուխտեցին փութանակի, ժողովրդով միասնական,
Կերտել տաճար մի սրբական, ի հիշատակ Աստվածածնին
Սրբուհի մորն Աստվածպարգև Տյառն Հիսուսի՝ «Էջմիածին»:

Այն օրվանից մինչև այսօր, հպար և յոթ հարյուր տարի,
Ժամանակը սլանում է առանց կանգառ ու դադարի.
Կառուցվում է տաճարն այս հին ժամանակի ավերներից,
Վերակերտվում տաճարն այս հին մեր թշնամյաց ավերներից:
Կառուցվում է հավերժական տաճարն հայոց ամբողջ ազգի,
Ձեռամբ մեն մի գահակալի Լուսավորչյան Սուրբ Աթոռի:

Եվ տե՛ս, որդի հայկյան կարմի, դու՝ ժառանգորդ թանկ ավանդի,
Սուրբ Գրիգորն ու մեր նախնիք կառուցեցին տաճարն այս սեգ,
Նա չեղավ լոկ ամրախարիսխ ու նյութեղեն մի կերտըվածք,
Նա եղավ այուն, ոգու տաճար, մի նոր կ՚անքի կանչող տապան:
Դու ծնվեցիր նրա ծոցում, դարձար որդին վերածնված
Նոր Սիովնի, դարձար վկան քո հավատի, պայծառացար,
Ժանտ թշնամու սրի դիմաց կուրծքդ դրիր, չվախեցար:
Քանի անգամ փառքով մեռար ու թաղվեցիր, բայց միշտ հարյար,
Դարե ի դար ուխտի եկար, քո հայրենյաց փառքով սնար,
Եվ ուխտեցիր փառքն հայրենյաց պահել բարձր, սուրբ ու անբիծ,
Եվ փոխանցել այն անաղարտ սերունդներին մեր հայրենյաց:

ՆԵՐՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ

4 փետրվար 1986 թ.



ԵԶՆԻԿ ՔՀՆ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԸ ՀՈՒՆՎԱՐԻ 6-ԻՆ ՏՈՆԵԼՈՒ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ

Հնուց ի վեր Հայ Եկեղեցին Քրիստոսի Ծննդյան տոնը տոնել է հունվարի 6-ին, Քրիստոսի Մկրտության տոնի հետ միասին, մինչ մյուս Եկեղեցիները Քրիստոսի Ծնունդը տոնում են դեկտեմբերի 25-ին, իսկ Մկրտությունը՝ հունվարի 6-ին:

Դեռ վաղ միջնադարից սկսած այս տարբերությունը տեղիք է տվել բազմաթիվ վիճաբանությունների՝ հայ և օտար (հույն, վրացի, ասորի և այլն) Եկեղեցիների աստվածաբանների միջև: Օտար աստվածաբանները մեղադրել են Հայ Եկեղեցուն Քրիստոսի Ծնունդը հունվարի 6-ին տոնելու հարցում: Այս մեղադրանքն է պարունակում, օրինակ, Կեղծ-Սահակ կաթողիկոսի՝ հայերի դեմ ուղղված մեղադրական գրության 10-րդ ենթավերնագիրը[1]: Իսկ հունարենով պահպանված մի անանուն գրության մեջ ասված է. «Հայերը հունվարի հինգին, առավոտյան, տոնում են Ավետումը, նույն օրվա երեկոյան՝ Քրիստոսի Ծնունդը, իսկ նույն ամսվա վեցին՝ Մկրտությունը[2], իբրև անաստված Մանիի նման խոստովանողներ, թե Քրիստոս մարդացել է երևութապես և ոչ թե ճշմարտապես»[3]: Այս վկայությունից բացահայտ երևում է, որ Քրիստոսի Ծնունդը հունվարի 6-ին՝ Մկրտության տոնի հետ միասին տոնելու Հայ Եկեղեցու սովորությունը, ըստ հույն անանուն հեղինակի, կապված է Հայ Եկեղեցու, իբրև թե, երևութական (ծայրահեղ միաբնակություն) վարդապետության հետ[4]: Սույն կարծիքը իր արձագանքն է գտել նաև 12-րդ դարում վրաց եկեղեցական շրջանակներում ստեղծված Կեղծ-Հովհան Դամասկացու «Պատասխանիք առ Հայս» ծավալուն գրության մեջ[5], ուր ասված

[1] Ἰσαάκ, Λόγος στηλιτευτικὸς Περὶ τῶν Κακοδόξων Ἀρμενίων καὶ αἱρετικῶν, PG 132, 1228.

[2] Հույների մոտ տարածված այդ սխալ կարծիքը, իբրև թե հայերը միաժամանակ 3 տոն են տոնում, իր արտահայտությունն է գտել նաև 12-րդ դարում հույն պոստոստոատոռ Ալեքսի՝ Ս. Ներսես Շնորհալուն հանձնած գրության մեջ: Տե՛ս Ընդհանրական թուղթք Սրբոյն Ներսիսի Շնորհալոյ, Յերուսաղէմ, 1871, էջ 94:

[3] Սույն հատվածի հունարենը տպված է И. Троицкий, Изложение веры церкви Армянской, С.-Петербург 1875, էջ 201, ծանոթ. 2, արտատպված հետևյալ գրքից՝ Coteleriі, Monumenta, t. III, p 506.

[4] Տեղը չէ այստեղ անդրադառնալ այն հարցին, թե Հայ Եկեղեցու քրիստոսաբանությունը տուրք տալի՞ս է երևութական վարդապետությանը: Այս կարևոր հարցին կանդրադառնանք մի այլ առիթով:

[5] Երկի սկզբում դրված են շուրջ 30 համառոտ մեղադրանքներ, որոնց հաջորդում են հակաճառական հոդվածներ՝ համառոտ մեղադրանքների հիման վրա: Ըստ Զ. Ն. Ալեքսիձեի, համառոտ մեղադրանքները նույնությամբ առկա են նաև Արսեն Վաչեսցու «Դոգմատիկոն» (վրացերեն) երկում: Համառոտ մեղադրանքների հայերեն և վրացերեն տեքստերի քննությունը Զ. Ն. Ալեքսիձեին բերել է այն համոզման, որ հայերենը թարգմանություն է վրացերենից, իսկ վրացերենը իր հերթին թարգմանություն է հունարենից: Թեև հարգարժան գիտնականին չի հաջողվել

է հետևյալը. «Վասն զի կաւետիս Կուսին ոչ ընդունին եւ ոչ կմարմնաւոր ծնունդ Տեառն ընդունին եւ ոչ տօնեն, բայց միայն ի Զն Յունվարի, երեկոյենան աւուրս, գիշերն ծնունդն եւ յայգուն մկրտութեան ասեն տօնել: Որպէս եւ կմարդկային բնութիւնս են կկամս եւ ներգործութիւն ընդ աստուածային մի եւ խառնեալ ասեն, նոյնպէս եւ կերիս կայս խառնակեն եւ ուրանան ոչ գոլ, կամ առաչօք իբրեւ ընդ խողովակ անցեալ կամ կմկրտութիւն միայն ասեն, որ ձայն Հօր եւ Հոգւոյն երեւեցան. եւ շնորհօք որդի Աստուծոյ լեալ ասեն»[6]:

Սույն տեսությունը, մինչև վերջերս, պաշտպանվել է Օրթոդոքս որոշ աստվածաբանների կողմից[7]: Այսպես, օրինակ, Խիոսի միտրոպոլիտ Գրիգորիսի «Հայերի՝ Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների հետ միության մասին» աշխատության ռուսերեն հրատարակության մեջ գրված է. «6-րդ դ. թե՛ Արևելյան և թե՛ Արևմտյան Եկեղեցիները հաստատուն և միակամ ընդունեցին Քրիստոսի Ծննդյան տոնը կատարել դեկտեմբերի 25-ին: Սակայն Հայ Եկեղեցին, կարճ ժամանակից հետո, ընդհանրական Եկեղեցուց անջատված ասորի մոնոֆիզիտների (միաբնակ) ազդեցությամբ, փոխադրեց այն դեկտեմբերի 25-ից հունվարի 6-ը»[8]:

Ս. Ներսես Շնորհալու օրոք տեղի ունեցած հայ-հույն եկեղեցական հարաբերությունների ժամանակ, երկու Եկեղեցիների միության համար Կիր Էմանուել կայսրի կողմից առաջադրված պահանջներից 4-րդը վերաբերում էր տոներին, ուր Հայ Եկեղեցուց պահանջվում էր Քրիստոսի Ծնունդը տոնել դեկտեմբերի 25-ին[9]: Այս խնդիրը իր հերթին դարձել է Ս. Ներսես Շնորհալու և Հույն Եկեղեցու ներկայացուցիչ Թեորիանոսի միջև ծավալված երկխոսությունների չորս կարևոր հարցերից մեկը[10]:

Քրիստոսի Ծնունդը հունվարի 6-ին տոնելու Հայ Եկեղեցու սովորության դեմ Օրթոդոքս աստվածաբանների հակադրության մասին տեղեկանում ենք նաև Հայ Եկեղեցու բազմաթիվ վարդապետների, այդ թվում Անանիա Շիրակացու, Պողոս Տարոնացու, Մովսես Երզնկացու և այլոց գործերից, որոնց մենք կանդրադառնանք ստորև:

Բնական է, որ նման պայմաններում, երբ Հայ Եկեղեցին մեղադրվել է օտարների կողմից, Հայ Եկեղեցու վարդապետները ձեռնարկեին մեր Եկեղեցու սովորության ջատագովությունը: Եվ իրապես, վերոհիշյալ խնդրի շուրջ ստեղծվել է պատկառելի գրականություն:

Նախքան այդ գրականության վերլուծությանն անցնելը, սակայն, անհրաժեշտ է նախ ճշտել Քրիստոսի Ծննդյան (և Մկրտության) տոնի պատմությունը ընդհանրական Եկեղեցու կյանքում, մինչև Ե—Զ դարերը: Ճշգրիտ հայտնի չէ, թե երբ է հաստատվել Քրիստոսի Ծննդյան տոնը: Հայտնի է միայն, որ Գ դարի վերջերից արդեն հունվարի 6-ին տոնվում էր «Հայտնություն», (Ἐπιφάνια), կամ «Աստվածահայտնություն» (Θεοφάνια) տոնը, որը իր մեջ ընդգրկում էր Քրիստոսի Ծննդյան և Մկրտության հիշատակները[11]: Քրիստոսի մարդացումով Աստված հայտնվում է մարդկանց: Քրիստոսի մկրտության ժամանակ Հայր

գտնել հունարեն բնագիրը, սակայն նա ենթադրում է, որ այն ստեղծված պետք է լինի 8-րդ դարում: (**З. Н. Алексидзе**, Антимонофизитский трактат из „Догматикона" Арсения Вачесдзе и его отклик в древнеармянской литература *(վրացերեն)*, *տպված՝* „Мравалтави" Историко-филологические Разискания № 1 (1971), Тбилиси, стр. 133—158: Սույն հոդվածի բովանդակությանը մեզ ծանոթացրել է վրացագետ Պ. Չորբանյանը, որին և հայտնում ենք շնորհակալություն):

Ըստ Գ. Գարիտի, սակայն, համառոտ մեղադրանքների աղբյուրը Կեղծ-Սահակ կաթողիկոսի՝ հայերի դեմ ուղղված մեղադրական գրությունն է (G. Garitte, La source grecque des „trente articles" géorgiens contre les Arméniens, *«Հանդէս Ամսօրեայ» 1976, 111—116)*.

[6] «Լույս» 1905, էջ 1112—1113 (համառոտ մեղադրանքից): Տե՛ս նաև ընդարձակ մեղադրանքը՝ «Լույս» 1906, էջ 957—960, 1075—1079:

[7] Այս տեսության դեմ է խոսել Ի. Տրոիցկին, անդ, էջ 201—203:

[8] О мерах и достижения единения Армянской и Православно-Католической церкви. С.-Пб. 1868, стр. 101:

Այստեղ պետք է նշել, որ նույն գրքի հունարեն հրատարակության մեջ չկան «ընդհանրական Եկեղեցուց անջատված ասորի միաբնակների ազդեցությամբ» բառերը: Տե՛ս Γρηγορίου μητροπολίτου Χίου τοῦ Βυζαντίου, Περὶ ἑνώσεως τῶν Ἀρμενίων μετὰ τῆς Ἀνατολικῆς Ὀρθοδόξου Ἐκκλησίας, ἐν Κ/πολει 1871, *էջ 88*.

[9] Ընդհանրական թուղթք ... էջ 156:

[10] PG 133, 181—185:

[11] Այս մասին հանգամանորեն տե՛ս Β. Ἰω. Φειδᾶ Ἐκκλησιαστικὴ Ἱστορία, Ι/α, Ἀθῆναι 1978, σ. 190; Β. Κ. Στεφανίδου, Ἐκκλησιαστικὴ Ἱστορία, Ἀθῆναι, 1970, σ. 313—314; Ι. Ε. Ἀναστασίου, Ἐκκλησιαστικὴ Ἱστορία, Α', Θεσσαλονικὴ 1979, σ. 211, 520—521; Ἀ. Παπαδόπουλος, Ἀγιολογία, Θεσσαλονικὴ 1985, σ. 86—87: The Oxford Dictionary of the christian Church, Ed. by F; L; Gross and E;A; Livingstone, Oxford 1974, p. 280—281 *և այլն։*

Աստված վկայում է «Դա է Որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ» (Մատթ. Գ 17, հմմտ. Մարկ. Ա 11, Ղուկ. Գ 22), և Ս. Հոգին աղավնակերպ իջնում է Քրիստոսի վրա, այդպիսով տեղի է ունենում երկրորդ Աստվածահայտնությունը: Ահա և Քրիստոսի թե՛ Ծննդյան և թե՛ Մկրտության միջոցով հաստատված Աստվածահայտնություններն էլ պատճառ են դարձել, որպեսզի այդ երկու հիշատակները նախնական Եկեղեցում տոնվեն միասին, հունվարի 6-ին «Հայտնություն», կամ «Աստվածահայտնություն» ընդհանուր անվան տակ: Տոնակատարությունը սկսվում էր հունվարի 5-ի երեկոյան և շարունակվում կեսգիշերից հետո: Տոնը կոչվել է նաև «Լույսերի տոն» (Τῶν φώτων ἡμέρα)[12], որովհետև տաճարներում, քրիստոնյաների ձեռքերին բազմաթիվ լույսեր (լամպեր) կային: Երեկոյան կատարվում էր ջրի սրբագործումը, որի մեջ ողջ գիշեր մկրտվում էին նախորդ տարվա ընթացքում քրիստոնեական վարդապետությամբ սնված երախաները: Ինչպես երևում է Գրիգոր Աստվածաբանի Մկրտության ճառից, հիմնական տոնակատարությունը կատարվում էր հունվարի 6-ին[13]:

Ի տարբերություն այս ամենի, Հռոմում, 336 թ. սկսած, Քրիստոսի Ծննդյան տոնը կատարվում էր առանձին, դեկտեմբերի 25-ին: Այդ մասին մենք տեղեկանում ենք 354 թ. գրված Հռոմեական Եկեղեցու օրացույցից, որ կոչվում է Ֆիլոկալյան օրացույց[14]: Ըստ այդ օրացույցի, տարվա սկիզբը դրված է դեկտեմբերի 25-ին: Այդ օրը հեթանոսները տոնում էին Անպարտելի Արևի ծնդյան տոնը (Natalis Solis Invicti)՝ այսինքն լույսի հաղթանակը խավարի նկատմամբ, ցերեկի երկարումը գիշերվա նկատմամբ: Հեթանոսական այս տոնին Հռոմի քրիստոնյաները հակադրեցին Ճշմարիտ Լույսի, Արդարության Արևի՝ Քրիստոսի Ծննդյան տոնը: Քրիստոսի Ծնունդը դեկտեմբերի 25-ին տոնելու Հռոմի Եկեղեցու նախաձեռնությունը նախ տարածվեց Արևմուտքում, իսկ ապա անցավ Արևելք: Այսպես, Հովհան Ոսկեբերանը 386 թ. արտասանած իր Մկրտության ճառում[15] հայտնում է, որ 10 տարի է, ինչ Անտիոքում (անշուշտ ո՛չ բոլոր եկեղեցիներում) Քրիստոսի Ծննդյան տոնը կատարվել է դեկտեմբերի 25-ին: 379 /81 թթ. Գրիգոր Աստվածաբանի Կ. Պոլսում խոսած առանձին ճառերը Քրիստոսի Ծնընդյան[16] և Մկրտության[17] տոների առթիվ, կարող են ենթադրել տալ, թե այդ ժամանակ Կ. Պոլսում նույնպես Քրիստոսի Ծնունդը սկսել է տոնվել դեկտեմբերի 25-ին:

Հայտնի է, որ Քրիստոսի Ծննդյան տոնը դեկտեմբերի 25-ին տոնելու սովորությունը Ալեքսանդրիայի Եկեղեցին որդեգրել է 433 թ. շուրջ,[18] Կյուրեղ Աղեքսանդրացու ժամանակ, իսկ Երուսաղեմի Եկեղեցին՝ 549 թ.[19]:

Այսպիսով, Ե—Ջ դարերում արդեն գրեթե բոլոր Եկեղեցիները Քրիստոսի Ծննդյան տոնը սկսում են տոնել դեկտեմբերի 25-ին: Հայ Եկեղեցին է միայն, որ հավատարիմ է մնում հնավանդ սովորությանը:

Հայ մատենագրության մեջ առաջին վկայությունը Քրիստոսի Ծննդյան տոնը հունվարի 6-ին տոնելու մասին հանդիպում ենք «Յովհաննու հայոց կաթուղիկոսի ի Յայտնութիւնն Քրիստոսի»[20] գրության մեջ: Ըստ հեղինակի, այս տոնի պատճառը Աստուծո Միածին Որդու երկու սքանչելի ծնունդներն են. «առաջին յԱստուածածին կուսէն սրբոյ և երկրորդ յետ երեսուն ամի ի սմին աւուրս մկրտութեամբ ի Յորդանան...»[21]: Տոնը կոչվում է Հայտնություն, որովհետև Ս. Հոգին «Ի նմին աւուր իջեալ յերկնից նմանութեամբ աղաւնոյ, հանգչեր ի վերայ՝ յայտնելով զնա Փրկիչ աշխարհի, որպէս ի Ծննդեանն, նոյնպէս և ի Մկրտութեանն»[21]:

Ինչպես այս, այնպես էլ հետագայում գրված Անանիա Շիրակացու,[22] Ստեփանոս

---

[12] «Լույսերի օր»: Տե՛ս Գրիգոր Աստվածաբանի «Ի Յայտնութիւն Տեառն» ճառը, որի հունարեն բնագրի վերնագիրն է „Εἰς τὰ ἅγια Φῶτα", PG 36, 336.

[13] PG 33, 360:

[14] Այս աղբյուրի մասին տե՛ս Ἀ. Παπαδόπουλος, անդ, էջ 16—17, The Oxford Dictionary, էջ 280, 284 (ուր և անհրաժեշտ գրականությունը), 1084 և այլն:

[15] PG 49, 353. *Տե՛ս* Β. Στεφανίδου, *էջ 313,*

[16] PG 36, 312—333.

[17] PG 36, 360—425.

[18] PG 77, 1433. *Հմմտ.* Β. Στεφανίδου, *էջ 314,*

[19] PG 88, 197. *Տե՛ս նաև* The Oxford Dictionary *էջ 280,* Β. Στεφανίδου, *էջ 314,*

[20] Ամենայն հավանականությամբ այս գրության հեղինակը Հովհաննես Բ Գաբեղիացին է (557—574): Այդ է վկայում թղթի տեղը «Գիրք թղթոց» ժողովածուում, Հովհաննես Բ կաթողիկոսի թղթերի կարգին, էջ 85—89: Ամեն պարագայի այն գրվել է դարից առաջ, որովհետև արդեն է դարի սկզբին մտել է «Գիրք թղթոցի» մեջ:

[21] «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 85:

[22] **Ա. Աբրահամյան,** Շիրակացու մատենագրությունը: Երևան, 1944, էջ 283—291, Անանիայի Շիրակացւոյ համարողի ասացեալ ի Յայտնութիւն Տեառն եւ Փրկչին մերոյ (այսուհետև՝ Անանիա Շիրակացի):

Սյունեցու,[23] Անանիա Սանահնեցու,[24] Պողոս Տարոնացու,[25] Ներսես Շնորհալու,[26] Մխիթար Գոշի,[27] Ստեփանոս Օրբելյանի,[28] Կիրակոս Երզնկացու,[29] Մովսես Երզնկացու,[30] Գրիգոր Տաթևացու[31] և այլոց երկերում արտահայտված են մի շարք ապացույցներ, ի նպաստ Քրիստոսի Ծնունդը հունվարի 6-ին տոնելու Հայ Եկեղեցու սովորության վավերականության:

Այդ ապացույցները կարող ենք ներկայացնել հետևյալ կետերում.

ա.—Հայտնության տոնը հաստատել է Հակոբոս Տեառնեղբայրը և հրամայել մի օրում տոնել Քրիստոսի Ծնունդն ու Մկրտությունը:[32] Հակոբոս Տեառնեղբայրը, ականատես լինելով Քրիստոսի կյանքի դեպքերին, առաջին իսկ վայրկյանից սկսած, ստույգ պիտի իմանար Քրիստոսի Ծննդյան թվականը[33]: Եվ երբ նա հաստատեց այս տոնը, Աստվածածինը և առաքյալները դեռ կենդանի էին և ոչ ոք չհակառակվեց, այլ ընդհակառակն, տոնեցին Քրիստոսի Ծննդյան տոնը հունվարի 6-ին, և այսպես շարունակվեց մինչև Հուստիանոս կայսրը «որ զսուրբն Սոփի շինեաց: Եւ ի հայոց թուականի յըսկիզբն բարձին զծնունդն Տեառն. և մինչև յայնմ ամի ի բակում տեղիս՝ զտօն Ծնընդեան Տեառն ի յունվարի վեցն կարգէին»[34]:

բ.—Անանիա Շիրակացին և Պողոս Տարոնացին իրենց փաստարկների կարգին մեջ են բերում նաև Առաքելական կանոնների Զ կանոնը. «Քանզի գրեալ է ի վեցերորդ գլուխ կանոնացն այսպէս. եթէ՝ կարգեցին առաքեալքն եւ եդին հաստատութեամբ, թէ եղիցի տաւն Ծննդեան եւ Յայտնութեանն Տեառն և Փրկչին սերոյ գլուխ եւ առաջնորդ տաւնից եկեղեցւոյ, որ աւր ԻԱ է տիբեթ ամսոյ, որ է Զ յունուարի ըստ հռովմայեցւոց»[35]: Առաքելական կոչված այն կանոնախումբը, որից քաղված է այս վկայությունը, ունի ասորական ծագում[36]:

գ.—Քրիստոսի Ծնունդը հունվարի 6-ին տոնելու առաքելադիր սովորությունը վերահաստատվել է Նիկիայի ժողովում[37]: Դըժ-

[23] Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի, Մեծի իմաստասիրի, Պատասխանի թղթոյն Անտիոքու եպիսկոպոսի կոր վասն հաւատոյ գրեալն էր Գիրք թղթոց, էջ 323—334, (այսուհետև՝ Ստեփանոս Սյունեցի): Սույն թղթի հեղինակությունը վիճելի է: Շահե վրդ. Գասպարյանը (Տե՛ս «Լույս» 1905, էջ 114), Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանը (Կնիք հաւատոյ, Էջմիածին, 1914, էջ CIII-CIV) և ուրիշներ այն համարում են կեղծ գրություն:

[24] Վասն տօնի Ծննդեանն Քրիստոսի: Տե՛ս Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռ. № 6453, էջ 66ա—72բ, ուր այն հանդես է գալիս իբրև Անանիա Սանահնեցու «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց» ժողովածուի գլուխներից մեկը: Վասն տօնի Ծննդեան Քրիստոսի գլուխը, բացի վերջին հատվածից (էջ 71—72բ) նույնությամբ և բառացիորեն նույնն է Անանիա Շիրակացու վերոհիշյալ գործի առաջին՝ հիմնական մասի հետ (էջ 283—290-ի սկիզբը) (այսուհետև՝ Անանիա Սանահնեցի):

[25] Թուղթ երանելոյն Պողոսի Տարոնացոյ յաղթող ախոյեան վարդապետի՝ ընդդէմ Թէոփիստեայ Հոռոմ փիլիսոփային: Կ. Պոլիս, 1752, էջ 213—237 (այսուհետև՝ Պողոս Տարոնացի):

[26] Ընդհանրական թուղթք... էջ 94—95, 135—138 (այսուհետև՝ Ներսես Շնորհալի):

[27] Թուղթ Մխիթար վարդապետին, որ Գոշն կոչիւր: «Արարատ» 1900, էջ 567—568, 1901, էջ 55 (այսուհետև՝ Մխիթար Գոշ):

[28] Տեառն Ստեփաննոսի Սիւնեաց նախագահ Արեւի եպիսկոպոսի՝ Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց: Կ. Պոլիս, 1756, էջ 113—131 (այսուհետև՝ Ստեփանոս Օրբելյան):

[29] Կիրակոսի վարդապետի Երզնկացւոյ թուղթ Առ Կարնեցիս, համեմատական բնագիրը Սամվել սրկ. Դանիելյանի, Հոգևոր ճեմարանի ավարտաճառ, Ս. Էջմիածին, 1986 (անտիպ) (այսուհետև՝ Կիրակոս Երզնկացի):

[30] Մովսէսի Հայոց վարդապետի գրեալ պատասխանիք թղթոյն Տրապիզոնի առ հատուածեալն Գրիգոր երէց, հր. Եղնիկ աբեղա Պետրոսյանի, «Էջմիածին» 1975 Ա 31—40 (այսուհետև՝ Մովսես Երզնկացի):

[31] Գիրք հարցմանց, Գրիգորի Տաթևացւոյն: Կ. Պոլիս, 1829, էջ 482—485 (այսուհետև՝ Գրիգոր Տաթևացի):

[32] Զրոյցք Կոմիտասայ Հայոց Հայրապետի եւ պատրիարքի Կ. Պոլսոյ, Գիրք թղթոց, էջ 484—485:
Ստեփանոս Սյունեցի, էջ 325:
Անանիա Սանահնեցի, էջ 72ա:
Մխիթար Գոշ, էջ 567:
Պողոս Տարոնացի, էջ 213:
Ստեփանոս Օրբելյան, էջ 123:
Գրիգոր Տաթևացի, էջ 482—484:

[33] Ստեփանոս Սյունեցի, էջ 325—326: Պողոս Տարոնացի, էջ 214: Ստեփանոս Օրբելյան, էջ 126:

[34] Պողոս Տարոնացի, էջ 214:

[35] Անանիա Շիրակացի, էջ 283, հմմտ. Պողոս Տարոնացի, էջ 228, Կանոնագիրք հայոց Ա, աշխատասիր. Վազգեն Հակոբյանի, Երևան, 1964, էջ 32: Կանոնագրքում այն հանդես է գալիս իբրև 7-րդ հոդված, փոխանակ 6-րդի: Այս մասին տե՛ս Կանոնագիրք հայոց, Ա, էջ 543—544:

[36] Ասորերեն բնագրի հայերեն թարգմանությունը տե՛ս, Հ. Հ. Տաշյան, Վարդապետութիւն առաքելոց, Վիեննա, 1896:

[37] Անանիա Շիրակացի, էջ 283—284: Մխիթար Գոշ, էջ 567: Ստեփանոս Օրբելյան, էջ 130: Գրիգոր Տաթևացի, էջ 484:

բախտաբար Նիկիայի ժողովի արձանագրությունները մեզ չեն հասել և չենք կարող ճշտել այս տեղեկության ճշտությունը[38]:

Ըստ Անանիա Շիրակացու, այդ մասին մենք տեղեկանում ենք Նիկիայի ժողովի մասնակից Երուսաղեմի Մակար հայրապետի նամակից, որ ուղարկել է Հայաստան, Մկրտության խորհրդի կապակցությամբ: Սույն թղթի 6-րդ գլխում Երուսաղեմի հայրապետը նշում է, որ Մկրտությունը ընդունված է կատարել 3 մեծ տոների՝ «ի սուրբ Յայտնութեանն Ծնընդեանն Տեառն, եւ փրկական կատկի կենարար չարչարանացն Քրիստոսի, եւ ի շնորհալից Պենտեկոստին... Զոր պարտ է կիւրանքաչիւր տաւնիցն պատճառ Ծննդեանըն և Մկրտութեան ծանուցանել կի եւ դուք ի նոյն փութացեալք կատարեցէք. քանզի լուսաւոր Ծննդեանն Քրիստոսի եւ մեր մեղսաքաւիչ ծնունդ սրբոյ աւազանին ի նմին փրկական աւուրն կատարեցաւ, զի ի նմին աւուր առ յանձն մկրտիլ յաղագս առ մեզն զիջանելոյ»[39]:

Մխիթար Գոշի թղթում հարցը ներկայացված է մի փոքր այլ կերպ: Այստեղ Արիստակես հայրապետը Նիկիայի ժողովում Երուսաղեմի հայրապետից «ընկալաւ զեղեալ ընթերցուածն յառաքելոցն և եբեր ի Հայք»[40]:

դ.—Քրիստոսի Ծննդյան տոնը հունվարի 6-ին տոնելու առաքելական կարգադրությունը վերահաստատել է Երուսաղեմի Կյուրեղ հայրապետը (315—386), որը և դեկտեմբերի 25-ը նշանակել է «Տօն Դաւթի մարգարէի և Յակովբայ առաքելոյն»[41]:

ե.—Քրիստոսի Ծննդյան թվականը որոշելուն ելակետ է համարվել Եղիսաբեթի հղության օրը:

Հրեական նշանավոր տոներից էին Քավության և Տաղավարահարաց տոները: Քավության տոնը սկսվում էր Թշրին ամսի 10-ին (=սեպտեմբերի 27) և տևում 5 օր, որին հաջորդում էր Տաղավարաց տոնը, որ սկսվում էր Թշրին ամսի 15-ին և տևում 7 օր:

Քավության տոնի նպատակն էր մարդկանց, տաճարի և ողջ երկրի սրբումը մեղքերից[42]: Առաջին օրը, տարին մի անգամ լինելով, քահանայապետը մտնում էր Սրբություն Սրբոց, խնկարկելու և ողջակեզի արյունը ցանելու այնտեղ գտնվող սրբությունների վրա: Ղուկաս Ավետարանիչը վկայում է, որ Եղիսաբեթի հղության տարին քահանայապետը նրա ամուսինն էր՝ Եղիսվարը: Նրանք «երկուսն էլ Աստուծո առաջ արդար էին ու անարատ կերպով ընթանում էին Տիրոջ բոլոր պատվիրանների և օրենքների ճանապարհով: Նրանք որդի չունեին, որովհետև Եղիսաբեթը ամուլ էր և երկուսն էլ իրենց առաջացած տարիքում էին» (Ղուկ. Ա 7—8):

Եվ երբ Տաղավարաց առաջին օրը, Թշրին ամսի 10-ին Եղիսաբեթը մտնում է Սրբություն Սրբոց, այնտեղ նրան հրեշտակը ավետում է. «Զաքարիա, որովհետև քո աղոթքը լսելի եղավ, քո կինը՝ Եղիսաբեթը, մի որդի կծնի քեզ և նրա անունը Հովհաննես կդնես» (Ղուկ. Ա 13):

Ղուկաս Ավետարանիչը վկայում է, որ «Երբ պաշտամունքի իր օրերը լրացան, գնաց իր տունը: Այդ օրերից հետո նրա կինը՝ Եղիսաբեթը, հղիացավ» (Ղուկ. Ա 23—24):

Ըստ Հայ Եկեղեցու վարդապետներ Անանիա Շիրակացու, Պողոս Տարոնացու, Ներսես Շնորհալու, Ստեփանոս Օրբելյանի, Կիրակոս և Մովսես Երզնկացիների, Գրիգոր Տաթևացու և ուրիշների, պաշտամունքի 12 օրերը լրանալուց հետո միայն, ինչպես որ վկայում է Ղուկաս Ավետարանիչը, Զաքարիան գնաց տուն «որ ոչ յԵրուսաղէմ էր, այլ ի լեռնակողմն» և հետևաբար Եղիսաբեթի հղությունը չէր կարող Թշրինի 22-ից (=հոկտեմբերի 9) շուտ լինել: Եվ քանի որ Աստվածածնի հղությունը եղել է 6 ամիս հետո, ապա հոկտեմբերի 9-ին գումարելով 180 օր, կստանանք ապրիլի 6-ը կամ 7-ը, երբ և տոնվում է Ավետման տոնը: Ապրիլի 6-ին (կամ 7-ին) էլ գումարելով անդրանիկ հղության 9 ամիս և 5 օրը (=275/6 օր) կստանանք հունվարի 6-ը[43]:

Այս հաշվարկը սխալ է կատարել հերետիկոս Արտեմոնը[44], որ Եղիսաբեթի հղությունը

---

38 Ծանոթ. «Կանոնք Նիկիականք»-ը բովանդակում են Նիկիայի ժողովի վարչա-կարգապահական կանոնները միայն: Տե՛ս, Կանոնագիրք Հայոց, Ա, էջ 114—131: Πρακτικὰ τῶν ἁγίων καὶ Οἰκουμενικῶν συνόδων. Τ. Α., Ἅγιον Ὄρος 1981, σσ. 234—236.

39 Անանիա Շիրակացի, էջ 284:

40 Մխիթար Գոշ, էջ 567:

41 Զրույցք Կոմիտասայ, էջ 484: Ստեփանոս Սյունեցի, էջ 325: Անանիա Շիրակացի, էջ 285—7: Անանիա Սանահնեցի, էջ 72ա-բ: Մխիթար Գոշ, էջ 567: Ստեփանոս Օրբելյան, էջ 123: Գրիգոր Տաթևացի, էջ 484:

42 Β. Μ Βέλλα. Ἑβραϊκή Ἀρχαιολογία, Ἀθῆναι 1980, էջ 203—206; Η. Β. Οἰκονόμου. Παραδόσεις Ἀρχαιολογίας τῆς Παλαιστίνης καὶ Βιβλικῆς Θεσμολογίας, Ἀθήνα 1985, էջ 401—403.

43 Անանիա Շիրակացի, էջ 288—289: Պողոս Տարոնացի, էջ 218—225: Ներսես Շնորհալի, էջ 95, 136: Ստեփանոս Օրբելյան, էջ 124—125: Կիրակոս Երզնկացի, էջ 26: Մովսես Երզնկացի, էջ 35: Գրիգոր Տաթևացի, էջ 483—484:

44 Կոչվել է նաև Արտեմաս: Եղել է «Ուղղագրական» Մոնարխիկանների վերջին առաջնորդը Հռոմում

դրել է Զաքարիայի պապանձման օրը, այսինքն Թշրինի 10-ին (=սեպտեմբերի 27-ին) և հետևաբար Ավետումը ստացել է մարտի 25-ին, իսկ Ծնունդը՝ դեկտեմբերի 25-ին: Սակայն այս, ըստ հայ վարդապետների, անհնարին է: Քանի որ Քավության օրերը ողջ երկրի՝ մեղքերից մաքրության օրեր էին, իսկ Զաքարիան, որ արդար էր, ինչպե՞ս կարող էր այդ օրվա խորհուրդը պղծել: Մյուս կողմից նա տարվա քահանայապետն էր, ինչպե՞ս կարող էր թողնել տոնակատարությունը և ողջ Իսրայելից Երուսաղեմ հավաքված ժողովրդին և տուն գնալ: Ահա թե ինչ է գրում այս մասին Պողոս Տարոնացին. «Եւ ժողովուրդքն որ ժողովեալ էին յօրէն յառաջնմէ, ոչ գնային, այլ անդէն մնային զաւուրս երկուտասան: Վասն զի յետ քաւութեան տօնին ի նոյն ամսեանն ի տասն և հինգ օրն՝ տօն էր տաղաւարահարացն՝ որ զկնի հասանիւր, և վասն այսորիկ ոչ կարէին գնալ ժողովուրդքն, այլ անդէն ի տաճարն կային, զի ոչ էր օրէն զտօնն թողուլ և գնալ ի տուն, այլ անդէն դադարէին: Եւ Զաքարիա որ արդարն էր... զիա՞րդ կարէր անօրինիլ յաւուր տօնի քաւութեանն. վասն զի յայնմ աւուր տօնի քաւութեանն քաւէր զանցանս ամենայն ժողովրդեանն: ...Եւ այս ամենեցուն յայտնի է, զի կինն նորա ոչ էր Երուսաղէմ, այլ էր ի քաղաքն Յուդա՝ ի լեռնակողմն Հրէաստանի, հեռի Երուսաղեմէ աւուրագնաց մի՝ ուր գնաց Սուրբ Կոյսն Մարիամ»[45]:

Ընդհանրապես հայ մատենագրության մեջ այն կարծիքն է իշխել, թե հույները Քրիստոսի Ծննդյան հարցում մոլորվել են հերետիկոս Արտեմոնի գրություններից[46]:

Իսկ ըստ Անանիա Շիրակացու Քրիստոսի Ծնունդը Մկրտության տոնից բաժանել են Կերինթոսի[47] աշակերտները, որն և ընդունել են հույները[48]:

կ.—Ղուկաս Ավետարանիչը ասում է. «Եւ ինքն Յիսուս էր ամաց իբրեւ երեսնից ըսկըսեալ» (Ղուկ. Գ 23): Հիմնվելով այս հատվածի վրա, Հայ Եկեղեցու վարդապետները պնդել են, թե Քրիստոս «ի նմին աւուր յորում ծնաւ... ի լնուլ երեսուն ամին՝ ի նոյն աւուրն՝ եկն ի մկրտութիւն»[49], որովհետև եթե նա ծնված լիներ դեկտեմբերի 25-ին և մկրտված 30 տարին լրանալուց 12 օր հետո, դա կնշանակեր, թե նա մկրտվել է 31-րդ տարում[50]:

է.—Քրիստոսի Ծնունդը և Մկրտությունը միևնույն օրը տոնելու մասին է վկայում նաև այդ երկու տոների խորհրդի նույնությունը: Այսպես, Ս. Ներսես Շնորհալին ասում է. «է և այլ ինչ խորհրդական բան. զի որպէս ծնաւ ընդ մարմնոյ ի Կուսէն սրբոյ, ծնաւ մկրտութեամբն և ի Յորդանանէ յօրինակ մեզ. և զի երկոքին ծնունդք են, թէպէտեւ զանազանեալք ի միմեանց խորհրդեամբ և ժամանակաւ, վասն այնորիկ սահմանեցան ի միասին տօնել ընդ առաջնոյ ծնընդեանն և զերկրորդ ծնունդն»[51]:

Իսկ Մխիթար Գոշը ասում է. «զի մի էր խորհուրդ անախտ ծննդեանն և մկրտութեանն, վասն այն ի միասին եդին առաքեալքն»[52]:

ը.—Քրիստոսի Ծնունդը հունվարի 6-ից դեկտեմբերի 25-ը փոխադրելու մի այլ պատճառ է արտահայտված Նիկիայի Հովհաննես արքեպիսկոպոսի՝ հայոց Զաքարիա Ա կաթողիկոսին (855—876) ուղղված գրության մեջ[53]: Սույն թղթում հեղինակը փորձում

(+270): Պողոս Սամոստացուն դատապարտած Անտիոքի ժողովի (260 թ.) կողմից Արտեմոնը համարվել է Պողոս Սամոստացու ուսուցիչը:

[45] Պողոս Տարոնացի, էջ 220—222:

[46] Ստեփանոս Սյունեցի, էջ 325: Զրույց Կոմիտասայ, էջ 487: Պողոս Տարոնացի, էջ 230: Մխիթար Գոշ, էջ 567—568: Ստեփանոս Օրբելյան, էջ 115—118, 121: Գրիգոր Տաթևացի, էջ 482: Հայ մատենագրության մեջ այս Արտեմոնի մասին կա 2 կարծիք: Ըստ մի կարծիքի նա եղել է Հովհաննես Ավետարանչի աշակերտը (տե՛ս Ստեփանոս Սյունեցի, էջ 325: Գրիգոր Տաթևացի, էջ 482): Իսկ ըստ երկրորդ կարծիքի նա եղել է ո՛չ թե Հովհաննես Ավետարանչի աշակերտը, այլ Պողոս Սամոստացու ուսուցիչը (Ստեփանոս Օրբելյան, էջ 117: Տե՛ս նաև Գրիգոր Տաթևացի, էջ 482):

[47] Իբրև գնոստիկ գործել է Փոքր Ասիայում Ա դարի վերջին և Բ դարի սկզբին: Ըստ նրա Արարիչ Աստված տարբեր է Բարձրագույն Աստծուց, իսկ մարդ Հիսուսը՝ Քրիստոսից: Մարդ Հիսուսի վրա մկրտության ժամանակ իջել է Քրիստոսը (Աստծո Որդին) աղավնակերպ, սակայն վերջում լքել է նրան:

[48] Անանիա Շիրակացի, էջ 283:

[49] Պողոս Տարոնացի, էջ 213:

[50] Անանիա Շիրակացի, էջ 286: Պողոս Տարոնացի, էջ 225: Ներսես Շնորհալի, էջ 95, 136—137: Ստեփանոս Օրբելյան, էջ 127—128: Մովսես Երզնկացի, էջ 31: Կիրակոս Երզնկացի, էջ 26: Գրիգոր Տաթևացի, էջ 484:

[51] Ներսես Շնորհալի, էջ 137:

[52] Մխիթար Գոշ, էջ 567:

[53] Սույն գրությունը ընդգրկված է հայոց «Յայսմաւուրք»-ի մեջ: Յայսմաւուրք, Կ. Պոլիս, 1834, Ա, էջ 10—13: Այն հայերենի է թարգմանել Գրիգոր Սկևռացին 1203 թ. Լևոն թագավորի հրամանով: Թղթի հունարեն բնագիրը տե՛ս PG 96, 1436:

է բացատրել. «Եթէ է՞ր վասն առաքելական և նախագիր կտակն Յակոբայ եղբօր Տեառն՝ որ ի վեցն յունվարի ամսեանն ցուցանէ զտօն Ծննդեանն և Մկրտութեանն Տեառն մեր, հոռոմքս փոխադրեցաք ի դեկտեմբերի ամսեան ի քսան և հինգն զտօն Ծննդեան և ի վեցն յունվարի զմկրտութեանն»[54]:

Ըստ Նիկիո արքեպիսկոպոս Հովհաննեսի «Գրեաց երբեմն Կիւրեղ արքեպիսկոպոսն Երուսաղէմի, ոչ այն որ գրեաց զթուղթն առ Կոստանդինոս թագաւորն որդի մեծին Կոստանդիանոսի, այլ այն որ յետ ժամանակի եկաց ի նոյն աթոռ՝ առ Յուլիոս եպիսկոպոսապետն Հռոմայ և ասէ. Մեծ աշխատութիւն հասանէ պաշտօնէիցս և նուազութիւն լինի հրաշալի և փառաւոր տօնից ծննդեանն և մկրտութեան Տեառն մերոյ՝ երկոցունցն ի միում աւուր կատարելով. զի ընթերցմունքն և երգն ամենայն ըստ խորհրդեանն յաղագս բազմութեան պատուոյ աւուրցս և նուազութեան ժամուն անկատար մնան: Քանզի որպէ՞ս կարողութիւն ի միում աւուր կատարել իւրովի խորհրդածութեամբք՝ յայրն Բեդղեհեմի, և գնալ ժամանել ի Յորդանան և անդ զմկրտութիւնն ըստ իւրումն կատարել պատշաճից»[55]: Եվ այս է պատճառը, ասում է Նիկիայի արք. Հովհաննեսը, որ «բաժանեցին զտօն Ծննդեանն և Մկրտութեանն ի միասին տօնելոյն... Եւ ոչ որպէս ոմանք զրպարտութեամբ ասեն եթէ վասն այնորիկ բաժանեցին զմի տօնն յերկուս, զի և զՔրիստոս ըստ Նեստորի երևեցուցեալ յերկուս դէմս և յերկուս որդիս»[55]:

Այս բացատրությանը ծանոթ են և այն ընդունում են Ս. Ներսես Շնորհալին, Ստեփանոս Օրբելյանը, Կիրակոս Երզնկացին և Ս. Գրիգոր Տաթևացին[56]: Ստեփանոս Օրբելյանի մոտ միայն Հռոմի պապին նամակ գրողը ո՛չ թե Երուսաղեմի Կյուրեղ արքեպիսկոպոսն է, այլ Մակարը: Ըստ Օրբելյանի, նա «պատասխանի լուաւ ի Հռոմայ թէ մեք ի դեկտեմբերի քսանհինգ տօնեմք Ծնընդեանն, զի յայնմ աւուր ի հեթանոսութեանն տօն էր արեգական և հարսանիս Ափրոդետեայ, զի տիւն սկսանի ի գիշերոյն առնուլ զմասունս»[57]:

Ամփոփելով, Հայ Եկեղեցու վարդապետների մոտ այն հաստատուն համոզումն է եղել, որ Քրիստոսի Ծնունդը հունվարի 6-ին, Մկրտության տոնի հետ միասին տոնելու սովորությունը գալիս է առաքելական ժամանակներից, բխում է Ղուկաս Ավետարանի հաղորդած տվյալներից և այդ երկու տոների խորհուրդների միությունից, մինչդեռ Քրիստոսի Ծնունդը դեկտեմբերի 25-ին տոնելու սովորությունը հետսամուտ սովորություն է, սկսված Դ դարում և տիրապետած Զ դարում:

Այնուամենայնիվ, ինչպես դավանաբանական և ծիսական այլ հարցերում, այնպես էլ այս առթիվ Հայ Եկեղեցին արտահայտել է իր յայնախոհությունը և քրիստոնեական սերը Քույր Եկեղեցիների նկատմամբ: Այսպես, Ս. Ներսես Շնորհալին ասում է. «Բայց եթէ այսպէս և եթէ այն՝ ի փառս Աստուծոյ կատարեսցեն»[58]: Մի այլ տեղ նույնպես շեշտում է. «Եւ որպէս ինձ թուի՝ յայսպիսի իրս յանցանք ոչ թիւ ամսոյն է կամ պատկեր աւուրն, այլ հակառակութիւնն միայն, զի յորում աւուր և տօնէ ոք անհակառակաբար, հաճոյ է Աստուծոյ»[59]: Մովսես Երզնկացին նույնպես շեշտում է, որ կարևորը ո՛չ թե տոնի թվականն է, այլ «փաւատով և զսիրով տօնելն»[60]: Իսկ Կիրակոս Երզնկացին գրում է. «Այլ թէ մեք ի յունվարի Զ-ն առնեմք, և թէ նոքայ ի դեկտեմբերի ԻԵ-ն, ամենայն ի փառս Աստուծոյ է, զի հաւատան նոքայ և մեք, թէ ծնաւ Քրիստոս ի Կուսէն և արար փրկութիւն աշխարհի, և վասն այնորիկ տաւնեմք մեք և նոքայ... ծնունդն Քրիստոսի յորում աւուր պատուես՝ բարի է, միայն սիրով ի փառս Աստուծոյ լիցի»[61]:

Մնում է երկու խոսք ասել Տեառնընդառաջի[62] և Ավետյաց տոների թվականների մասին:

Տեառնընդառաջը, իբրև տերունական տոն, կատարվել է Երուսաղեմում Դ դարից սկսած, իսկ Ե դարում այն տոնվել է նաև Ասորիքում և Եգիպտոսում, միշտ փետրվարի 14-ին, այսինքն Քրիստոսի Ծննդյան տոնից՝ հունվարի 6-ից, 40 օր հետո[63]:

Հույն մատենագիր Գեորգիոս Մեղավոր վանականի վկայության համաձայն Հուստինոս Ա կայսրը (518—527) Տեառնընդառաջի տոնը ներմուծում է Կ. Պոլիս և փետրվարի 14-ից փոխադրում փետրվարի 2-ը, միաժամանակ հաստատելով այն իբրև տերունական տոն, քանի որ մինչ այդ շատ վայրերում չէր դասվում այն տերունական

---

54 Անդ, էջ 10—11:

55 Անդ, էջ 12:

56 Ներսես Շնորհալի, էջ 94: Ստեփանոս Օրբելյան, էջ 121: Կիրակոս Երզնկացի, էջ 26: Գրիգոր Տաթևացի, էջ 482:

57 Ստեփանոս Օրբելյան, էջ 121:

58 Ս. Ներսես Շնորհալի, էջ 95:

59 Անդ, էջ 137:

60 Մովսես Երզնկացի, էջ 32:

61 Կիրակոս Երզնկացի, էջ 26—27:

62 Տեառնընդառաջի տոնի մասին տե՛ս **Եղնիկ աբեղա Պետրոսյան,** Տեառնընդառաջ կամ Քառասնօրեայ գալուստն Քրիստոսի ի Տաճարն, «Էջմիածին», 1981, Բ, էջ 22—25:

63 Ι. Ε. Ἀναστασίου, էջ 525,

տոների շարքին[64]: Իսկ Հուստինիանոս կայսրը (527—565), Նիկիփորոս Կալիստոսի (+1335) վկայության համաձայն[65], հրամայում է այն տոնել ողջ կայսրության մեջ, անշուշտ փետրվարի 2-ին, դեկտեմբերի 25-ից 40 օր հետո:

Հույն մատենագիրների մոտ պահպանված այս տեղեկությունները հաստատվում են Արծրունյաց Գրիգոր եպիսկոպոսի՝ «Թուղթ Յերուսաղեմէ ի Հայս վասն Տեառնընդառաջին» գրությամբ[66], գրված Զ դ.: Գրիգոր եպիսկոպոսը, լինելով Երուսաղեմում, ականատես է լինում այն պայքարին, որ մղվում էր մի կողմից կայսերական պատվիրակների և մյուս կողմից Երուսաղեմի Եկեղեցու միջև: Մինչ «ի ժամանակս Յուստիանոսի կայսեր, յերեսներորդի երրորդի ամի թագաւորութեան նորա» կայսրը «գրէ թուղթ Յերուսաղէմ առ Յոստոս հայրապետն և առ Երուսաղեմացիսն ամենայն, զի փոխեսցեն զսուրբ Տեառնընդառաջին աւրն ըստ Ծննդեան ի քսան և հինգն դեկտեմբերի ամսոյ, որպէս և յայլ քաղաքսն ստութեամբ առնեն զայս»[67], երուսաղեմցիները պայքարում են Տեառնընդառաջի տոնը ըստ հնագույն սովորության, փետրվարի 14-ին տոնելու համար: Այս պայքարը, որ սկսվում է Հոստոս հայրապետի օրոք, շարունակվում է նաև Մակար հայրապետի օրոք:

Սույն պատմությանը ծանոթ է նաև Ս. Գրիգոր Տաթևացին, որ այս առթիվ գրում է. «Վասն տօնի Տեառնընդառաջին առաքեաց Յուստիանոս կայսրն Յերուսաղէմ զօրս բակում երիցս անգամ, զի զքառասնօրեայ գաւուտն ի տաճարն՝ ըստ Ծննդեանն տօնեսցեն և ո՛չ ըստ Յայտնութեանն, որ է յունվարի վեցն, զոր մեք տօնեմք Խ օր թուեալ մինչև ի ԺԴ-ն փետրվարի... Եւ յառաջին ամին Յոստոս էր հայրապետ Յերուսաղէմ, իսկ երկրորդն սուրբն Մակար»[68]:

Անանիա Շիրակացին, խոսելով Քրիստոսի Ծննդյան տոնի մասին, ասում է. «Գիտեմ սակաւս ի տունս որք զայդ տաւնէին մինչև ի Յուստիանոս թագաւոր: Եւ ի նմանէ հարկաւորեալք ամենեքեան ընկալան Երուսաղէմ, Հռոմ, Աղեքսանդր եւ ամենայն աշխարհ»[69]: Այս փաստը վկայում է, որ հավանաբար, Զ. դ., բյուզանդական Հուստինոս և Հուստինիանոս կայսրերի կողմից կարգավորվել են ո՛չ միայն Տեառնընդառաջի, այլ նաև Ավետման և հարակից այլ տոների թվականները, ելակետ ունենալով դեկտեմբերի 25-ը:

Այն, որ մինչև Զ դ. Տեառնընդառաջը տոնվել է փետրվարի 14-ին, ինքնին մի ապացույց է Քրիստոսի Ծնունդը հունվարի 6-ին տոնելու սովորության հնության:

Ավետման տոնի առաջին հիշատակությունը հանդիպում ենք հունարեն «Ճատկական ժամանակագրություն» երկում, 624 թ.-ին: Հաջորդ վկայություններին հանդիպում ենք Տոլեդոյի (656 թ.) և Տրուլլոյի (691 թ.) ժողովների կանոններում[70]:

Հայ իրականության մեջ Ավետման տոնի մասին խոսում են Անանիա Շիրակացին[71] և նրան հաջորդող հեղինակները:

Մխիթար Գոշը Ավետյաց տոնի հաստատումը Հայ Եկեղեցում կապում է Ս. Գրիգոր Լուսավորչի անվան հետ. «Եւ դարձեալ մեր Լուսաւորիչն Գրիգորիոս զԱւետեաց տաւնն՝ առ ի խափանել զմոլորութիւն, զոր տաւնէին Անահիտ տիկնոջն, անդ ետ ի Նաւասարդի ԺԵ, զայն ի Զ (զայն որ է է) ապրիլի, ըստ թուոյ աւուրց...»[72]:

Հայ մատենագիրների մոտ Ավետյաց տոնի համար հանդիպում են երկու թվականներ, ապրիլի 6 կամ ապրիլի 7: Հնում տարածված էր ապրիլի 6-ը[73]: Սակայն աստիճանաբար տիրապետող է դարձել և այսօր արդեն ընդունվել է ապրիլի 7-ը[74]:

Այս տարբերությունը առաջացել է, հավանաբար, նրանից, թե ո՞ր օրն է համարվել Եղիսաբեթի հղիության թվականը: Այսպես, մինչ մատենագիրների մեծ մասը ընդունում են Թշրին 22—հոկտեմբերի 9-ը, ինչպես տեսանք արդեն, Գրիգոր Տաթևացին ասում է. «ի յուսանալ 10 (հոկտեմբեր) ամսոյն, որ է Թշրինի 23: Արդ՝ աստի մինչ ի նիսանի 17 և յապրիլի 7...»[75]:

---

[64] *Տե՛ս* Ἀ. Παπαδόπουλος, *էջ 88*,

[65] Տե՛ս անդ, էջ 89:

[66] Հր. Ն. եպս. Ծովական, «Սիոն» 1964, էջ 33—36

[67] Անդ, էջ 33:

[68] Գրիգոր Տաթևացի, էջ 484—485:

[69] Անանիա Շիրակացի, էջ 290:

[70] *Տե՛ս*, Ἀ. Παπαδόπουλος, *էջ 93*,

[71] Անանիա Շիրակացի, էջ 288:

[72] Մխիթար Գոշ, էջ 568:

[73] Զրույց Կոմիտասայ, էջ 484: Կիրակոս Երզնկացի, էջ 26: Մովսես Երզնկացի, էջ 32: Ներսես Շնորհալի (որոշ ձեռագրեր), էջ 94, 95, 136 և այլն:

[74] Անանիա Սանահնեցի, էջ 71բ: Ներսես Շնորհալի (որոշ ձեռագրեր) էջ 94, 95, 136: Գրիգոր Տաթևացի, էջ 483: Օրացույց 1986, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, էջ 7, 53:

[75] Գրիգոր Տաթևացի, էջ 483:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹԱՔՈՒԿՅԱՆ

ԱՍՏԾՈ ԳԱՂԱՓԱՐԸ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱԾՆԵՐՈՒՄ

Կրոնական պատկերացումները, ոգին ու գաղափարները, դարեր ու դարեր խորը և հաստատապես, նստած են եղել հայ ժողովրդի ներքնաշխարհում, ունեցել են փորեղ հիմքեր:

Ինչպես իրավացիորեն ու դիպուկ վկայում է Մ. արք. Օրմանյանը «...յայտնի կը տեսնըուի, թէ Տրդատի գործը մեծ յաջողութեան հանդիպեցաւ, առաքելական ժամանակի քրիստոնէութեան մնացորդներուն՝ գաղտնութենէ յայտնութեան գալուն եւ թաքստոցներէ հրապարակ ելնելուն շնորհիւ: Պատմական յիշատակներ խնամով ուսումնասիրուած ատեն կը ցուցնեն, թէ նոյնիսկ 302 թուականին քրիստոնէութիւնը Հայաստանի ամէն կողմերը անհակառակ տարածուած էր»[1]:

Կասկածից վեր է նաև, որ ազգային-պետական իշխանության անկումը, հետագայում՝ իսպառ բացակայությունը, այլադավան տերությունների գերիշխանության ընթացքին հայոց առաքելական Եկեղեցու անուրանալի և անչափելի ազգապահպանական գործունեությունը ևս իրենց ազդեցությունն են ունեցել ժողովրդի գաղափարական ու հոգեկան նպատակաուղղվածության վրա:

Քրիստոնեությունը հայացավ: Ժողովուրդն այն դարձրեց իր կրոնը, իր էության անկապտելի մասը, ու ազգային և սոցիալ-հասարակական բազում հարցեր կապեց Եկեղեցու և կրոնի հետ:

Ժողովրդի կրոնասիրությունն իր արտացոլումը գտավ բազմաթիվ ասպարեզներում: Այն ինքնատիպ դրսևորում ստացավ նաև բանահյուսության մեջ. երգերում, հեքիաթներում, ժողովրդական վեպում, բանաձևային ժանրի միավորներում քրիստոնեությունը երևում է ամենատարբեր կտրվածքներով: Իր առավոտյան ողջույնի մաղթանքներից («բարի լուս—Աստծո բարին», «Ողորմի Աստված—ողորմի ծնողացդ»[2]) սկսած ժողովուրդը տարբեր առիթներով հիշել և օգնության է կանչել Աստծուն, սրբերին, սուրբ համարված բնության և կրոնական այլևայլ երևույթները, պարագաները, սրբատեղիները և այլն:

Ահա մի քանի օրինակ.

անեծք. «Աստված, դու էդոր պատիժ տաս», «Աստված, դու սրա հոգին առնես»[3]:

օրհնանք. «Աստված, դու բարի բախտ տաս էս տղուն», «Սուրբ Գևորգ, դու հասնիս իմ բալին»[4]:

երդում. «Աստծու ըղաքին սևերես ըլլիմ, թե...»[5], «Էն Աստվածը վկա, թե...»

հորովելի երգ. «Աստըծուն փառք տանք
Մաճկալ ջան,
Գութանը թող տանք:
Օրհնյալ ես Աստված,
Փառք քեզ, փառք,
Հիշյալ ես Աստված»[6]:

պանդխտության երգ. «Գարուն էկավ, ամառ գնաց,
Աչքըս մնաց ճամբըներաց,
Աստվածամոր խնդիր ունեմ,
Դուռ մի բանա կարիքներաց»[7]:

հանելուկ. «Օխտը փետ են իրիր կապված,
Ոչ թագուհի և ոչ էլ թագավոր
կարա բաց անի (Մեծ պաս)»[8]:
և այլն:

Առածները բանաձևային ժանրի ամենաօգտագործելի միավորներն են: Եթե անեծքները, օրհնանքը կամ երդումը գործածվում էին միայն խիստ որոշակի հանգամանքներում և, մասամբ, որոշակի արգելք (տաբու) ունեին, ապա առածների կիրառումը որևէ արգելքի չէր հանդիպում: Այս առումով առածները քննության հետաքրքիր նյութ են տալիս լեզվաբանական, բանագիտական և ժողովրդագիտական ուսումնասիրությունների համար: Հետաքրքիր է նաև առածների օրինակով քննել ժողովրդի կրոնական ոգու

և կրոնական պատկերացումների արտացոլումը նրա առօրյա մտածողության ու խոսքի մեջ:

Արամ Ղանալանյանի «Առածանի» ժողովածուի շուրջ 7600[9] առածներից մոտ 400 միավորներ պարունակում են Աստծո և կրոնական կանական հասկացությունների հիշատակություններ:

Դրանց մեջ իրավացիորեն և բնականաբար առաջին տեղը բռնում են Աստծո անվան հիշատակությամբ առածները (129 հիշատակում): «Աստված» անվանման բարբառային այլևայլ դրսևորումներից կատ հանդիպում են նաև «Էնավոր» և «տեր» տարաձևվերը:

Անուհետև գալիս են կրոնական հասկացությունները՝ (մեղք, մեղավոր, արդար, հավատ, դժոխք, դրախտ և այլն)—70 հիշատակում, կրոնական պարագաները (Ավետարան, մոմ, խաչ, խունկ և այլն)—64, կրոնական տոները (Զատիկ, Բարեկենդան, Խաչվերաց, Վարդավառ և այլն)—40, կրոնական շինությունները և սրբավայրերը (եկեղեցի, սրբատեղի, Երուսաղեմ, վանք, ժամ և այլն)—49, եկեղեցու սպասավորները (տերտեր, վարդապետ, աբեղա և այլն)—33, կրոնական գործողությունները (խաչ հանել, աղոթել, պատարագ կատարել, պաս պահել)—27, հրեշտակ, սատանա, սրբեր—19, աղոթքների անվանումներ, կրոնական դարձվածներ («Սուրբ Աստված», «Օրհնյալ է Աստված», «Աստված ողորմած է» և այլն)—15: 5 անգամ հիշվում է Հիսուս Քրիստոսը, երկու անգամ՝ Աստվածամայրը:

Վիճակագրական այս շարքն ահա երևան է հանում ժողովրդական մտածողության մի յուրօրինակ համակարգ:

Աստծո գաղափարը գերիշխողն է, և դա բնական է: Աստված հանդես է գալիս ամենաբավական սիմվոլների ձևով: Ժողովուրդը դժվար պահին միշտ ապավինել է գերագույն ուժին որպես արդար, ամենակոր դատավոր, իբրև անդիմադրելի ուժ, ամենագետ և բարձրագույն հեղինակություն («Որբի պահողը Աստված է» (266)[10], «Աստված հալալին կուտա, հարամին կը տանի» (14), «Աստված դարտ տվել, դարման լե տվեր է» (299), «Աստոծ մատաղը կը տենի, փետը կը հասցնի» (160), «Սուտն ու ղորթը Աստուձ գիտե» (299), «Աստծու պհած գառը գելը չի ուտի» (299), «Գուղի հախեմեն Աստուձ գուքա» (241), «Մ'ըներ անօրեն, կը կթնաս էնավորեն» (299) և այլն):

Սակայն որքան բարի է Աստված ու ողորմած, այնքան էլ անողոք է չարի հանդեպ: Ժողովրդի պատկերացումները լիովին վեր են հանում Աստծուն որպես խիստ դատավոր:

Աստված նաև սիրո ու հարգանքի բարձրագույն դրսևորմանն արժանի սիմվոլ է դառնում հայկական առածներում: Հետաքրքրքիր մի սկզբունք է նկատվում այս խընդիրն արտացոլող առածների շարքում: Աստծուն հարգելու, Աստծու «պատիվն» իմանալու համար անհրաժեշտ է, որ մարդ նախ անցնի բնական ու հասարակական հարաբերություններում ընդունված և հաստատված նորմերի ողջ շարքը:

«Եթէ ոք ասիցէ եթէ սիրէմ զԱստուած, եւ զեղբայր իւր ատիցէ՝ սուտ է, որ ոչ սիրէ զեղբայր իւր՝ զոր տեսանէ. զԱստուած, զոր ոչն ետես՝ զիա՞րդ կարիցէ սիրել» (Թուղթ Հովհ. Ա. Դ. 20):

Ավետարանական այս դրույթն ահա թե ինչ արձագանք ունի առածներում. «Հորն ու մոր հարգը չիմացող զավակը, Աստու հարգն ի՞նչ իմանա» (260), «Նէ (ոչ) Աստծուց կը վախենա, նէ մարդուց կ'ամչընա» (58), «Ջրեն ու քարեն չվախցողը՝ Աստուծմե ալ չի վախենալ» (201), «Մինչև մարդ զԱստված չը մոռնա, վիր պարտք չը մոռնա» (251):

Ժողովրդական պատկերացումներում Աստծո ամենագետ, արդար և ամենակարող լինելու գաղափարները ևս, ինչպես մնացյալ դեպքերում, խիստ կենցաղայնացած են, մարդկային փոխհարաբերությունների անարդարությանը, խաբեությունների ժողովուրդը հակադրում է իդեալական մի պատկեր՝ Աստծու արդարության և ամենագիտության բնորոշումով:

Հանրահայտ է, որ հասարակական տարբեր կարգերում, սոցիալական կյանքի պայմանների փոփոխության հետ մեկտեղ փոխվում է նաև ժողովրդի մտածողությունը: Եթե Ղարաբաղում գրառված «Մին պատառ կար, մինն էլ Աստոծ տվավ» (104) առածը լի է հավատով, և երկրային կյանքում Աստծո ողորմածությամբ ապրող հայ գյուղացու պատկերացման դրսևորումներից է, ապա քաղաքային բնակչության բանահյուսական մտածողության մեջ դրամատիրական հասարակարգի հաստատվելով սկսում են երևան գալ նոր երանգներ, նոր պատկերացումներ: «Վերը Աստված, վարը՝ փարան (դրամ)» (Պոլիս, 249), «Թաքավորը հիռու է, Աստուձ բարձր» (Թիֆլիս, 380):

Սակայն ընչաքաղցությունը, դրամասիրությունը, նյութապաշտությունը ժողովրդի պատկերացումներում հիմնականում դիտվում են իբրև խիստ բացասական երևույթներ և քննադատվում են, պատկերավորման

միջոց ծառայեցնելով նյութականի և ամենանվիրական սրբությունների հակադրությունը, և ընչաքաղցների կողմից վերջիններիս ոտնահարելու հանգամանքը՝ «Մի սել սիսեռ ունենա, Աստծուն Ասատուր կասի» (20), «Աստըծուն Աստո կը խանչա» (20), «Ձին նստավ՝ Աստված մոռցավ, ձիուց իջավ՝ ձին մոռցավ» (29):

Ու թեև «Անվգամն Աստված չունի» (39), սակայն, ժողովրդի խոր համոզմամբ «Անըվգամի գյամը (սանձ) մենակ Աստոծ վինքը կը քաշի» (39), քանի որ «Մարդը մարդի էրեսին մտիկ կը տա, Աստոծ՝ սրտին» (103): Եվ այդ պատճառով էլ միշտ «Լավություն արա ջուրը գցի, ձուկը չիմանա, Աստված կիմանա» (126): Նման համադրական շարքը կպզմում է յուրահատուկ աշխարհայացք: Եվ ի վերջո, մարդու անցողիկության, Աստծո կողմից նրա ստեղծված լինելու և Տիրոջ կամքից լիովին կախյալ վիճակի մեջ գտնվելու մտածողության արձագանք է «Մարդն ի Աստու խրձիկն ա, կը սուքա՝ վրենի կը ծիծղա, կը քանդա՝ կը ծիծղա» (299) առածը:

Ինչպես ասվեց, թվաքանակով երկրորդ տեղն կբաղեցնում են այն առածները, որոնց մեջ հիշատակվում են կրոնական այլևայլ հասկացություններ, կապված հանդերձյալ աշխարհի, մեղքի գիտակցության, ահեղ դատաստանի հետ: «Մեղք», «մեղավոր», «դրախտ (արքայություն)», «դժոխք», «արդար» տերմինները հանդիպում են համապատասխանաբար՝ 16, 15, 12, 9, 6 անգամ: Հասարակ ժողովրդին մտահոգել են հանդերձյալ աշխարհի, արդար և մեղավոր հոգու հարցերը: Եվ դա հասկանալի է: Հոգեկան և հավատալիքային խնդրից զատ, մեղքի, մեղավորության և արդարության հարցերը իրենց հետ բերում էին բարոյա-դաստիարակչական, աշխարհայացքային և կրթվածության խնդիրներ: Մեղք չգործելը ոչ միայն զուտ հավատալիքային կանոնների պահպանում էր, այլև հասարակական կարգի ու բարոյագիտական չափանիշների կիրառում. «Մեղքը սամուր քուրք ըլնի՝ վրադ մի առնի», «Մեղքը սև ու սպիտակ չէ, մարդ թալի վի թևերուն», «Աշխարհքը մեղքեն ծանդր բան չը կա» (132): Արդար մնալու համար անհրաժեշտ էր լինել էությամբ մաքուր՝ գործով, հոգով, մտքով և մարմնով: Կեղծ ապաշխարանքը, փարիսեցիությունը չեն կարող մաքրել մեղքը. «Խնկով, մոմով արքայություն գնալ չի ըլնի» (180): Մեղքերից լիովին չապատված, չապաշխարած մարդը դատապարտված է տանջանքի. «Չը գա մահ մեղավորին, ընչանք դառնա ճանապարհին» (132):

Նախնական մեղքի, մարդու «բպլմամեղ» լինելու արտացոլումն են «Մարդ օր կա՝ մեղքի տուն ա» (132), «Մարդ քուն՝ մեղքը վարթուն» (232), «Աչքդ բաց, մեղքդ լաց» (159) և այլ նման առածներ:

Դաստիարակության խնդիրների, ժողովրդի բարոյա-հոգեբանական կերտվածքի արտահայտման տեսանկյունից հետաքրքիր է նաև «Տնտես հավսար տես, թե չէ դատաստանին կէրթաս սևերես» (204) ասացվածքը: Ագահությունը, անհավատարությունը, ընչաքաղցությունը, ինչպես նշվեց, խիստ դատապարտվել է ժողովրդի կողմից: Այս ասացվածքը գալիս է մեկ անգամ ևս հաստատելու հիշյալ հանգամանքը:

Ժողովրդի ապատասեր ոգին արտացոլող հետաքրքրական առած է «Աղոթքն իր տեղը, թուրն իր տեղը» (233): Առանձնահատուկ տեղ են կբաղեցնում կրոնական պարագաների հիշատակումներով առածները: Առավելապես հիշատակվում են՝ խունկ (17 անգամ), մոմ (14 անգամ), խաչ (13), Ավետարան (13), մատաղ (6) անվանումները: Խունկով ու մոմով հայ գյուղացին ամեն օր մտել է վանք, մատուռ, տաճար ու եկեղեցի, աղոթել և հուսացել: Խունկն ու մոմը սովորաբար հանդես են գալիս միասին, և կարծես բառակապակցության երանգ են ստանում. «Խունկն ու մոմը իր ճամփեն կը գտնի» (127), «Ոչ ձեր ժամը կուգամ, ոչ ձեր խունկն ու մոմը կուզեմ» (58), «Խունկ ու մոմդ քեզ ըլնի, թաք դու մեր ժամը մի գա» (181), «Սրբի խունկ ու մոմն էլ ա պակասում» (203), «Խունկ ու մոմ էի սրբերին, ձուլ ու ծամոն եղա լրբերին» (97): Վերջին օրինակում հետաքրքիր հակադիր շարք կա, որը հավելյալ պատկերացում է տալիս ժողովրդական ինքնատիպ մտածողության և կրոնական պարագաների նկատմամբ ունեցած վերաբերմունքի մասին: Սրբերին մատուցվող խունկն ու մոմը բարձրագույն մաքուր ու անարատ վոհաբերության խորհրդանշանն է:

Խաչն ու Ավետարանը՝ քրիստոնեական կրոնի այդ երկու մեծ խորհրդանիշերը, ժողովրդական մտածողության մեջ ունեն տարբեր նշանակություններ:

Խաչը հանդես է գալիս տարբեր իմաստներով (1) «սրբատեղի». «Խունկդ քեզ ըլնի, խաչը մի հոտեցնիլ», «Հեռավոր խաչը զորավոր կըլնի» (127); (2) բարի, որը վանում է չարը՝ «Խաչն եկավ, դև խափանավ» (97); և (3) քրիստոնեության հիմնական խորհրդանիշ. «Որին տաճիկ կը կարծեինք, նորա ծոցեն խաչ էլավ» (111):

Հետաքրքիր է «Ավետարան» տերմինի կիրառումը: Այն ընկալվում է 1) ուղղակի ի-

մաստով, իբրև «սրբութիւն Աստուծոյ»՝ հոգևոր կյանքի հետ հաղորդակցվելու հիմնական միջոց, որին հակադրվում է աշխարհիկ կյանքը խորհրդանշող «տամբուրան» («Թողեց զԱվետարան, առավ զտամբուրեն» (93); 2) իբրև ամենակարող բուժիչ միջոց՝ «Անցավել գլոխը Ավետարանի տակ չեն դնի» (158), «Ողջ գլուխդ Ավետարանին տակն մի դնի» (198); 3) իբրև խրատատու, ուսուցման, աշխարհընկալման և ճանաչողության միջոց: Այս վերջին պարագան է արտացոլված հայկական թերևս ամենատարածված առածներից մեկի մեջ՝ «Գիլի գլխին Ավետարան կարդացին, ասավ՝ թեկ արեք, ոչխարը գնաց» (35): Ավետարանը հիշատակում է իբրև բարձրագույն հեղինակություն, իբրև բարոյա-խրատական և աշխարհճանաչողության ձևավորումն ապահովող հիմնական միջոց:

Եկեղեցու սպասավորներին, կրոնական շինություններ և եկեղեցական տոներ հիշատակող առածներում, 11 անգամ հիշատակվող «տերտեր» և 8 անգամ՝ «վարդապետ» կոչումների կողքին «եպիսկոպոս» հիշատակվում է միայն մեկ անգամ՝ Նախիջևանում գրառած «Մորուք եպիսկոպոսի, սիրտը՝ Հուլիանոսի» (31) առածում, որը, սակայն մեկ երևում է ավելի գրական, քան բանահյուսական ծագում ունեցող միավոր:

Ոչ մի անգամ չենք հանդիպում «Կաթողիկոս», «պատրիարք» և այլ բարձրաստիճան հոգևոր կոչումների հիշատակության. թերևս, կաթողիկոսը, պատրիարքը կամ առաջնորդ սրբականը հեռավոր ու բարձր հասկացություններ էին, մարդիկ, որոնք ժողովրդական մտածողությամբ դիտվում էին իբրև սրբություն և նրանց անվան շուրջն ստեղծվում էր որոշակի խոսքային արգելք (տաբու):

Դրա փոխարեն եկեղեցու ցածրաստիճան սպասավորների նկատմամբ առածներում երբեմն դրսևորվում է նույնիսկ բացասական վերաբերմունք՝ քննադատվում է նրանց ընչաքաղցությունը, վարքը, որկրամոլությունը, անգրագիտությունը և այլն. «Տերտեր արա գեղը գցի, թե չի ապրի գետը գցի» (38), «Մեռնողի վրա տերը լաց կընի, տերտերը կուրախանա» (193), «Օխտը վարդապետ մի աղջիկ կնքեցին՝ անքմը դրին Կիրակոս» (117) և այլն:

«Մոր մեկ օրհնանքը՝ օխտը վարդապետի անեծք կը քանդե» (263) առածի շուրջ ցույց է տալիս, որ դարեր շարունակ ժողովուրդը հավատացել է անեծքի և օրհնանքի հմայական ուժին, վախեցել անեծքից, հուսադրվել օրհնանքով:

Հայկական բալմաթիվ ավանդություններում խոսվում է հոգևորականների անեծքների մասին[11]: Բալմաթիվ են նաև նրանց օրհնանքների կատարումը նշող ավանդություններ[12]:

Ժողովրդական հավատալիքների այս շարքն էլ, թերևս, իր արտացոլումն է գտել առածում, որտեղ առավել մեծ դեր է խաղում մոր՝ հարազատ մարդու («որը երախտիք ունի») օրհնանքը, թեկուզ հոգևորական, բայց օտար անձի անեծքից:

Հայկական տաճարների պատերին կարելի է հանդիպել բալմաթիվ արձանագրությունների, որոնք պարունակում են նվովքներ, անեծքներ կամ բանադրանք՝ ուղղված հիշյալ շինությունը քանդել փորձող անհայտ չարագործներին: Եկեղեցին մեծագույն սրբություն էր և նույնիսկ որևէ չար արարք մարդկանց նկատմամբ, որևէ վատություն, չափվում էր եկեղեցու նկատմամբ կատարված ոտնձգության չափով. «Թե աղջկա ու տղի բան իս քանդի, թե մի էգեղեցի իս քանդի» (93), «Տուն քանդելն ու ժամ քանդելը մեկ ա» (113): Եկեղեցին Աստծո տունն է, և սիմվոլացումը քրիստոնեական գաղափարների: Եկեղեցու (ժամի) դուռը միշտ բաց է, այն մաքուր է, անեղծ, և նրան չեն կարող վնասել կամ աղտոտել («մուռտաոել»). «Ժամի դուռը շատ էլ բաց ա, աբուռհային ի՞նչ ա էկե» (23), «Շունը հաչալով եկեղեցին չի մուռտաոի» (197):

Առածներում եկեղեցական տոների 40 հիշատակություն ունենք. Զատիկ՝ 14, Բարեկենդան՝ 8, Խաչվերաց (Սրբխէչ)՝ 7, Ս. Աստվածածին, Վարդավառ և Զրօրինեք (Խաչօրինեք)՝ 3-ական:

Հիշյալ բոլոր տոները քրիստոնեական նշանակությունից զատ ունեին ժողովրդական տոների արժեք ևս, ու իրենց արմատներով հասնում էին մինչև նախաքրիստոնեական շրջան: Տոները հիշատակվում են հիմնականում երկու սկզբունքով: Նրանցով ճշտվում է տարվա եղանակը, այլ կերպ ասած առաջնային է դիտվում տվյալ տոնի օրացուցային կողմը: Վերջինս շատ ընդունված էր ժողովրդական լայն խավերում և ցարդ կիրառություն է գտնում: Յուրաքանչյուր տոն ունի իր առանձնահատկությունները, և դրանք առածներում գտել են իրենց արտացոլումը:

Կաղանդը դիտվում է իբրև գարնանամուտ, Զրօրինեքն արդեն գարնան բուն ավետաբերն է, և ժողովուրդը սիրով է դիմավորում այս տոները: Ամառային արևադարձից հետո եկող Վարդավառը հիշեցնում էր, որ ցերեկն սկսում է կարճանալ, աշունը հեռու չէ: Այստեղից էլ առածները. «Լավ է Կաղանդը, քանց Վարդավառը» (243), «Երանի Զրօրինեքին, ոչ երանի Վարդևորին» (243): «Վարդևորին՝ կտեր ծերին» (241) ասվում է մի այլ առա-

ծում, որը լիարժեք արտացոլումն է ժողովրդական ապրելակերպի. ամռանը հայկական գյուղերում կտուրներին բնակվելը կանգվածային երևույթ էր. այնտեղ ճաշում էին, քնում: Ահա առածների մի շարք ևս, որտեղ երևան է եկել տոների օրացուցային կողմը շեշտելու միտումը. «Բարև տաս՝ Բարիկենդան կուգա» (22), «Ծառ-վարդար՝ վարդկե Զատիկ» (242), «Աստվածածնուն բագը մտի, Սուրբ-Խաչն արա՝ ծակը մտի», «Աստվածածին արա՝ բագը մտիր, Սուրբ Խաչն արա, ծակը մտիր, Մուղնուխտն արա, դուռը հետ արա»[13] (242):

Երկրորդ սկզբունքը տոնի բուն բնույթը շեշտելու միտումն է: Այս առումով առածներում առանձնահատուկ տեղ է վերաղեցնում Ս. Հարության տոնի՝ Զատիկի հիշատակումը: Զատիկը մի առանձնահատուկ տոն էր, որին մեծ սիրով ու անհամբերությամբ էին սպասում: Բացի այն մեծագույն խորհրդից՝ հարության գաղափարից, որը հավերժ կյանքի հաղթանակն էր խորհրդանշում, Զատիկն իր հետ բերում էր նաև գարուն ու ծաղկունք, խինդ ու բերկրանք: Մեծ Պահքի երկար ու ձիգ շաբաթներից հետո Զատիկը բերում էր խրախճանքի, ուրախության անմոռաց պահեր: Զատիկից մինչև Խաչվերաց՝ մինչև դաշտային աշխատանքների ավարտն արդեն հայ գյուղացին ուրախանալու այլ մեծ առիթ չէր ունենալու: Եվ նա ուրախանում էր ի սրտե:

Զատիկն այն տոնն էր, որը պետք էր դիմավորել մաքրված ու առույգ հոգով: Եվ պարսավանքի էր արժանանում այն մարդը, ով Զատիկը դիմավորում էր չմաքրված, չար մտքերով ու վատ հոգով: «Փիս մարդը Զատիկին էլ փիս կլինի» (55) առածը ցույց է տալիս, որ պարսավելի է դիտվում այն մարդը, որն անգամ այս տոնին չէր մաքրված մեղքերից ու չարությունից:

Զատիկը շռայլ տոն էր: Տոնը դիմավորում էին նոր արդուզարդով՝ «Զատիկն եկավ, չունիմ կապա, ով որ ընե ինձի կապա, անոր կըսեմ՝ հաճի պապա» (24), ընտիր ուտեստներով ու խրախճանքով. «Քանի քաղցենա Զատկի փլավը միտը կըլնի» (115), «Կուշտ ուտելը Զատկի իրկունն է» (100), «Կարմիր ձուն Զատկին կը սպի» (133), «Զատիկը առանց ձվի չի լինի» (170):

Մինչև Զատիկ կար մի մեծ տոն ևս, որ ժողովրդի կողմից դարձյալ շատ սիրված է եղել: Դա Բարեկենդանն էր: Առածներից մեկում այս տոնը ժողովուրդը կոչել է «բարի Բարեկենդան»: Ինչպես Զատիկը, այնպես էլ Բարեկենդանը նշվում էր իբրև ուրախ տոն, որը դիմավորում էին ճոխ սեղաններով, զվարճանքներով: Զմռան ավարտին համընկնող այս տոնը Մեծ Պահքից՝ գարնանամուտից առաջ եղած վերջին ուրախությունն էր, որ դեռ երկար պիտի հիշեին պահքի մեջ գտնվողները. «Բարիկենդանին կերակուրը շատ կըլնի» (162), «Էն հուսով մնացիր, որ Բարիկենդանին փլավ ուտիս» (81), «Քանի անոթնա Բարեկենդանի գաթեն մյոտ կ'ընկնի» (115):

Առածներում այսպիսով արտացոլվել են կրոնական համարյա բոլոր մեծ տոները՝ Կաղանդ, Բարեկենդան, Ծաղկազարդ, Զրօրհնենք, Զատիկ, Վարդավառ, Ս. Աստվածածին, Խաչվերաց: Հիշատակված չէ, թերևս միայն Ս. Ծննդյան տոնը, որը Կաղանդի հետ էր նշվում սովորաբար:

Հայ շինականը միշտ էլ հիշել ու փառաբանել է Աստծուն: Սակայն ժողովրդական աղոթքային բանաձևերը եղել են պարզ, անպաճույճ: Եկեղեցական արարողությունների համար նախատեսված բնագրերը լինելով գրաբար և հիմնականում գրական բարձր մշակվածություն ունեցող գործեր, հասու չէին անգրագետ հայ գեղջուկին: Նրա աղոթքը չնայած «ի խորոց սրտի» էր, սակայն հասարակ էր, հաճախ մեկ-երկու տողով կամ մի քանի բառով արտահայտված: Թեև հետագայում հանդիպում ենք նաև երկար աղոթքների («Գիրկապի», «Զարախափան»[14] և այլն), սակայն ինչպես նշում է Մ. Աբեղյանը «սկզբնական «աղոթքները» հարկավ այսպես երկար չեն եղել, այլ միայն կարճ ու կրկնված խոսքեր են եղել»[15]:

Բնութագրական է, որ ժողովրդական վեպի՝ «Սասնա ծռերի» հերոսների աղոթքը ևս չէր անցնում 1—2 տողից, որոնցից հիշատակելի են.

«Հավատում խոստովանիմ Բանձրիկ Մարաթուկ Սուրբ Նշան»[16]:

«Սըփ Նշան խանչեց...»[17]:

«Հացն ու գինի, Տեր կենդանին»[18]:

«Օրհնյալ, բարերար Ասված, քու հրամանքն էր շատ»[19]:

«Դավիթ գնաց, էկավ,
Աստու անուն էտու,
հիշեց զՄարութա Բանձրիկ Ասվարածին,
Խաչ Պատարագին, ինչ ուր աջ թևին...»[20]
(ընդգծումն իմն է.—Հ. Թ.):

«Ողորմած, բարերար Ասված»[21]:

«Ով տեր Ասված»[22]:

«Հիշա իմ խացն ու գինին,
Տեր կենդանին,
Մարութա Բանձր Աստվածածին,
Խաչ Պատարագին վար Դավթի աջ թիվին»[23]
(ընդգծումն իմն է.—Հ. Թ.), և այլն:

Ինչպես տեսնում ենք, աղոթքային բանաձևերը հիմնականում 1—2 տող են կազմում, մնացյալը աղոթողի խնդրանքն է, իղձը, կամ

որոշ գործողությունների նկարագրություն (հիմնականում հմայական աղոթքներում[24]): Նման աղոթքներն ունեն հաստատուն բառամիավորներ, բառակապակցություններ, կամ դարձվածներ, որոնք մնում են անփոփոխ, իսկ բնագրի մնացած հատվածները փոփոխվում են ըստ իրադրության: Նման հաստատուն և փոփոխական մասերով միավորներ հանդիպում ենք նաև օրհնանքներում, անեծքներում, առածներում:

Նման սկզբունքով են կառուցված նաև կրոնական դարձվածքներ կամ աղոթքի առանձին միավորներ պարունակող առածները:

Հիմնականում հիշատակվում են հայտնի աղոթքների անվանումները կամ ժողովրդական մաղթանքային բանաձևի որևէ հիմնային բառակապակցություն, որը աղոթողի դիմումի հիմնական մասն է կազմում. «Հեմալ էղար, օր «Սուրբ Աստվածն» ալ մոռցար» (26), «Գետն ընցավ, «Սուրբ Աստվածը» մոռցավ» (29), «Սուրբ Աստվածը», չի, որ իրեք հետ ասեմ, պրծնեմ»[25] (111), «Անցանք-դարձանք՝ մեղա Աստուծո» (83), «Օխտը գոմեշ կուտամ «մեղա Աստծու» չեմ ասի» (47), «Աստված ողորմած է» ըսողը անոթի կմնա» (300), «Ախ ու վախով կանցնի աղքատի օրը, էլի կըսէ՝ «Աստված ողորմած է» (218), «Տան տերտերին «օրհնյա տեր» չկա» (203) և այլն:

Ինչպես երևում են բերված օրինակներից, կան և՛ աղոթքների ու սրբական երգերի անվանումներ («Սուրբ Աստված»), և՛ բանաձևեր, որոնք արդեն հմայական ուժ են ձեռք բերել ու ինչ-որ տեղ փոխարինում են աղոթքային բանաձևերին («մեղա Աստծո», «Աստված ողորմած է»), և՛ հատուկ ողջույնի կամ դիմումի ձևեր՝ ուղղված հոգևորականի կամ եկեղեցու սպասավորի («օրհնյա տեր»):

Առածների ու բանահյուսական այլ ժանրերի միավորների համեմատական քննությունից պարզ է դառնում, որ Աստծո գաղափարն ու կրոնական երևույթներն արտացոլող առածները արդյունք են ժողովրդական մտքի, հույզի, զգացումների ու կենսափորձի, և խորապես արտահայտում են հայ ժողովրդի դարավոր ու օրգանական կապվածությունը քրիստոնեության և, առանձնապես, Հայ Առաքելական Եկեղեցու հետ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. **Մ. արք. Օրմանյան**, Ազգապատում, Ա հատ., Կ. Պոլիս, 1912 թ., էջ 89—90:
2. **Ս. Հարությունյան**, Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ, Եր., 1975 թ., էջ 142:
3. **Ս. Հարությունյան**, նշվ. աշխ., էջ 139:
4. Անդ:
5. **Ս. Հարությունյան**, նշվ. աշխ., էջ 6:
6. Ընտիր էջեր հայ գրականության, Եր., 1946 թ., էջ 64:
7. Ընտիր էջեր..., էջ 75:
8. **Ս. Հարությունյան**, Հայ ժողովրդական հանելուկներ, Եր., 1965 թ., էջ 195:
9. 7600 թիվը հարաբերական է: Ա. Ղանալանյանի «Առածանիում» տեղ գտած առածների ճնշող մեծամասնությունն ունեն բազմաթիվ տարբերակներ: Ընդհանուր առմամբ, ըստ հեղինակի կազմած քարտարանի, դրանք առավել քան 38 հազար են: Սակայն այդ բոլորը ժողովածու չեն մտել տեղի սղության պատճառով: Հետևաբար կրոնական թեմա պարունակող առածները ևս շուրջ 5 անգամ ավելի պիտի նկատել:

Ինչևէ, նույնիսկ այս 400 միավորը մեզ բավական է նկատվում հետազոտության համար, մանավանդ որ հաշվարկները տատանումներ չեն տալիս:

10. Բերված բոլոր առածները բացառապես քաղված են՝ **Արամ Ղանալանյան**, Առածանի, Եր., 1960 թ.: Առածների կողքին, փակագծերում նշված են հիշյալ գրքի համապատասխան էջերը:
11. **Ա. Ղանալանյան**, Ավանդապատում, Եր., 1969 թ., էջ 112, 182, 188—189, 200, 231, 256, 399, նաև՝ Ազգագրական հանդես 12, էջ 249 և այլն:
12. **Ա. Ղանալանյան**, Ավանդապատում, էջ 103, 114—115, 116—117, 118—119 և այլն:
13. «Մուղնու ուխտը»՝ Աշտարակի շրջանի Մուղնի գյուղի Ս. Գևորգ նշանավոր եկեղեցում կատարվող տոնակատարությունները տարին 2 անգամ են տեղի ունենում:

Այսպես կոչված «փոքր ուխտը», որը նշվում է զարնանը՝ ապրիլի վերջին շաբաթ օրը, և «մեծ ուխտը»՝ բուն Ս. Գևորգի տոնը, որը նշվում է սեպտեմբերի վերջին բոլոր եկեղեցիներում, այդ թվում և այստեղ: Տեղային նշանակություն ունի և որպես «Մուղնուխտ» է ճանաչվում առաջինը՝ զարնանայինը, որը և հիշատակված է առածում:

14. **Մ. Աբեղյան**, Երկեր, Ա հատ., Եր., 1966 թ., էջ 34—38:
15. **Մ. Աբեղյան**, նշվ. աշխ., էջ 36:
16. Սասնա ծռեր. ժողովրդական վեպ., Եր., 1977 թ., էջ 32:
17. Անդ, էջ 78:
18. Անդ, էջ 294:
19. Անդ, էջ 327—328:
20. Անդ, էջ 335:
21. Անդ, էջ 351:
22. Անդ, էջ 355:
23. Անդ, էջ 457:
24. **Մ. Աբեղյան**, նշվ. աշխ., էջ 37:
25. Այս և, թերևս, նախորդ երկու առածներում նույնպես հիշատակվում է «Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ յայտնեցար վասն մեր, ողորմեա մեզ» հանրահայտ օրհներգը, որը կրկնվում է երիցս (տես. «Ժամագիրք Հայաստանեայց Եկեղեցւոյ, Վաղարշապատ, 1902 թ., էջ 229):



ԳԵՎՈՐԳ ՍՐԿ. ՄԿՐՏՉՅԱՆ

ՎԵՐԻՆ ՆՈՐԱՎԱՆՔԻ ՏԵՂԸ*

ԱՐԱՏԵՍԻ ԿԱՄ ՎԵՐԻՆ ՆՈՐԱՎԱՆՔԻ ԴՊՐՈՑԸ

Արատեսի վանքը (որ կոչվել է նաև Հարատես, Այսաս, Այսասի), առաջին անգամ վերանորոգել և այդտեղ վարդապետարան է հիմնել ռաբունապետ Հայրապետը, ինչպես երևում է հետևյալ արձանագրություններից. «Ի թվին ՉԺԹ (1270) ի տէրութեան փառաւոր իշխանին Սմբատայ եւ հարապատի իւրոյ Տարսայիձին, ես նուաստ աբեղայ Հայրապետ անուն սպասաւոր բանի կրկին շինեցի վվանս եւ նորոգեցի վեկեղեցիս, շինեցի վգաւիթս և վայլ ինչ»[1]: Վերանորոգումից հետո, ինչպես երևում է արձանագրություններից, տեղի են ունենում մեծ թվով նվիրատվություններ և եկեղեցին արագորեն բարգավաճում է: Այն, որ Հայրապետն այդտեղ դպրոց է հիմնել, վկայում է նրա տապանաքարի արձանագրությունը. «Չերջանիկ Ռաբունապետն Հայրապետ նորոգող այսըմ ուխտի յիշեցէք. թվին ՉԼԹ (1290)»[2]: Այսինքն, 1270 թ. վանքը վերանորոգող աբեղա Հայրապետը հետագայում հիմնում է դպրոց և նշանակվում ռաբունապետ, հավանաբար ստանալով նաև վարդապետական աստիճան: Քսան տարվա ընթացքում նա ուսուցչական բեղուն գործունեություն է ծավալում, այլապես տապանաքարի վրա չէր գրվի «վերջանիկ ռաբունապետ»:

Հայրապետի հիմնած դպրոցը եղել է բարձր տիպի, հավանաբար՝ վարդապետարան, և ուսուցիչներ է պատրաստել մոտակա վանքերի դպրոցների համար: Այդ երևում է 1284 թ. գրված մի ձեռագրի հիշատակարանից, որ գրել է Գնդեվանքի Վարդան վարդապետը. «...Արդ, այսպիսի հրաշակերտ տէրունական հրամանացս եղէ ես անպէտս ի բնաւից անարժան ի յոքունց Վարդան՝ վարդապետ անուամբ և ձևով միայն, և ոչ արդամբք և ճշմարտութեամբ, վասնզի խաւար այսոյ վկենցաղս պատրէ վիհս հանապազ, սնեալ և վարժեալ ի սուրբ ուխտին, որ կոչի Արատէս, առ ոտս աստուածազարդ ռաբունոյ Հայրապետի, նորոգիչ եկեղեցոյ և սիրող սրբութեան: Եւ ետ այնորիկ եկեալ բնակեցայ ի մենաստանիս, որ կոչի Գնդեվանս...»[3]: Մեծ է եղել Վերին

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1986 թվականի № № Գ—Դ-ից:

[1] Ղ. Ալիշան, Սիսական, էջ 142:

[2] Նույն տեղում:

[3] Ա. Մաթևոսյան, ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1984 թ., էջ 557—58:

Նորավանքի դպրոցի կապը հատկապես Գլաձորի հետ:

Հայրապետից հետո Վերին Նորավանքում հիշվում են երկու վարդապետ-ուսուցիչներ՝ Դավիթ և Արքա. «...եկայք ի Վերին Նորավանս, առ վարդապետն Դաւիթ և Արքայ...»[4]: Դավիթն առաջին անգամ հիշվում է արևելյան վարդապետների՝ 1295 թ. Անավարպեցուն գրած նամակի տակ ստորագրողների շարքում. «Ես՝ Դաւիթ նուաստ ոգի քարոյ բանի և վարդապետ Հայաստանա եկեղեցւոյ...»[5]: Այս Դավթի մասին Ս. Արևշատյանը և Ա. Մաթևոսյանը հետևյալն են գրում. «Որպես ռաբունապետ աշխատում էր նաև Գլաձորում, բայց Նորավանքի ռաբունիների կողմից հիշվում էր Նչեցուց առաջ, կամ ավելի պատվավոր ածական—կոչումներով. այսպես՝ «ի վարժապետութիւն մեծիս Եսայեայ և եռամեծին Դաւթայ» կամ «քաջ հռետորաց Հայոց ...Դաւթի և Եսայեայ»: Դավիթը, որպես Օրբելյանների հոգևոր կենտրոնի առաջնորդ ու ռաբունապետ, «եռամեծ» կոչվելու իրավունք ուներ: Մահացել է 1329 թ.-ից առաջ և թաղվել Նորավանքում»[6] (Վերի՞ն Նորավանքում):

Թանահատի վանքում պեղումների ժամանակ հայտնաբերվել է մի տապանաքար՝ հետևյալ մակագրությամբ.

«ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԴԱՎԻԹ ՔԱՀԱՆԱՅԻ ՈՐ ՏԱՐԱԺԱՄ Ի ՔՐԻՍՏՈՍ ՓՈԽԵՑԱՒ: ՅԱՂԱՒԹՍ ՅԻՇԵՑԷՔ ԹՎԻՆ :ՉՀԱ: (1322)[7]:

Ըստ Ի. Ղարիբյանի, այս Դավիթը 1275 թվականից առաջ Մշո Առաքելոց վանքում արդեն վարդապետական աստիճան ուներ, իսկ 1282 թ. Ներսես Մշեցու և Եսայի Նչեցու հետ միասին տեղափոխվում է Գլաձոր և 1284 թ.-ից, Ներսես Մշեցու մահից հետո, դառնում այդ համալսարանի երկրորդ դեմքը: «Գլաձորի համալսարանում 1321 թ.-ից հետո գրված և ոչ մի ձեռագրում այլևս չենք հանդիպում Դավիթ անվանը: 1328 թվին հիշատակված Դավիթը՝ Դավիթ Գետկեցին է և, իհարկե, կապ չունի Դավիթ Սասնեցու հետ»[8], գրում է Ի. Ղարիբյանը և, վերը նշված տապանաքարը համարելով Դավիթ ռաբունապետի տապանաքարը, եզրակացնում, որ նա մահացել է 1322 թ.:

Սակայն առաջին իսկ հայացքից երկու հարց է առաջանում, որոնք և կասկածի տակ են դնում այս ենթադրությունը: Նախ՝ թվականի հարցը: Դավիթ ռաբունապետը, ինչպես նկատում է Ի. Ղարիբյանը, 1275 թ.-ից առաջ արդեն Առաքելոց վանքում վարդապետ էր: Այդ մասին իմանում ենք Մշո Առաքելոց վանքում գրված ձեռագրերից մեկի հիշատակարանից, որտեղ Գրիգոր գրիչը խնդրում է հիշել. «եւ կամեր վարդապետն Դաւիթ ընդ նմա արժանի արասցէ Քրիստոս յիւր արքաութեանն»[9]: Եթե ընդունելու լինենք, որ Դավիթը վարդապետական աստիճան է ստացել առնվազն 25 տարեկան հասակում, այսինքն 1250 թ. շուրջ, և մահացել 1322 թ.-ին, ապա կլիներ 70-ն անց մի ծերունի, որի համար տապանաքարի վրա չէր գրվի «տարաժամ ի Քրիստոս փոխեցաւ»: Ի. Ղարիբյանը այս մասին գրում է. «Մեր վկայակոչած արձանագրության մեջ որոշակի նշվում է, որ Դավիթը «Տարաժամ» մահացել է 1322 թվականին: Եվ իրոք, եթե Դավիթը Եսայի Նչեցու հետ միասին աշակերտել է Ներսես Մշեցուն, ուրեմն նրանք հասակակիցներ են եղել, և այդ պատճառով նրա մահը 1322 թ. համարվում է «տարաժամ»[10]: Այս բացատրությունն անհիմն է, որովհետև տապանաքարի վրա «տարաժամ» գրելիս նկատի չեն ունեցել, թե Եսայի Նչեցին ինչքան է ապրել (ավելի շուտ՝ ապրելու, որովհետև Նչեցին մահացել է 1338 թվականին, իսկ այդ 16 տարիների ընթացքում Դավթի տապանաքարը, ըստ երևույթին, արդեն դրված է եղել)[11]:

Հաջորդ հարցը վերաբերում է «քահանա» բառին, որն ուսումնասիրողը բացատրում է հետևյալ կերպ. «Տապանաքարի քահանա անվանումը չպետք է տարակուսանք հարուցի, քանի որ միջին դարերում այնպիսի հայտնի գիտնական այրեր, որոնք մեր պատմությունը, տոմարը, փիլիսոփայությունը և լեզուն հարստացրել են անգնահատելի գանձերով, նույնպես ունեցել են եկեղեցական հասարակ կոչումներ (օրինակ՝ Հովհաննես Սարկավագը, որ իր անբավ գիտելիքների համար «իմաստուն» էր կոչվում, կամ՝ նշանավոր ժամանակագիր քահանա Անեցին և ուրիշներ)»[12]:

Այս բացատրությունը նույնպես քննադատության չի դիմանում: Նախ, որովհետև Դավիթ ռաբունապետը երբեք չի հիշվում որպես քահանա, այլ վարդապետ, ինչպես

[4] **Լ. Խաչիկյան**, «ԺԴ դարի ... հիշատակարաններ», էջ 7—8:

[5] **Ս. Արևշատյան, Ա. Մաթևոսյան**, Գլաձորի համալսարանը միջնադարյան Հայաստանի լուսավորության կենտրոն, Երևան, 1984 թ., էջ 42:

[6] Նույն տեղում:

[7] **Ի. Ղարիբյան**, Գլաձոր, Երևան, 1983 թ., էջ 50:

[8] Նույն տեղում:

[9] **Գ. Հովսեփյան**, Խաղբակեանք... հ. Բ, էջ 195:

[10] **Ի. Ղարիբյան**, Գլաձոր, էջ 52:

[11] Նույն տեղում, էջ 47:

[12] Նույն տեղում, էջ 54:

ցույց տրվեց մեջբերված հիշատակարանում: Իսկ Հովհաննես վարդապետի «Սարկավագ» կոչումը նրա համար ոչ թե աստիճան է հանդիսացել, այլ մականուն, ինչպես երևում է և նրա կենսագրական հետևյալ տողից. «Վարդապետն Յովհաննէս և անուն բարդ՝ Սարկաւագ»: Կենսագիրն այստեղ «բարդ անուն» ասելով, անկասկած, նկատի ունի մականունը[13]: Ժամանակագիր Սամվել Անեցու տապանաքարի վրա գրված է քահանա, որովհետև նրա եկեղեցական կոչումը քահանա էր: Այդ մասին Ղ. Ալիշանը գրում է. «Սամուէլ չի կոչուիր Վարդապետ, այլ սոսկ Երէց, բայց պատուաւոր «քահանայ կաթողիկէին Անւոյ» ըստ Կիրակոսի»[14]:

Ի. Ղարիբյանը նաև գրում է. «Լ. Խաչերյանը նկարագրելով Դավիթ Սասնեցու գործունեությունը Գլաձորի համալսարանում, առանց բավարար հիմքի նրա մահը դնում է 1328—29 թթ. միջև: Հարց է առաջանում՝ այդ դեպքում ինչո՞ւ ոչ 1322, 23, 24... և այլ թվերին: Չէ՞ որ 1321 թ. հետո նրա անունով մեկ չի հասել ոչ մի ձեռագիր կամ որևէ հիշատակություն նրա կենդանի լինելու մասին»: Ճիշտ է, փաստեր չկան պնդելու, որ Դավիթը մահացել է 1329 թ. և դժվար է հաստատ ասել, թե երբ է մահացել: Միակ ենթադրությունը կարելի է անել 1329 թ. մի ձեռագրի հիշատակարանից. «Յիշեցէք ի Քս. զարժանին յիշատակի զԴաւիթ ռաբունապետն ու զԿիրիոն սպասաւոր նորին» և «ուսուցչի վերասացեալ առնս Այ. սբ. ռաբունապետիս Կիրիոնի, սպասաւորի սբ. գերեզմանի ռաբունապետին Դաւթի, ի թուականութեանս Հայոց ՉՀԸ (1329)»[15]: Սա առաջին հիշատակարանն է, ուր հիշվում է Կյուրիոն ռաբունապետը: Մինչդեռ հայտնի է, որ Կյուրիոնը փոխարինել է Դավթին: Եվ եթե 1321 թ.-ից հետո Դավիթը չի հիշվում, ապա 1329 թ.-ից առաջ էլ որպես ռաբունապետ Կյուրիոնը չի հիշվում: Այնպես որ դժվար է հաստատ ասել, թե երբ է մահացել Դավիթը, և երբ է նրան փոխարինել Կյուրիոնը: Եղած փաստերը ցույց են տալիս, որ այն պիտի լինի 1329 թ. մոտ: Ս. Արևշատյանը և Ա. Մաթևոսյանը Կյուրիոնի մասին գրում են հետևյալը. «Կյուրիոն ռաբունապետ. առաջնորդ և ռաբունապետ Վերին Նորավանքի Դավիթ ռաբունապետի մահից հետո: Որպես մեծ ռաբունապետ հիշվում է մինչև 1340-ական թվականները»[16]: Ավելացնենք, որ Վերին Նորավանքի վարդապետներ Դավթի ու Արքայի մասին առաջին անգամ հիշվող հիշատակարանը Հովհաննես Օրբելի կողմից գրվել է 1302 թվականին, այսինքն Հայրապետի մահից 12 տարի հետո: Կարելի է ասել, որ Հայրապետի մահից անմիջապես հետո նրա դպրոցն սկսել են ղեկավարել Դավիթն ու Արքան (ըստ երևույթին նախ Արքան է շարունակել այդ գործը և հետո միայն նրան է միացել նաև Դավիթը, որը դասավանդել է նաև Գլաձորում): Իսկ 1329 թ. Դավթին փոխարինած Կյուրիոնը սկզբնական շրջանում հանդես է գալիս որպես գրիչ: Այն, որ 1329 թ.-ին Կյուրիոնը եղել է Վերին Նորավանքի ռաբունապետ, երևում է այդտեղ գրված մի հիշատակարանից .«...ի վարժապետութեան տանս արևելեաց մեծարանաշնորհ հռետորի Եսայեայ հօր և ուսուցչի վերասացեալ առնս Այ. սբ. ռաբունապետիս Կիրիոնի, սպասաւորի սբ. գերեզմանի ռաբունապետին Դաւթի, ի թուականութեանս հայոց ՉՀԸ (1329)»[17]: Կյուրիոնը հետագայում շարունակում է ձեռագրեր ընդօրինակելու շնորհակալ աշխատանքը, ինչպես երևում է մի «Ավետարանի» հետևյալ հիշատակարանից. «Փառք Քրիստոսի աստուածութեանն, որ ետ տկար մտաց և մատանց ջիլս և ժուժկալութիւն ժամանել յաւարտ աւետարանիս, ի թվաբերութեանս Հայոց ՉՁԲ. (1333).... Ի դպրապետութեանն մեծ վարժապետին և իմոյ անլուսաւոր կենացս լուսաւորչի՝ Եսայեա... ի գաւառիս Վայոձորոյ, ի մենաստանիս Վերի Նորավանքս կոչեցելոյ, ընդ հովանեաւ Մօրս լուսոյ և սուրբ Սիոնիս, ձեռամբ մեղսամակարդ անձին Կիւրիոնի»[18]: Նրանից մեկ են հասել հետևյալ ձեռագրերը.

1. 1311 թ.: «Յաղագս բնութեան մարդոյ եւ Յաղագս կպմության մարդոյ Գրիգորի Նիւսացւոյ»: Հիշատակարանում գրված է. «Զբաղմավեր անձն հիքոյս Կիւրիոնի՝ ծրոդի տորին, յիշեա ի թողութիւն մեղաց, և զՄխիթար քահանայ, և զխաչատուր կրօնաւոր, և զրաբունապետն իմ Յովհաննէս, ամէն»[19]:

2. 1321 թ.: «Ավետարան» Գրվել է Գլա-

[13] **Ա. Աբրահամյան,** Հովհաննես իմաստասերի մատենագրությունը, Երևան, 1956 թ., էջ 24 (նաև՝ Ղ. Ալիշան, Սարկավագ Սոփեստես). տե՛ս «Յուշիկք», հ. Բ, էջ 281):

[14] **Ղ. Ալիշան,** Հայապատում, Վենետիկ, 1901 թ., Ա մաս, էջ 100:

[15] «Մայր ցուցակ ձեռագրաց սբ. Յակոբեանց», հ. Դ, էջ 54:

[16] **Ս. Արևշատյան, Ա. Մաթևոսյան,** Գլաձորի համալսարանը..., նույն տեղում:

[17] Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հ. Դ, էջ 54:

[18] **Լ. Խաչիկյան,** ԺԴ դարի... հիշատակարաններ, էջ 257:

[19] Նույն տեղում, էջ 83:

ձորում. «Արդ, գրեցաւ սա ի թվաբերութեան մերոյ հայկազեան տօմարի ՉԿ (1321) ... ի վարժապետութեան սուրբ և բազմերջանիկ քաջ հռետորաց Հայոց երկուց ամոլաց ճըշմարիտ հաւատոց մերոց՝ Դաւթի և Եսայեա: Ի հռչակաւոր և սուրբ մենաստան համալսարանիս Գլաձորոյ... ձեռամբ մեղսամակարդ և տարաշխարհիկ անձին՝ Կիւրիոնի սպասաւորի բանի, հրամանաւ և արդեամբք սրբամիտ և կուսակրօն քահանայի Մարտիրոսի»: Մի այլ էջի վրա, ստացող՝ Դաւիթ. «Նուաստս ի շարս ուսուցչապետաց Դաւիթ, շնորհեցի զսուրբ աւետարանս սուրբ Աստուածածնին և առաջնորդի սուրբ անապատին՝ Մկրտչին՝ հոգևոր որդեկին իմոյ, ի յիշատակ հոգոց իմոց...»[20]:

3. 1333 թ.: «Ավետարան»: Գրվել է Վերին Նորավանքում: Հիշատակարանում. «Փառք Քրիստոսի աստուածութեանն, որ ետ տկար մտաց և մատանց ջիլս և ժուժկալութիւն ժամանել յաւարտ աւետարանիս, ի թվաբերութեանս Հայոց ՉՁԲ. (1333)... ի դպրապետութեանն մեծ վարժապետին և իմոյ անլուսաւոր կենացս լուսաւորչի՝ Եսայեա ... ի գաւառիս Վայոձորոյ, ի մենաստանիս Վերի Նորավանս կոչեցելոյ, ընդ հովանեաւ Մօրս լուսոյ և սուրբ Սիոնիս, ձեռամբ մեղսամակարդ անձին Կիւրիոնի»[21]:

4. 1338 թ.: «Գիրք պիտոյից»: Հիշատակարանում. «Զգերաբուն բանի սպասաւոր և զբարեաց արժանաւոր յիշատակի՝ զրաբունապետն մեր զԵսայի (Նչեցի) աղաչեմ յիշել ի մեղաց թողութիւն, հանդերձ զարմիւք իւրովք...»[22]:

Ամենայն հավանականությամբ, Կյուրիոնին իր ռաբունապետը՝ Եսայի Նչեցին է ուղարկել Վերին Նորավանք՝ ղեկավարելու տեղի կրթօջախը:

Այնուհետև Վերին Նորավանքի դպրոցի մասին մեկ տեղեկություններ չեն հասել մինև 1490-ական թվականները: 1495 թ. մի «Ավետարանի» հիշատակարանում Վերին Նորավանքի ռաբունապետ է հիշվում Աբրահամը. «...Արդ, ըստ նոյն ապացուցի աստուածայնոց իրաց հետևեալ աստուածաբան և քաջ ռաբունապետն Աբրահամ... ստացաւ զաստուածախաւս մատեանս, որ յորջորջի աւետաւոր երկնից արքայութեանն, ի յիշատակ հոգւոյ իւրոյ և ի ժառանգութիւն ընդանեաց իւրոց կենդանեաց, և ի փրկութիւն հոգոց ննջեցելոց իւրոց, հօրն իւրոյ, և հաւրեղբաւրն՝ աստուածաբան վարդապետին Աւագտիրի, և մաւր իւր Գոնձին. և աւագ եղբաւրն Դաւիթ քահանային, և միւս եղբաւրն բարեմիտ և կուսակրաւն աբեղային Զաքարիայի, և կրտսեր եղբաւրն իւր՝ միայնակեաց և սպասաւոր միաբանիցն Յակոբին, և այլ միւս եղբաւրն աշխարհի՝ Մարգարին, և եղբաւր որդոյն իւր՝ դեռաբոյն և կուսակրաւն աբեղայի Վարդանիսի...»[23]: Աբրահամն սկզբնական շրջանում հանդես է գալիս որպես գրիչ ու միաժամանակ մանրանկարիչ: Նրա ավագ եղբայր Դավիթը՝ Սրկողունիքի Ս. Գևորգ վանքի ավագերցը, հետևյալ վկայությունն է թողել նրա մասին 1478 թ. գրած մի «Շարակնոցի» հիշատակարանում. «...Արդ, գրեցաւ եղանակաւոր տառս ձեռամբ Դաւիթ քահանայի, ի գիւղս որ կոչի Սըրկղունս, ընդ հովանեաւ սուրբ Գէորգի և սուրբ նշանացս, առ ոտս քրտնաջան, արի և քաջ Աւագտէր վարդապետի՝ հօրեղբօրս մերոյ, և իմ եղբարցս՝ տէր Զաքարիա աբեղային և տէր Աբրահամ նկարողին: Ի թուականութեան Հայոց ՋԼԶ. (1487)»[24]: Աբրահամի նկարները, ինչպես գրում է Լ. Խաչիկյանը[25], ինքնատիպ են և կատարված են մեծ վարպետությամբ: Աբրահամն իր կրթությունը ստացել է իր հորեղբոր՝ Ավագտեր վարդապետի մոտ, հավանաբար՝ Բոլորաբերդում: «Փառք... որ ետ կարողութիւն անարհեստ գրչի անարժան Աբրահամի սոսկ անուամբ աբեղա կոչեցեալ և ոչ գործով, զի գրեցի զտետրակս և ոսկով զարդարեցի և կապեցի, ի վայելումն անձին իմոյ, և հոգեւոր հօրս և ուսուցչի և հօրեղբաւրս իմ Աւագտէր վարդապետի, և եղբարց իմոց տէր Զաքարին, Յակոբին, ի աւաք եղբաւրն իմ տէր Դաւիթ աւագիրիցու և փիլիսոփայի, և Մարգարին, և զսակաց նոցին: Եւ յիշատակ մեզ և ծնողաց մերոց: Գրեցաւ ի յանապատս Բոլորաձորոյ, ի թվ. ՋԼԳ. (1484)»[26]: Հիշատակարանը գրվել է 1484 թ.-ին: Երկու եղբայրները՝ Դավիթն ու Աբրահամը, սովորելով իրենց հորեղբոր՝ Ավագտերի մոտ, տարբեր դպրոցներում աշխատում են որպես ռաբունիներ: Դավիթը Սրկողունիքում դասավանդում է փիլիսոփայություն («Դաւիթ աւագիրիցու և փիլիսոփայի»): Դավթի հետ Սրկողունիքում է հիշվում նաև Ավագտերը («...Ի գիւղս որ կոչի Սըրկղունս... առ ոտս քրտնաջան, արի և քաջ Աւագտէր վարդապետի...»[27]): Իսկ Աբրահամը գնում է Վերին Նորավանք և դա-

[20] Նույն տեղում, էջ 166—67:

[21] Նույն տեղում, էջ 257:

[22] Նույն տեղում, էջ 302:

[23] Լ. Խաչիկյան, ԺԵ դարի... հիշատակարաններ, Երևան, 1967 թ., հ. Գ, էջ 214:

[24] Նույն տեղում, էջ 97:

[25] Նույն տեղում, էջ 214:

[26] Նույն տեղում, էջ 57:

[27] Նույն տեղում, էջ 97:



ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԽԱՉՔԱՐԵՐԻՑ

սավանդում այնտեղ Աստվածաբանություն և, հավանաբար, գրչություն ու մանրանկարչություն: Աբրահամը եղել է Վերին Նորավանքի ռաբունապետը («...արդ, ըստ նոյն Աստուածայնոց իրաց հետևեալ Աստուածաբան և քաջ ռաբունապետն Աբրահամայ...»): 1495 թ. ընդօրինակված «Ավետարանի» մի էջի վրա 1502 թ. նույն Աբրահամի ձեռքով գրված է. «Զբարեմիտ և վերկիւղածն յաստուծոյ կԱվիկն, որ շատ կու ծառայէ մեզ, և ետ ընծա սուրբ Աւետարանիս. յիշեցէք ի Քրիստոս թվ. ՋԾԱ. (1502)[28]: Աբրահամի մահվան մասին տեղեկություն չունենք: Մի բան պարզ է, որ 1502 թվականին նա դեռ կենդանի էր և շարունակում էր ռաբունապետի իր աշխատանքը Վերին Նորավանքում:

Այսպիսով, մինչև Ներսես Մշեցու հաստատվելը, Վայոց Ձորում գործել է ռաբունապետ Հայրապետը՝ վարդապետներ պատրաստելով շրջակա դպրոցների համար: Այնուհետև Վերին Նորավանքի վարդապետները սերտ կապի մեջ են եղել Գլաձորի համալսարանի հետ: Գլաձորից Վերին Նորավանք ուղարկված Դավիթ և Կյուրիոն ռաբունիները ամուր հիմքերի վրա են դրել այդ կրթական օջախը, ներմուծելով Գլաձորյան ավանդույթները: Իսկ Գլաձորի համալսարանի անկումից հետո Վայոց ձորում շարունակել է գործել Գլաձորյան ավանդույթներն ընդօրինակած Վերին Նորավանքի վարդապետները:

Կրթական գործը շարունակելու համար այն իր շուրջն է համախմբել գավառի բոլոր մանր ու մեծ դպրոցները: Վերին Նորավանքը սերտ կապերի մեջ է եղել հատկապես Գլաձորի, Ամաղու Նորավանքի, Բոլորաբերդի, Գնդեվանքի ու Սրկողունիքի կըրթարանների հետ: Այստեղ դասավանդել են փիլիսոփա, աստվածաբան, մանրանկարիչ մականունները կրող վարդապետներ կամ պարզապես մեծ ռաբունիներ ու ռաբունապետեր: Դա վկայում է, որ ուսման ծրագիրը շատ չի տարբերվել Գլաձորի համալսարանի ծրագրից, մանավանդ, որ այդտեղ դասավանդել են նաև Գլաձորի սաները: Վերին Նորավանքից մեզ են հասել հետևյալ ձեռագրերը.

1. «Մեկնութիւն ժողովողին Գրիգորի Նիւսացւոյ»: 1303 թ.: Վայր՝ Արատես: Գրիչ՝ Խաչատուր Երզնկացի: Գրվել է Ստ. Տարսայիճի պատվերով[29]:

2. «Ավետարան»: 1310 թ.: Վայր՝ Յարատես վանք: Գրիչ՝ Պողոս վարդապետ: Գրվել է «...Գերապարդ և գերամաքուր սուրբ և երանաշնորհ» Տերունական քահանայի պատվերով[30]:

3. «Ավետարան»: 1312 թ.: Վայր՝ Վերի Նորավանք: Գրիչ՝ Բեներ[31]:

4. «Ավետարան»: 1318 թ.: Վայր Նորավանք: Գրիչ՝ Մաթե[32]:

5. «Ժողովածոյ մեկնութեանց»: 1329 թ.: Վայր՝ Վերի Նորավանք: Գրիչ՝ Ստեփանոս[33]:

6. «Ավետարան»: 1333 թ.: Վայր՝ Վերի Նորավանք: Գրիչ՝ Կյուրիոն[34]:

7. «Մաշտոց»: 1470 թ.: Վայր՝ Վերի Նորավանք: Գրիչ՝ Ոհաննէս[35]:

8. «Ավետարան»: 1476 թ.: Վայր՝ Վերի Նորավանք: Գրիչ՝ Պողոս (Շատիկ առաջնորդի անունը հիշող հիշատակարանն է)[36]:

9. «Մաշտոց»: 1451 թ.: Վայր՝ Նորավանք (Վերի՞ն): Գրիչ՝ անհայտ[37]:

10. «Ավետարան»: 1484 թ.: Վայր՝ Վերի Նորավանք: Գրիչ՝ Գրիգոր[38]:

11. «Շարակնոց»: 1490 թ.: Վայր՝ Վերի՝ Նորավանք: Գրիչ՝ Աբրահամ (հիշատակարանում Վերին Նորավանքի առաջնորդ է հիշվում տեր Անանիան)[39]:

12. «Ավետարան»: 1495 թ.: Վայր՝ Վերի Նորավանք: Գրիչ՝ Գրիգոր (գրել է Աբրահամ «Աստուածաբան և քաջ» ռաբունապետի պատվերով)[40]:

13. «Ավետարան»: 1515 թ.: Վայր՝ Յարատենց: Գրիչ՝ անհայտ[41]:

14. «Ավետարան»: 1586 թ.-ից առաջ: Վայր՝ Արատես: Գրիչ՝ Սրապիոն[42]:

---

28 Նույն տեղում, էջ 216:

29 Լ. Խաչիկյան, ԺԴ դարի... հիշատակարաններ, էջ 17:

30 Նույն տեղում, էջ 66:

31 Նույն տեղում, էջ 90:

32 Նույն տեղում, էջ 149:

33 «Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց», հ. Դ, էջ 53:

34 Լ. Խաչիկյան, «ԺԴ դարի ... հիշատակարաններ, էջ 257:

35 Լ. Խաչիկյան, «ԺԵ դարի... հիշատակարաններ, Երևան, 1958 թ., հ. Բ, էջ 298—299:

36 Նույն տեղում, էջ 398:

37 Նույն տեղում, հ. Գ, էջ 420:

38 Նույն տեղում, էջ 57:

39 Նույն տեղում, էջ 147—48:

40 Նույն տեղում, էջ 214:

41 Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 7756:

42 Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 3867:



ՄԻՍԱՔ ՄԵԾԱՐԵՆՑ
(Ծննդյան 100-ամյակի առթիվ)

«Նախնականության բաղձանք մը..., առհավության հեռալուր ձայն մը... կը կոթողվի մեկեն հոգիիս մեջ: ...Նարեկացի՛ն է. սրբության իղձին կրակովը վառված անշեջ մորենին, մեծ աղոթասաց բանաստեղծը...»: Ներշընչման ինքնամոռաց պահերին այսպես է վերապրում Միսաք Մեծարենցը իր անխառն արյունակցությունը հայ քնարերգության հավարամյա նախահոր հետ: Գրեթե նույն տեսիլքի հաճախանքն է ապրում մեր օրերի ընթերցողն ամեն անգամ, երբ առիթ է ունենում մերձենալու մեծարենցյան տաղերի վարմանալի աշխարհին: Մեր քերթության երկրորդ հավերժական պատանին իր ժամանակի հեռվից զգացել, այրվել ու հանգել է ամեն մեկիս փոխարեն: Սա բանաստեղծության անմեկնելի հրաշքներից է, որ հնարավոր է դարձնում ժամանակների անպարագիծ խաղը, որ կոչվածների ճակատն արտախուրում է անմահության պտակով...

Երբ հարյուր տարի առաջ, հունվարյան մի օր, մեծահամբավ Ակնի Բինկյան գյուղում, Մեծատուրյանների բակմանդամ ընտանիքում, ծնվեց ևս մի արու կավակ, ոչ ոք, անկասկած, դա չընդունեց իբրև իրադարձություն: Նորածինը մկրտվեց Միսաք անունով, և ձեռներեց հայրը՝ Կարապետ աղան, գուցե և արդեն մտովի որդու համար օգտաշատ ապագա էր նախապատրաստում: Բայց բնությունն ինքն է տնօրինում իր ընտրյալների ճակատագիրը: Մոր կողմից ապագա բանաստեղծը սերում էր Բինկյանում հայտնի Ավգենց գերդաստանից, ուր ավանդական համարում ունեին երգը, գիրն ու բանաստեղծությունը: Նրա մայրն ինքը, ժամանակակիցների վկայությամբ, բակմաշնորհ երգիչ ու ասացող էր: Նախախնամությունը կարծես հատուկ հոգացել էր, որ հրաշամանուկը մայրական կաթի հետ ընդունի նաև հայրենի բանահյուսության հոգեղեն սնունդը: Հետո նա պիտի անցներ ուսումնառության տասներկու տարիների երկար ու ձիգ ճանապարհ՝ Բինկյանի Մեսրոպյան, Սեբաստիայի Սահակյան, Մարզվանի Անատոլիա, Ղալաթիայի Կեդրոնական վարժարաններում, անխոնջ ինքնակրթությամբ բակմիցս պիտի ճաշակեր խմացության բերկրանքը, բայց նրա հոգու աներկրորդ ուսուցիչը այնպես էլ պիտի մնար սիրելի մայրը՝ իր «տոհմիկ երգերով» ու «անմեռ անտունիներով», հետագայում ևս, հայրենի բնաշխարհից հեռու, Պոլսում, օտար աղմուկներից մեկուսանալով, հաճախ «Սամաթիո իր սենյակին մեջ, Բինկյանա ծառ ու ծեղերուն, հողին ու աղբյուրներուն կարոտովը տարված, մոտը կ՚առներ պատանի Միսաքը ու կը վիպեր անոր հմայքը Կապույտ դարին ու ֆշշացող Եփրատին, Աստվածամոր վանքին ու գիշերվան ջրտուքին, սափորաբարձ աղջկան և ձայնված **շերին** ու **հարենին**»: Ասում են՝ տարիներ անց զառամյալ Իսկուհի նենեն, գորովագին թերթելով վաղամեռիկ որդու երգերի գիրքը, հուզված շշնջացել է. «Մա՛նչս, աս իմ երգն է»: Եվ նա իրավունք ուներ. մայր բնությունը հարապատ մոր մտերմիկ շնչով էր մանկան հոգու մեջ հրահրում բանաստեղծության հուրը, որ շուտով պիտի բռնկվեր:

Ոչ ոք չի կարող կռահել բանաստեղծների ծնունդի ճշգրիտ պահը: Բայց այդ ծնունդը արևածագի պես անխուսափելի է, քանի որ տեղի է ունենում ամենապոր կարիքի անբեկանելի բերմամբ: Ունե՞ր, արդյոք, պատանի Մեծարենցը այդ անհրաժեշտության գիտակցությունը, երբ թոթովում էր իր անդրանիկ երգափորձերը, դժվար է ասել: Բայց որ «Ծիածանի» հեղինակն արդեն վիսպես հասու էր իր բանաստեղծական առաքելության խորհրդին, անկասկած է. ապացույց՝ հենց իր՝ բանաստեղծի հավաստումը, թե՝

«**Ծիածան**՝ մութին մեջ խարխափանք մը չէ. նշմարված ճամփաներուն լույսը կը թրթռա հոն»:

Գավառցի անհայտ պատանին միանգամից պիտի կանգներ մայրաքաղաքի հայ գրական կյանքի կենտրոնում և ստիպեր խստապահանջ քննադատությանն իր մասին գրել. «Մեկ տարվան մեջ երկու հատոր, երկու հարձակում և արդեն հափշտակված է արդի պոլսահայ բանաստեղծության գլխավոր մեկ աթոռը»: Նորահայտ բանաստեղծի աղմկալի հաջողությունը մասամբ էր միայն պայմանավորված նրանով, որ աղետալի 96-ից հետո Պոլսի գրաքննական պատնեշը այդ հայ մտավորական միջավայրը գրեթե իսպառ մեկուսացրել էր մեծ աշխարհից, որ մարդիկ անհաղորդ էին դեռ «Դյուցազնորենի» հեռավոր շեփորանվագներին... սակայն, առավել կարևոր էր մի այլ հանգամանք. հուսահատեցնող այդ ամլության, այդ թվացող անշարժության խորքում հայրենի երգի կենսունակ երակը շարունակում էր տրոփել, միայն զգայուն ականջ էր պետք՝ որսալու համար մոտալուտ վերածնության մեղեդին: Մեծարենցն այդ ամենալուր ականջը եղավ: Նա իր «նոր ու նորանշան» տաղերով վերստին հայտնագործում էր հայ քնարերգության հին հավատամքը՝ խավարն անցողիկ է, լույսն է հավերժականը, չարի սահմանը ջնջվում է բարու անսահմանությամբ, եսն իրեն կարող է հաստատել միայն անեսության մեջ: Պատանի Մեծարենցը հայ բանաստեղծության այս նախնական ոգին ապրում է ոչ միայն որպես ներշնչանքի ենթագիտակցական պահ, այլ նաև որպես այրականորեն հասուն միտք. «...Չէ թե միայն **Ծիածանի** հեղինակը, այլ մեր բոլոր բանաստեղծներն ալ մերկանալու են այլևս եսին տաղտկալի ոչնչաբանություններեն. մեկդի թողունք քիչ մը անմարդկային անձնաբանությունները, բաբախելու համար Բնության սիրով, բանաստեղծը բնության ցոլացումը պետք է ըլլա, թե ոչ բանաստեղծ չէ իրապես. քերթվածները իբրև բառ պետք է ունենան տերևին թրթռումը, թռչունին դայլայլը, մարգերուն գորովը, դաշտին ու լերան խշտանույն գոռոյությունը: Բանաստեղծին ձայնը տիեզերական հարաբերականության մը լարը պետք է ըլլա, բոլոր գոյություններուն համադրական թրթռումովը տրոփուն»: Այսպիսի ընդհանրացումը՝ բոլոր ժամանակների համար ճշմարիտ ու դասական, վայել է միայն իսկական մեծերին:

Համայնացման այս կարոտը մեծարենցյան տաղերում խորապես անձնական ճակատագիր է: Անողոք հիվանդությամբ ողբերգականորեն դատապարտված բանաստեղծի եսը կարծես ձգտում է հաղթահարել իր մարմնեղեն գոյության սահմանափակությունը, ոգիանալ ու հավերժանալ: Այս գիտակցությունը, սակայն, իմաստասերի խաղաղ ներհայեցություն չէ, այլ մարդկային ապրումների կենդանի խռովք.

...Ա՜հ, քիչ մը լո՜ւյս, ժպի՜տ մը՝ որ կյա՜նք ինձի պիտի տար
Եվ փարատեր լքումն՝ որ կը ծանրանա իմ ուսին:

Եկո՜ւր, արդեն կը մսի՜ն հեք երակներն իմ որբուկ,
Ա՜լ հոգնած եմ անցնելեն կածաններե մենավոր,
Անձրև կ'իջնե հոգվույս մեջ, կզգամ մահվան սրսփուք
Ձեռքս է պարապ մնացեր դատարկին մեջ սգավոր...

Բայց Մեծարենցի քնարական մեկնաբանությամբ անձնական ապրումները մարդկային հոգու պատուհաններն են՝ բացված դեպի անծայրածիր աշխարհը, դեպի գոյության անվախճան համանվագը: Այդ ճանապարհով եսը հանրայնանում է, նրա ներքնաշխարհի մասնավոր վերաճում է համընդհանուր կեցության, մարդկության ցավն ինքն է մասնավորվում անհատի ցավի մեջ: Այստեղ է, որ ճանաչելով բանաստեղծին՝ ընթերցողը ճանաչում է ինքն իրեն: Սակայն բանաստեղծ-ընթերցող հարաբերության խորհուրդն հաճախ իրագործվում է անսպասելի հակադրեցություններով: Այսպես՝ Մեծարենցի ամենատրտում ու սրտաբեկ երգերն անգամ ընթերցողին համակում են ինչ-որ թեթևության հոգեպարար լույսով: Եթե փորձենք էլ, հավիվ թե հնարավոր լինի մինչև վերջ պարզել այս երևույթի հոգեբանական հիմքը. դա բանաստեղծության այն գաղտնիքներից է, որ հասանելի է թերևս միայն ենթագիտակցությանը: Մի կարևոր հանգամանք, այնուամենայնիվ, կռահվում է. եթե քնարական բավմաթիվ այլ համակարգերում մահն հերքվում է բնությանը ձուլվելու, նրա հետ հավերժանալու միստիկ հավատով, ապա Մեծարենցի անձնական նվագներում մահն առհասարակ կյանքի ժխտումն է, անմահության հույսը ծագում է երկրի վրա կենդանի գոյի շարունակությունից: Ամեն ինչի արարման սկիզբը կենսատու արևն է, որին ուղղված պաղատագին աղոթքը հընչում է որպես կյանքի հաստատում .

Պատուհանիս հեղուկ ծոցին մեջ ինկած խելահեղ
Միջօրեի հեշտադալար ու բոցակապ երալին գիրկը,

Թևատարած կ'սպասե՛մ.
Պլե՛ կիս բոցեղեն ցանցերուդ մեջ,
Ու օրորե՛ ջերմագին,
Ու կիպանուտ համբույրիդ տակ
Թող հոգվույս մեջեն անցնին կարգավ
Մանուկներն ընդարմացած:
Մինչև որ
Կանգնիմ նորեն ու անցնի՛մ դարձյալ
Տարփանքիս խանդաղատ ճամփաներեն:
Հիվա՛նդ եմ, բարի՛ արև, շողա՛, շողա՛...

Արևի, լույսի պաշտամունքը հայ քնարերգության մեջ մեր ոգեղենի պատմության վաղնջական ժամանակներում արդեն վավերացվել էր արեգնածին Վահագնի աքանչելի առասպելով: Դարեր հետո մեծ Նարեկացին իր խռովահույզ հոգու տարակույսները պիտի փարատեր «արդար արեգակի» լուսեղեն բացարձակության մեջ: Եվ երբ դրանից էլ հազար տարի անց հայ բանաստեղծը, իր ժողովրդի գոյության օրհասական վայրկյանին, կրկին դիմում է ամենահաս լույսի ակունքին, ապա դա սոսկ ոգու վերածնություն չէ: Եղել է ժամանակ, երբ Մեծարենցին քննադատել են իրականությունից ենթադրյալ փախուստի համար: Տասնամյակներ էին հարկավոր, որպեսզի բացվեր նրա «անմեղ» նվագների խորքը: Եվ այսօր միայն զարմանալ կարելի է բնության կողմից անարդարորեն դատված բանաստեղծ հոգու տոկունության վրա, որ ոչ միայն արևային զորությամբ բեկանում էր սեփական ճակատագրի վճիռը, այլև խավարում խարխափող իր սերնդին վստահորեն ցույց էր տալիս հույսի ու լույսի ճանապարհը:

Եթե մեծարենցյան արևապաշտությունն առհասարակ բանաստեղծական ընկալման իմացական սկզբունք է, ապա արևն ինքը յուրաքանչյուր առանձին իրադրության մեջ երևում է նոր նկարագրով. այն մերթ կյանքի, բարության, լույսի խորհրդանիշ է, բայց և հաճախ իրեղեն գոյ է, որ կարող է փոխել իր դեմքն ու «բնավորությունը»: «Գետափի երգանքում» արևն իջնում, տարածվում է շրջակա ժայռերին, որոնց գրկում «գյուղն հանորեն կը մրափե», ամեն ինչ ընկղմված է «տիվանդորրի... մեղկ հեշտության» մեջ: «Տապի նոպաներ»-ում արեգակի նյութեղեն իրականությունը ընթերցողին հասնում է իբրև զգայական ու տեսողական փորձի որոշակի վիճակ՝ «արևահար ծերունի», «տոթական հրայրք», «բոցափայլ բացավայրեր», «ծաղիկներու հոգևարք», «լուսափողփող ժայռեր», «կիպանուտ անդորր», «բոցավառ երազ» և այլն: «Առտվան արևին մեջ» տաղում ցերեկային լուսատուն այլ «բնավորություն» ունի. շարժվող սայլերը, մշակը, բանվորն ու հոտաղը, արթնացող լիճը, «ցորենի ծովը կանաչ», «ճանճկեն մարմանդները», «սարերը կապտորակ», ռեհանի ու ծաթրինի տունկերը,—ամեն իր ու արարած արևածագի պահն ապրում է յուրովի, արևն ինքը նրանցից յուրաքանչյուրին առնչվում է մի առանձին անկրկնելի խորհրդով: «Տերունները կ'ըսեն...» բանաստեղծության մեջ արևի ընդհանուր էությունը ուղղակի չքանում է, մնում են երևութական դրսևորումները՝ որպես կենդանի աշխարհի անսահման բազմազանություն. այն մերթ ոսկի շող է, որ օծում է աղբերակերի «կապույտ ծաղիկը», «լիճերու պորտը», «գետակներն ափնածիր», մերթ «ոսկի թույր» է, որ սրսկվում է «բլուրներու կողն ի վար», փայփայում է «դաշտերուն վարագը», մերթ մատնահպում ու համբույր է՝ «մարիներուն ու մարդոց աղջիկներուն կաթնաձիր ճակատին» ... Այս ամենը հիմք է տալիս ենթադրելու, որ Մեծարենցի արևը հայրենի Բինկյանի արևն է, որ իբրև մանկության այրող հուշ՝ Իսկյուտարի մայրիների ստվերում անգամ շարունակում է կանչել բանաստեղծին:

Մանկության հիշատակներն առհասարակ շատ էական դեր են կատարել Մեծարենցի ստեղծագործական ճակատագրում: Դա խոստովանում է նաև բանաստեղծն ինքը, դեռ ցավ էլ հայտնում, որ «Ծիածանն» այնուամենայնիվ՝ «իր ծննդավայրին հարազատ ցոլացուցիչը չէ, կամ չէ կրցած ըլլալ՝ այնքան կանուխ բաժնված ըլլալով անկե»: Խստապահանջ այս ինքնադատությունն, իհարկե, անվերապահ չպետք է ընդունել, մանավանդ այսօր, երբ ոչ ոք արդեն չի տարակուսում, որ Մեծարենցի քնարերգությունն ամենից առաջ հենց հայրենի եզերքի հարազատ ու ներշնչված բանաստեղծական վերապրումն է: Ավելին. իրապատում այն ճշգրտությունը, որով բանաստեղծն ուրվագծում է հայրենի գյուղի համայնապատկերը, աշխարհագրական դիրքն ու բնական շրջադրությունը՝ նշանավոր շինություններով, հայտնի տեղավայրերով, դրանց հավաստի անուններով, կարող է անհարիր թվալ նրա երգերի մաքուր հոգեղեն մթնոլորտին: Բայց Մեծարենցի նման նրբաճաշակ քնարերգուն այդպիսի անխորհուրդ անդրադարձակություն հավիվ թե թույլ տար, նրա քնարական պատկերների իրապատում շերտը պարզապես ծառայում է իմաստային հատուկ նպատակի: Այն օրերին, երբ նա հյուսում էր ծննդավայրին նվիրված տաղերը, դրախտանման Բինկյանն այլևս չկար. կոտորածի խորշակը այստեղով էլ էր անցել՝ ետևից թողնելով ևս մի ավեր հայ բնակավայր... Պատանի բանաստեղծը չէր կարող

անտեղյակ լինել այս աղետին, նրա հոգին չէր կարող չընդվզել հրեշավոր իրողության դեմ, սակայն չէր կարող ուղղակի ու բարձրաձայն արտահայտել իր հոգու ցավը, ինչպես «Դյուցազնորեանի» **ապատ** քերթողը: Նրան մնում էր միայն կարոտով ու լուռ վրշտով վերակերտել մանկության կործանված աշխարհի պատկերը՝ ի դատապարտություն մարդկային անլուր ոճրագործության, ի հաստատումն հարազատ ժողովրդի կենսապաշտ ու արարող բնության:

Մեծարենցի գյուղական պատկերները հայտնաբերում են նաև աշխարհի հետ քնարական կապի մի այլ ուղղություն, որ արդեն միայն իր անկապտելի մենաշնորհն է, անկրկնելիորեն ինքնատիպ ու աննախադեպ: Այդ պատկերներում իրերի տվորական շարժումը արտասովոր բանաստեղծական է, քանի որ հենց այստեղ է լիարժեքորեն դրսևորվում մարդկային ստեղծագործ գոյության խորհուրդն ու գեղեցկությունը: Ահա, օրինակ, հայտնի «Ջրտուքը».

Գիշերային ջրտուքի ժամն է. լույսին մեջ
կայնած
Մշակն անքուն կ'սպասե, ոտքը բոպիկ,
բահն ուսին...
... Հոյհո՛յ, առուն կը հասնի ցանկապատին
քովերեն,
Եվ երգի քուղ մը կուգա պլլված իր գոտիին.
Սյուք մը կ'անցնի, տերևներ ծափ կը
կարնեն ցնծագին.
Վարեն ջուրը կը խայտա, կը խնդա լույսն
ալ վերեն:

Թումբերն անդուլ կը բացվին, ջուրն
անդադար կ'ոռոգե
Վարդենիքը, թթաստանն և ածուները բոլոր.
Բահի երկու հարվածով նայիս առուն կը
թեքե
Օձաձապուկ ձևերով հեղուկ իրանն իր ոլոր...

Այսպես հավաստի ու նրբագեղ հյուսվում է տեսարան տեսարանի ետևից, ուր ոչ մի մանրամասն հորինովի չէ. ոտաբոբիկ ջրվորը, առվի արծաթե ժապավենը, տեղ-տեղ առկայծող կրակները, բահի սնգոցը խիճերի մեջ, «դարձուցե՛ք, դարձուցե՛ք» կանչը, «արիշին տակ» շեր երգող աղջիկը,—ամեն ինչ իրական է, ճշգրիտ, առարկայական: Սակայն բանաստեղծական խորատեսության պայծառացման ակնթարթին իրերն սկսում են ապրել վերերկրային կյանքով: Ջրտուքի ծանոթ աշխատանքային պահը վերածվում է խորհրդավոր արարողության: Մանրամասների մի այլ շարք՝ «անրջային հյուսվածքով» ստվերներն օրորում են գյուղի անդորրը, վանքի բակում աղոթում են «տարորեն հսկա» ծառերը, «որոնց տամուկ շուքին մեջ» խորհրդագծվում է Աստվածամոր եկեղեցին, ջրվորին վերից վար ողողել է աներկրային լույսը և այլն, իրականի շուրջը և իրականի մեջ ստեղծում են անիրականի պատրանք: Առօրյա աշխատանքային անցուդարձը ձեռք է բերում ծիսական խորհուրդ: Մարդկային, բնության և աստվածային երրյակ տարերքները լցվում-լուսավորվում են միմյանցով, խորքից բխում է արարման բանաստեղծությունը, հնչում է երկրի և երկնքի մերձավորության մեղեդին...

Այս պահը յուրատեսակ անցումային վիճակ է Մեծարենցի քնարական աշխարհում, որից հետո ապրումների կշռույթը ենթարկվում է առավել հաստավալ մի ներդաշնակության. եան անեսության է ձգտում, անձնականը՝ անանձնականին, հունավորը՝ անհունին, վայրկյանը՝ հավերժության: Բանաստեղծի ձայնն իրոք սկսում է հնչել «տիեզերական հարաբերականության» խորքերից, հոգին իրոք սկսում է տրոփել «բոլոր գոյությունների համադրական թրթռումով»: Իր «Ծիածանի» կապակցությամբ բարեկամներից մեկի այն դիտողությանը, թե՝ «ինչո՞ւ տիեզերքի հոգիին հետ չես խոսակցիր», բանաստեղծը խորամտորեն պատասխանում է. «...Բայց դիտելու է, որ իմ գրեթե բոլոր քերթվածներս այդ մեծ խոսակցության կը նկրտին, որքան ալ իմինս չըլլա Աստուծո հետ դեմ հանդիման խոսակցություն, բայց ո՞չ ապաքեն **Աստված ամեն տեղ է. Ամրան Պարզ Գիշերվան** մեջ հծծած աղոթքս ու **Արևին** ուղղված պաղատանքս իրենն ներումն, հետևաբար և իրեն համար էր. ինչ երջանկություն, տերևի մը խարշափին մեջեն տեսնել տիեզերական կորության գաղտնիքը ու այդ փոքրիկ մասնավորեն մեկնիլ դեպի անհունը... Ուրախ եմ, որ երկրորդ հատորիս մեջ ավելի լայնորեն տեղ տված եմ այս գաղափարիս, հունավորը կը բարձրանա ու կ'երկարաձգվի դեպի անհուն, ինչպես արահետ մը՝ որ լերան կողն ի վեր մինչև կատարը կը հասնի. ինչո՞ւ սպասել ստորոտը ու կատարին գովքը կարդալ, փոխանակ հանձնվելու արահետին, որ պիտի բարձրանար»:

Բանաստեղծական իմաստասիրության այս տիպն, իհարկե, նորություն չէր, և Մեծարենցն, անշուշտ, ծանոթ էր այդ ուսմունքի պատմությանը, համենայն դեպս այդ է վկայում Կարլայլի և Էմերսընի անունների հիշատակությունը, այն էլ՝ քաղվածաբար: Ինքնատիպն ու անակնկալը աշխարհի հանդեպ համաստվածյան հայացքի բանաստեղծական նոր համարժեքն է, որ ստեղծում էր հայ

քնարերգուն: Այդ նոր քնարական հայեցակետից՝ «անհունը» բուն տիեզերական կեցության ամենօրյա բովանդակությունն է, յուրաքանչյուր պահր իմաստն ու արժեքը, որ սեփական գոյությամբ ամեն ակնթարթ հաստատում է հյուլեից սկսած մինչև «կայքըն ադամանդ աշխարհներուն»: «Սպասել ստորոտը և կատարին գովքը կարդալ»՝ կընշանակեր վերստին բախվել այնկողմնայինի միստիկ առեղծվածին, որ այդ օրերին անխնա հյուծում էր եվրոպական նորագույն արվեստի հիվանդ օրգանիզմը. «հանձնվել արահետին որ պիտի բարձրանար» դեպի կատարը, նշանակում էր շեղվել տրորված ճանապարհներից, գոյության հրաշքը, իրերի ներքին հարապատությունը վերապրել որպես կենդանի զգացմունքային վիճակ, մարդկային իրական կենսաձև: Իմաստասիրական վարկածի վերացական խորհուրդը հայ բանաստեղծի համար գործնական մարդասիրության փորձ է, բարոյական նկարագրի որոշիչ.

Բարձունքներու լայնշի ճամփան ըլլայի...
...Ու տանեի հոն հոգիներն սպառած...
...Ու ցուց տայի՝ լայն հորիզոն անուրջի՝
Բերրի դաշտերն ու ճամփաներն անմոռաց...
...Համայնական Զայնն ըլլայի, Զայնն անհուն
Ու ինծիղովս անպարագիծ ու կայտռուն
Քերթողներու լեցվեր հոգին ամայի:
...Եվ ըլլայի Լույս, Զև, Երանգ, Թրթռում,
Կանքի փաղփուն պատմուճանը ծիրանի,
Կենսաբաղձիկ հոգվույն երակն անպատում...
...Նշուլեի ես վայրկյաններ երջանիկ,
Արևաշող ժպիտ, ծափեր ու խնդում՝
Բանաստեղծի հոգիներու մեջ մենիկ:

Հայտնի «Բաղձանքն» է սա, հոգևոր կերպարանափոխության խնդագին հանձնառություն՝ հանուն մարդու բարոյական պատկերի անաղարտության: Դա, եթե կուզեք, գեղեցիկ քամահրանք էր՝ ժողովրդի գոյությանն սպառնացող ժխտողական կույր ուժերի հանդեպ: «Տո՜ւր ինծի, Տե՜ր...» քնարական պաղատանքն ունի նաև «Արդի մարդուն Հայր մերը» երկրորդ խորագիրը, ավելի ճիշտ՝ բանաստեղծը այս խորագրով մի ամբողջ շարք էր նախատեսել, որի միայն առաջին էջը հասցրեց իրագործել. հոգու ի՜նչ արիություն, նկարագրի ինչպիսի՜ զորություն պիտի ունենար հայ բանաստեղծը, որպեսզի մղձավանջային օրերի պաղ մշուշի մեջ կարողանար վերստին հնչեցնել, այն էլ՝ բովանդակ մարդկության անունից, հոգեվոր մաքրագործության տաք աղոթքը, ինչպես տասը դար առաջ մեծ Նարեկացին: Այս ոգով է շնչում անկուգական «Աստվածամա՜ր»-ը՝ «կաթնածաղիկ ու կապտերակ գիշերին մեջ պատկե՜ռն ըլլամ սրբակնացած ես համայնին...», բարության ու անձնվիրության այս լույսով է ողողված «Ըլլայի՜, ըլլայի՜...» շարքն ամբողջապես... Երբ մեծ Թումանյանն էր հոգին բաց անում համայնի հանդեպ՝ «ու հալվեի՜, ծավալվեի՜, ամենքի հետ լինեի», դա դեռ հասկանալի էր, քանի որ խոսում էր տասնամյակների փորձով բյուրեղացած իմաստնությունը: Բայց երբ մի պատանի է հանում սակավաթիվ երջանիկներին միայն մատչելի ավետյաց եղերքին, իրոք, դա չէր կարող ընկալվել այլ կերպ, քան բնության անմեկնելի ու փառավոր «վարտուղություններից» մեկը...

Իր «Ծիածանի» մասին Մեծարենցը գրել է. «Ամբողջ հատորը գրեթե սպասման երկարաձիգ գիշեր մըն է, աղերսանքներով, հոգերով, երբեմն ալ կայծկլտուն հույսերով լեցուն»: «Նավակներ»-ում բանաստեղծի անձկության բոցը վերաճում է սպասման հիվանդության՝ «անձուկին բոցը վիս պաշարեց. Սպասման հիվանդն եմ...»: «Կապույտ հածումներ»-ում «ապրշումե անրջանքի ժիր կախիլները» անդադար պտտվում են, ու անվերջորեն ձգվում է երականքի «դեղին, ճերմակ» թելը.

Խռովանքիս մեջ կ'սպասեմ, ո՞ւր, արդյոք
ո՞ւր պիտի հանգի
Կույս ու ծաղիկ երակներուս դեղձան
շառափը մարմրուն...

Ինչի՞ էր սպասում բանաստեղծը, իր օրերի վաղահաս վախճանի՞ն, իր ժողովրդի փրկության հրաշքի՞ն, թե՞ սպասումը, նրա քնարական մեկնաբանությամբ, տիեզերական լարման հոմանիշն է: Այսպես, թե այնպես՝ մի բան անկասկած է. Մեծարենցի տաղերում այդ համատարած սպասումը որքան խռովալի, նույնքան էլ տոնական է, համենայն դեպս նրա երկու գրքերում էլ այս ուղղությամբ է ձգվում զգացմունքների կենդանի հոսքը: Եթե «Ծիածանն» ու «Նոր տաղերը» մի պահ դիտելու լինենք իբրև քնարական պոեմ, ապա լիակատար իրավունք կունենանք «Զմրան պարզ գիշերը» ընդունել նախերգանք, իսկ «Ի՞նչ արբեցությամբ...»՝ վերջերգ: Իրականում հենց այդպես էլ կա: Եթե նախերգանքում «ցնորաբեր գիշերվա» առանձնության մեջ մենավոր մի հոգի էր մղվում դեպի համայնի, ապա վերջերգում արբեցման վիճակը վերաբերում է գոյի բոլոր ձևերին՝ որպես ապրելու ծարավ, բարձրագույն կյանքի ակնկալություն: Բանաստեղծական հայացքը պահի լուսավոր ակնթարթի մեջ խտացնում է գոյության համայնածավալ տոնահանդեսը, առանձնու-

թյունը՝ որպես կենսագործունեության սկիզբ, ինքնաբերաբար հերքվում է, յուրաքանչյուր իր ու արարած՝ «ամենն ալ կյանքին կ'ըմպեն հորդ ճաճանչ», «լույսը կը ծծեն, լույսը կը հծծեն»: Ամենակարևորը, սակայն, բանական ոգու թափանցող կենտրոնացումն է այս ամենի հանդեպ.

Ի՞նչ արբեցությամբ հոգին կ'ընդգրկե
Սլակն հորդահոս՝ ծայրիի բույրին,
Ծաթրին, անանուխ, վայրի ռեհանի
Բազմաբուրումներն ըստաշխ ու խունկե:
Ի՞նչ արբեցությամբ կ'ընդգրկե անի
Բոլոր ձևերն ու երանգներն ամեն,
Բոլոր գոյությանց, բոլոր տարրերուն
Իր մեջ անդրադարձ ծիածանումեն՝
Աստվածն՝ որ եկավ՝ չե՞ս գիտեր ուրկե...

Սա Մեծարենցի «բնութենապաշտ հակումների» լիակատար բացահայտումն է: Աստվածության սկիզբն ուրիշ բան չէ, քան հավիտենապես տրոփող կյանքի անվախճանությունը, զգացող անհատի ներքին աշխարհում «բոլոր գոյությանց, բոլոր տարրերուն» «անդրադարձ ծիածանումեն» գոյացող կենսական ուժի, ապրելու հրճվանքի մարդկային գիտակցումը: Բանաստեղծն ընկալում, ապրում, վերստեղծում է բնությունը որպես նրա մի մասնիկը՝ գիտակից մասնիկը. իր էությունն էլ ենթակա է նույն օրենքներին: Բնության «բացարձակ, անկապտելի Աստվածությունը» մարդու և աշխարհի անմիջական հարաբերությունն է՝ վերծ միստիկ մթություններից: Դա հոգևոր լիարժեքության հասած անհատի տոնական կեցությունն է տոնականորեն շքեղ բնության մեջ:

«Բանաստեղծը սիրո կը նմանի. և իր պաշտոնն է ճամփաները լուսավորել: Անիկա կ'առնե կը տանի յուրաքանչյուր հոգի իրեն ճակատագրված վայրերեն և ցույց կուտա անոր հրեշտակային գանձեր»,—վկայակոչելով այս միտքը Մեծարենցն ըստ էության բաց էր անում հենց իր բանաստեղծական առաքելության խորհուրդը: Նա իր տաղերով իսկապես լույսի արահետ էր բացում երկրից դեպի երկինք, արվեստի կոչումն հաստատում էր կյանքը թեթևացնելու և գեղեցկացնելու նվիրական սկզբունքի մեջ: «Տկճորին երգ» բանաստեղծության գեղջկական պարզ նվագարանը՝ արվեստի խորհրդանիշը, ոգի առած, երկնային տեսիլներով մաքրվելու և ազնվանալու պատգամ է հղում երկրային հոգեներից պարտասուն հոգիներին. «Ահա՛ կ'անցնի իրիկվան բամբիշը. ահա անցան իրիկվան օդանույշները... հերի՛ք հոդին նայեցաք, հերի՛ք անոր հակեցաք այսքա՛ն ատեն... անգամ մըն ալ վե՛ր նայեցեք, դեպի կապույտին փառքը, ու ձեր մտածումը, հողին գորշութենեն հափրացած, թո՛ղ սավառնի հոն... թող երակնիդ վպե՛ անծանոթ նպելի հուրիներուն ետևեն, դեպի անտես նիմփարաններ...»:

Պատանի բանաստեղծի հոգին ափեափ լի է կյանքով ու աշխարհով՝ «շա՛տ էր լեցուն հոգվույս, ո՛վ Տե՛ր, բազմազեղումն այս շըրջասփյուռ...»: Տիեզերքը նրա համար ամեն օր ակվող հեքիաթ է: Մարդկային «հավիտենական զգացումների ու մտածումների» վրայից նա սրբում է հնության փոշին, վերստին ծիածանի փայլ ու շուք է հաղորդում դրանց, նրա ներքին սուր տեսողությանը հասու է իրերի շարժման ամենանուրբ խաղը, նրա բանաստեղծական լեզուն գույնի, ձևի, ձայնի իսկական հրավառություն է, ուր հալվում-վերաձուլվում են բառերը՝ մաշվածները հայտաբերում են իմաստային անսպասելի եզրեր, նորաբանությունները համարձակ հաստատում են գաղափարի «եռանդուն, առաջխաղաց ձիերի» իրենց իրավունքը, առհասարակ բանաստեղծը, «նախնի մատենագրի» պես, գիտե «ծովաձայն հնչեցնել» և «ծիծաղախիտ ժպտեցնել» բառերը...

Բայց յուրաքանչյուր արվեստագետ ունի գեղեցկության իդեալի և դրան հասնելու իրական հնարավորությունների բախման իր խոռվքը: Բացառություն չէ նաև Մեծարենցը: Որքան ավելի է մերձենում նա բանաստեղծության դժվարամատույց բարձունքներին, այնքան ավելի տանջալի է դառնում կատարելության կարոտը. «...Բայց չգտա դեռ անսահման բառը, որ դյութական բալիքի պես պիտի բանար ինձի այս փակ դուռները՝ ճամփաներուն վրա, ծառերուն տակ, ամբոխին մեջ... Ո՞հ, ըսեք, ըսե՛ք ինձի գունագեղ անսահման բառը՝ այս իրիկուն...»: Մեծարենցի ամբողջ կարճատև կյանքը այդ «գունագեղ անսահման բառի» տառապագին որոնումն էր: Ամեն որոնում, սակայն, գեղեցիկ է հայտնագործություններով, դրանք են բանաստեղծի ապրած օրերի ամենահրապուրիչ պահերը, որ բառերի մոգությամբ ու խոսքի հրաշքով փոխանցվում են հետնորդներին: Հենց դրանով էլ «Ծիածանի» և «Նոր տաղերի» պատանի հեղինակը դառնում է սերունդների մշտական ուղեկիցը:

ՎԼԱԴԻՄԻՐ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ՌԱՖԻԿ ՍՈՒՐԵՆԻ ԱԲԳԱՐՅԱՆ

ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐԱՀԱՅՏ ՀՈՒՇԱՐՁԱՆ

Ներկայացվող հուշարձանը գտնվում է պատմական Հայաստանի Սյունիքի Աղահեճ[1] գավառում, ներկայիս Ադր. ՍՍՀ Լաչինի շրջանի Լաչին շրջկենտրոնից 15 կմ դեպի հյուսիս-արևմուտք, Աղավնո[2] (այժմ Հագարի) գետի Աղ-Օղլան վտակի ձախ ափին:

Երբեմնի վանքից, որի շինությունների հետքերը այժմ էլ նշմարվում են, պահպանվել է միայն եկեղեցին: Դատելով ավերակներից, հին հայկական գյուղը փռված է եղել վանքի շրջակայքում: Նրա ոչ այնքան մեծ տարածքը արևելքից պատնեշվում է Սյունիքի բնությանը հատուկ սրածայր ժայռապանգվածներով: Արևմուտքից եզերված է հյուսիսից հարավ ձգվող և Աղ-Օղլան վտակի հովիտը դուրս եկող ձորով, որի արևելյան լանջի բարձունքում դեռ հեռվից ուրվագծվում է կիսավեր եկեղեցին:

Թե՛ գյուղի և թե՛ վանքի մասին մեզ ծանոթ պատմական աղբյուրներում և մասնագիտական գրականության մեջ տեղեկություններ չկան[3]: Տեղում արձանագրություններ չհայտնաբերվելու պատճառով հայտնի չէ նույնիսկ եկեղեցու անվանումը:

Եկեղեցին կարելի է դասել վաղ միջնադարում (5—7-րդ դդ.) Հայաստանում լայն տարածում ստացած ներքին խաչաձև կենտրոնագմբեթ փոքր հուշարձանների տիպին[4]: Դրանք, ըստ հատակագծային հորինվածքի, բաժանվում են երեք խմբի՝ քառախորան, եռախորան, միախորան: Խորան անվանումը տրվում է ներքին հատակաձևում կոր եզրագծով հենախորշին[5] (խաչաթևին):

Դիտարկվող հուշարձանը իր երկխորան[6] բնույթով նշված տիպի մեջ նոր խումբ է կազմում և առայժմ լինելով միակը, մեծ հետաքրքրություն է ներկայացնում:

Եկեղեցու ուսումնասիրությունից պարզվում է, որ այն կառուցվել է վաղ միջնադարում, հետագա դարերում հորինվածքի փոփոխություն չի եղել, և հուշարձանը, թեև լուրջ վնասվածքներով, բայց անաղարտ վիճակում հասել է մեզ: Նորոգումների հետքեր նկատվում են միայն ճակատային մասերում: Համարյա ամբողջովին փուլ է եկել հարավային պատը, որի հետևանքով բավականին տուժել են հարավային խաչաթևի և ավանդատան թաղերը: Գմբեթից պահպանվել են թմբուկը և արտաքուստ այն վերևից երիզող քիվից հատվածներ (հյուսիս-արևմտյան և հյուսիս-արևելյան մասերում), իսկ ծածկը փլվել և թափվել է աղոթասրահի ներսը: Ավերածությունների ենթարկվել է նաև արևելյան ճակատը, որտեղ ստորին մասի քարերը մեծ շերտով հանված են, որի հետևանքով էլ հյուսիսային ավանդատունը արևելքից բացվել է: Կիսով չափ փլված են արևելյան և հյուսիսային հենախորշերի գրմբեթարդները: Չորս ճակատներում էլ վերնամասերի քարերը թափված են, և գրեթե ամբողջությամբ քանդված են գմբեթատակ արտաքին քառանկյան անկյունները: Ընդհանուր առմամբ լավ վիճակում են արևմտյան խաչաթևի թե՛ ներքին և թե՛ արտաքին ծավալները:

Եթե եկեղեցու հիմնական պանգվածը շինված է կոպտատաշ որձաքարով, ապա կառուցվածքային տեսակետից կարևոր հանգույցները՝ գմբեթակիր կամարները և նրանց հիմքերը, որմնասյուները, գմբեթարդները, թաղերը, առագաստները և տրոմպները, թմբուկը շարված են նույն տեսակի սրբատաշ քարերով: Լավ մշակված քարերով են շարված նաև պատերի, մուտքերի և պատուհանների կողամասերը, որոշ հատվածներ ճակատներում, ինչպես նաև ավանդատների կարևոր հանգույցները: Որմնասյուների հիպոստները և վեղարատակ քիվը ունեն պարզ



Եկեղեցու հատակագիծը

տրամատ: Եկեղեցու ներսը եղել է սվաղված: Սվաղի կգալի մասը դեռևս պահպանվում է:

Շինարարական այն տեխնիկան, ըստ որի հուշարձանի կարևոր հանգույցները շարված են սրբատաշ, իսկ մնացած մասերը համեմատաբար վատ մշակված քարերով, կիրառվել է 5—7-րդ դարերում (Ծովիկ, Արտավազիկ) և լայն տարածում ստացել միայն հետագայում (հատկապես 9—11-րդ դարերի ճարտարապետության մեջ)[7]:

Եկեղեցու հատակագծի ներքին խաչաձև հորինվածքը (առանցքային չափերն են 7,95×8,35 մ.) կազմված է արևելյան պայտաձև, հյուսիսային կիսաշրջանաձև, հարավային և արևմտյան ուղղանկյուն հենախորշերով: Եթե արևելյան գլխավոր խորանը ունի որոշ ձգվածություն, ապա հյուսիսայինի և հարավայինի խորությունները մոտավորապես հավասար են, իսկ արևմտյանը կգալիորեն կարճ է մյուսներից, որի հետևանքով արևելք-արևմուտք առանցքի ուղղությամբ կենտրոնագմբեթությունը խախտված է: Արտաքինից արտահայտված է միայն արևմտյան խաչաթևը, իսկ մնացած երեքը ավանդատների հետ միասին շրջափակված են ուղղանկյուն եզրագծով: Արտաքին հատակաձևով հուշարձանը նմանվում է Սասունիկի Ս. Գրիգոր, Կոշի Ս. Ստեփանոս և Հնեվանքի եկեղեցիներին[8]:

Տաճարն ունի երկու մուտք՝ հարավային և արևմտյան: Եթե հարավային մուտքը, որի մի հատվածն է պահպանված միայն, հավիվ է ապացուցում իր գոյությունը, ապա արևմտյանը կանգուն է և ներսից ու դրսից վերջանում է հորիզոնական բարավորով: Ավանդատների կապը եկեղեցու կենտրոնական տարածության հետ իրականացված է հյուսիսային և հարավային հենախորշերից

Եկեղեցին հարավից



Հարավ-արևմտյան առագաստի բարձրաքանդակը

բացվող մուտքերով: Հետաքրքիր է, որ արևելյան և հյուսիսային հենախորշերը լուսամուտներ չունեն: Փոքր կենտրոնագմբեթ հուշարձաններից արևելյան խորանում լուսամուտ չունեն Լմբատավանքի, Նոր կյանքի, Բջնիի կառույցները[9], իսկ ավելի վաղ շրջանից՝ Ծիծեռնավանքի, Զարջարիսի, Կարենիսի, Արագածի (վեցաբսիդ) եկեղեցիները[10]:

Աղոթասրահը լուսավորվել է գմբեթի թմբուկից բացվող երեք լուսամուտներով (հյուսիսային մասում չկա) և արևմտյան հենախորշի մեկ լուսամուտով: Բացառված չէ, որ լուսամուտ է բացված եղել նաև հարավային հենախորշից: Բոլոր լուսամուտներն էլ ներսից և դրսից ավարտվում են կիսաշրջանաձև կամարով:

Կառուցողական յուրահատուկ առանձնահատկություններ ունեն ավանդատները: Դրանք արևելյան մասում խորանով վերջացող փոքր չափերի քառանկյուն սենյակներ են, որոնցից հյուսիսայինում խորանի հատակագիծը ունի ընդգծված պայտաձևություն, իսկ հարավայինում այն կիսաշրջանաձև է: Կիսաշրջանաձև են նաև թաղերի կտրվածքները: Գմբեթարդների եզրակամարները ունեն շեշտված պայտաձևություն: Ավանդատները լուսավորվել են գմբեթարդներից բացվող մեկական լուսամուտներով, որոնք վերնամասում ավարտվում են կիսաշրջանաձև կամարով: Եկեղեցու ընդհանուր կառուցվածքի և ավանդատների միասնականությունը ապացույց է, որ այդ սենյակները հետագայի հավելվածք չեն և առկա են եղել հուշարձանի նախնական հորինվածքում:

Կառույցի հենախորշերը միմյանց հպվում են անմիջականորեն: Հատակագծում կոր եզրագծերով հենախորշերն ավարտվում են գմբեթարդներով, իսկ ուղղանկյունները՝ կտրվածքում երկկենտրոն թաղերով: Թաղերի և գմբեթարդների միաշերտ եզրակամարները ստեղծում են քառանկյուն այն հիմքը, որն իր վրա է պահում գմբեթը:

Հուշարձանի կարևոր առանձնահատկություններից է նաև այն, որ եթե այս տիպի հայտնի հուշարձաններում գմբեթակիր կամարների ուրվագծերը կա՛մ պայտաձև են, կա՛մ կիսաշրջանաձև[11], ապա այստեղ դրանք երկկենտրոն են: Բացի արևմտյանից, մյուս կամարներն ունեն թույլ արտահայտված պայտաձևություն: Հայ ճարտարապետության մեջ երկկենտրոն կամարները կիրառվել են դեռ վաղ միջնադարից: Հնագույն օրինակներն են Ծիծեռնավանքի եկեղեցին (5-րդ դ.)[12] և Բագարանի Ս. Թեոդորոս եկեղեցին[13] (7-րդ դ.): Հետագայում դրանք լայն կիրառություն են ստանում 10-րդ դարից սկսած (Արգինայի տաճար[14] (10-րդ դ.), Հոռոմոսի Ս. Հովհաննես եկեղեցի[15] (11-րդ դ.) Անիի Մայր տաճար[16] (11-րդ դարի սկիզբ) և այլն):

Բացառիկ հետաքրքրությունն է ներկայացնում գմբեթատակ քառանկյունից դեպի թմբուկի բոլորակ հիմքը փոխանցման երկու համակարգերի (առագաստային և տրոմպային) համատեղ գործադրությունը (արևելյան մասում՝ տրոմպներ, արևմտյանում՝ առագաստներ): Եթե առագաստների շնորհիվ կամարների վերնամասերով անցնող հորիզոնական հարթության մեջ գմբեթատակ քառանկյան հյուսիս-արևմտյան և հարավ-արևմտյան անկյունները միանգամից վեր են ածվում կորագծի, ապա մյուս երկու անկյուններում այդ նույնը արված է հյուսիս-արևելյան և հարավ-արևելյան մեկական մեծ տրոմպների վրա երկուական փոքր տրոմպների ավելացումով: Քանի որ գմբեթակիր կամարների տարբեր թռիչքների հետևանքով գմբեթատակ քառանկյունը ստացել է ոչ թե քառակուսու, ինչպես սովորաբար լինում է, այլ արևելք-արևմուտք առանցքով ձգվածություն ունեցող սեղան, բնականաբար թմբուկի ներքին հատակագիծն էլ շրջանագծի փոխարեն էլիպսի ձև է ստացել:

Վաղ միջնադարում երկու փոխանցումների համատեղ կիրառման փաստ կա ի դեմս Նոր Կյանքի եկեղեցու[17] (6-րդ դ.), սակայն այդտեղ դրանք գործադրվել են գմբեթատակ քառանկյան միևնույն հանգույցում (ստորին մասում՝ տրոմպ, վերևում՝ առագաստ): Եթե հաշվի առնենք նաև այն, որ 6—7-րդ դարերում առագաստների կիրառման օրինակները սակավաթիվ են (ամենահինը Ավանի տաճարում է[18]), ապա այդ առումով էլ է եկեղեցին կարևորություն ստանում:

Հուշարձանի բոլոր խաչաթևերն արտաքինից ունեն երկթեք ծածկ: Միաթեք ծածկով ավարտվում են միայն ավանդատները: Եկեղեցու ծածկասալերը չեն պահպանվել: Թե՛ ճակատները և թե՛ ներքին մակերեսները զուրկ են գեղազարդային հարդարանքի տարրերից: Բացառություն են կազմում տրոմպների և առագաստների վրա, կամարների հատման հենց անկյուններում գտնվող փոքր ելուստ ունեցող դիմաքանդակները:

Հյուսիսային տրոմպի վրա քանդակված է մորուքավոր մարդու գլուխ, որից մի փոքր վերև պատկերված է թևատարած մի թռչուն: Հարավային տրոմպի վրա կա կլոր եզրագծով մի դիմապատկեր, որը քայքայվածության պատճառով ճանաչելի չէ, սակայն ինչոր չափով հիշեցնում է առյուծ: Ինչ վերաբերում է առագաստների բարձրաքանդակներին, ապա հավանաբար հյուսիսայինում առ-

յուծի դեմք է, իսկ հարավայինում՝ մարդու: Քանդակներն հնաոճ են և աչքի են ընկնում կատարման պարզ ձևերով: Ս. Մնացականյանը մի առիթով գրում է, որ եկեղեցիների մեջ նշված տեղերում տեղադրված քանդակները պահպանիչ խորհրդանշաններ[19] են, իսկ մի այլ տեղ նշում է. «Առագաստների վրա սովորաբար պատկերվում էին ավետարանիչները: Այդ տեսնում ենք բյուզանդական և հայկական մի շարք հուշարձաններում (Տիգրան Հոնենցի եկեղեցին Անիում, Արփայի եկեղեցին և այլն): Այժմ դժվար է ասել, թե ինչպես էին առնչվում հնավանդ այդ խորհրդանշանները քրիստոնեական պատկերագրության հետ»[20]: Հնարավոր ենք համարում, որ վերը նկարագրված քանդակները ավետարանիչների խորհրդանշանները լինեն, թեև դրանք չունեն հայտնի պատկերագրական այն կերպը (առյուծ, մարդ, արծիվ, եզ), որին մենք ծանոթ ենք հետագա դարերի հուշարձաններից (Արենի և այլն):

Գմբեթակիր կամարների հատման անկյունամասերում դիմաքանդակներ ունեցող կառույցները այնքան էլ շատ չեն: Այդպիսիներից հայտնի են՝ Սանահինի Ս. Աստվածածին եկեղեցին[21] (10-րդ դ.), Գնդեվանքի տաճարը[22] (10-րդ դ.), Գանձասարի տաճարը (13-րդ դ.), Արենիի Ս. Աստվածածին եկեղեցին[24] (14-րդ դ.): Վաղ միջնադարից մեզ հայտնի միակ կառույցը նորահայտ[25] եկեղեցին է:

Եկեղեցիների հնագույն օրինակների հետ առնչությունները (գլխավոր խորանում լուսամուտի բացակայություն, տրոմպների և առագաստների համատեղ գործադրություն) և կառուցողական հնաոճ ձևերի օգտագործումը (ջեջտված պայտաձև խորաններ և կամարներ, հնաոճ քանդակներ) հիմք են տալիս նորահայտ այս հուշարձանը համարելու 5—6-րդ դարերի կառույց: Հայ ճարտարապետության այս ինքնատիպ ստեղծագործությունը մի շարք մանրամասներով իր տիպի մեջ միակը լինելով (հատակագծի երկխորան հորինվածք, գմբեթատակ քառանկյան տարբեր անկյուններում փոխանցման տարբեր համակարգերի օգտագործում, առագաստների և տրոմպների վրա գտնվող բարձրաքանդակներ, երկկենտրոն կամարների կիրառում), անկասկած կարևոր դեր պետք է խաղա հայ ճարտարապետության սկզբունքային որոշ հարցեր պարզաբանելու տեսակետից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ա. Շիրակացի, մատենագիտություն, Երևան, 1979, էջ 295, տես նաև Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ աշխարհացույցի, Երևան, 1963, էջ 32: Միջին դարերում այն կոչվել է նաև Քաշաթաղ, Խոժոռաբերդ:
2. Ս. Տ. Երեմյան, նշվ. աշխ. էջ 34, կոչվել է նաև Աղուան:
3. Գավառի միայն մի եկեղեցի, այն է միայն մեկ տեղ հիշատակում է Մ. Կաղանկատվացին. «...Գայ իջանէ (ինչ որ արաբ կորավար.—Ռ. Ա.) յաղաղեջ գաւառ՝ յաւան մի՝ Արքուգետ կոչեցեալ, և իսկոյն հրամայէ այրել զկեղեցին, որ սրբոյն Գրիգորի էր անուանադրեալ» (Մ. Կաղանկատուացի, պատմութիւն Աղուանից աշխարհի, Երևան, 1983, էջ 331): Ղ. Ալիշանը գրում է. «Որքան ընդարձակ և ըստ բնութեան հանգամանայ գեղեցիկ թուի գաւառս այս, ըստ ցուցակութեան տեղագիր տախտակաց, այնքան և անծանօթ է մնացեալ յայժմուս, կարծեմ թէ և ի վաղուց իսկ»: (Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, Ս. Ղազար, 1893, էջ 265): Այնուհետև մանրամասն նկարագրելով գյուղերը, հիշատակում է երեք վանք՝ Ծիծեռնավանքը (էջ 268), Պնայ վանքը (էջ 267) և Պիլու վանքը (ներդիր քարտեզ):

Ե. Լալայանի «Զանգեզուրի գավառ» աշխատության մեջ նշված են Ծիծեռնավանքը, Պանտալիոն բժշկի մատուռը և, ըստ իրեն, ճարտարապետական տեսակետից ոչ մի արժեք չներկայացնող մի շարք ավերակ եկեղեցիներ: Դրանք են՝ Ջիջիվլի, Հերիկի, Մերիկի, Բայենդուրի, Հոչասի, Փչանիսի, Չրախլուի, Կատոսի, Սունասարի, Ղորդղաֆի, Ալիղուլի-Ուշաղի եկեղեցիները: (Ե. Լալայան, Զանգեզուրի գավառ, Բ. հատոր, Թիֆլիս, 1889, էջ 48—50):

Իսկ Ս. Բարխուդարյանը տալիս է Ծիծեռնավանքի, Քոչիսի, Մինքենդի, Շալվայի, Ահմեդլուի, Մրրիկի, Փարաջանց գյուղերի եկեղեցիների վիմական արձանագրությունները և նշում ևս մի մատուռ Մինքենդ գյուղից 4 կմ հեռու: (Ս. Բարխուդարյան, Դիվան հայ վիմագրության, Երևան, 1982, պր. 5, էջ 192—196): Գավառի գյուղերի և վանքերի մասին տեղեկություններ կան նաև Ստ. Օրբելյանի «Պատմություն Նահանգին Սիսական», Հ. Էփրիկյանի «Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան» և այլոց աշխատությունների մեջ:

Բերված հեղինակների աշխատությունների մեջ տեղը նշված վանքերից և եկեղեցիներից ոչ մեկը չի նույնանում մեզ հետաքրքրող հուշարձանի հետ, իսկ տեղը չնշված և միայն հիշատակված հուշարձանների մասին դժվար է որևէ բան ասել:

4. Վ. Գրիգորյան, Վաղ միջնադարյան կենտրոնագմբեթ փոքր հուշարձանները, Երևան, 1982, էջ 5—8:
5. Նույն տեղում, էջ 6 և 49:
6. Անհրաժեշտ եմ համարում նշել, որ ընդհանրապես հայ ճարտարապետությանը հայտնի սակավաթիվ երկխորան կառույցներում խորանները կետեղված են միայն արևելյան կողմում (Հ. Քարոաջյան, Նոր Վարագավանքի ճարտարապետական

համալիրը, Լրաբեր հասարակական գիտությունների, 1984, № 7, էջ 63): Այդպիսի մի հուշարձան էլ կա ԼՂԻՄ Մարտակերտի շրջանի Վանք գյուղի մոտ, Դարպասներ կոչվող վայրում, Ջալալյանների իշխանական ապարանքի տարածքում:

Եթե չափերով փոքր այդ հուշարձանները ունեն մեմորիալ բնույթ (С. Х. Халпахчьян, Двухабсидные базилики Армении, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1954, № 8, էջ 51—62), և բնականաբար նախատեսված չեն եղել եկեղեցական բազմամարդ ծիսակատարությունների համար, ապա դիտարկվող եկեղեցու երկու տարբեր թևերում խորան ունենալը հավանաբար բխել է ֆունկցիոնալ անհրաժեշտությունից (Վ. Գիրգորյան, նշվ. աշխ., էջ 32):

7. Վ. Գրիգորյան, նշվ. աշխ. էջ 49:
8. Նույն տեղում, էջ 140, գծ. 1 և 6, էջ 133, գծ. 1:
9. Նույն տեղում, էջ 49:
10. Նույն տեղում, էջ 60:
11. Նույն տեղում, էջ 69:
12. Մորուս Հասրաթյան, պատմա-հնագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1985, էջ 226:
13. Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Երևան, 1942, էջ 123, նկ. 74:
14. Նույն տեղում, էջ 305, նկ. 213:
15. Նույն տեղում, էջ 302, նկ. 211:
16. Նույն տեղում, էջ 342, նկ. 249:
17. Վ. Գրիգորյան, նշվ. աշխ. էջ 36:
18. Նույն տեղում, էջ 72:
19. Ս. Մնացականյան, Հայկական աշխարհիկ պատկերաքանդակը, Երևան, 1976, էջ 69:
20. Ս. Մնացականյան, Պահպանիչ խորհրդանշանները միջնադարյան հայ քանդակագործության մեջ, Լրաբեր, 1970, № 3, էջ 192:
21. О. Х. Халпахчьян, Санаин, М., 1973, илл. 14—17:
22. Ս. Մնացականյան, Հայ ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Երևան, 1960, էջ 50:
23. Ս. Մնացականյան, Պահպանիչ խորհրդանշանները միջնադարյան հայ քանդակագործության մեջ, Լրաբեր, 1970, № 3, էջ 192:
24. О. Х. Халпахчьян, Декоративное искусство средневековой Армении, Ленинград, 1971, илл. (94—97).
25. Հուշարձանին ծանոթացնելու և չափագրության ընթացքում ցույց տրված մեծ օգնության համար խորին շնորհակալություն եմ հայտնում Գորիս քաղաքի բնակիչներ Ռ. Հայրապետյանին, Ռ. Հարությունյանին, Հ. Մարտիրոսյանին:



ՀԱՅՐ ՄԻՀԵԼ ՔԵՆԵԼ
(Աստվածաբանության դասախոս)

ԻՆՉՊԵՍ ԿԱՐԴԱԼ ԱՎԵՏԱՐԱՆԸ*

ՍՈՒՐԲ ՄԱՐԿՈՍ

29. ՓՈԹՈՐԿԻ ԽԱՂԱՂԵՑՈՒՄԸ
(Մարկ. Դ 35—41)

Դ 35 Այդ նույն օրը, երեկոյան դեմ, նրանց ասաց. «Եկե՛ք անցնենք ծովի մյուս կողմը»:
36 Թողնելով ժողովրդին՝ նրան իրենց հետ տարան նավակով, ինչպես նաև՝ մյուս նավակները, որ նրա հետ էին:
37 Եվ մեծ հողմամրրիկ բարձրացավ ու ալիքները նավակի մեջ էր թափում, այն աստիճան, որ նավակը իսկ և իսկ գրեթե լցվում էր:
38 Իսկ ինքը նավախելի կողմը բարձի վրա ննջում էր: Նրան արթնացրին և ասացին. «Վարդապե՛տ, բնավ քո հոգ չէ՞, որ ահա մենք կորչում ենք»:
39 Եվ նա, արթնանալով, սաստեց հողմին և ասաց ծովին. «Դադարի՛ր, լռի՛ր»: Եվ հողմը դադարեց, ու մեծ խաղաղություն եղավ:
40 Եվ նրանց ասաց. «Ինչո՞ւ այդպես վախկոտ եք. դեռևս հավատ չունե՞ք»:
41 Եվ նրանք սաստիկ վախեցան և միմյանց ասում էին. «Ո՞վ է արդյոք սա, որ թե՛ հողմը, թե՛ ծովը հնազանդվում են սրան»:

«...Բայց իր աշակերտներին առանձին ամեն ինչ մեկնում էր: Այդ նույն օրը, երեկոյան դեմ, նրանց ասաց. «Եկե՛ք անցնենք ծովի մյուս կողմը»:

Հիսուս իր աշակերտների հետ է, որ պիտի կտրեր-անցներ լիճը: Նա նրանց ներքաշում է (տեղին է նշել այդ) վտանգավոր մի ձեռնարկման մեջ, երեկոն իջնում է, ու դրա հետ վրա է հասնում անհանգստացնող մթությունը, խավարի ժամը, երբ, ըստ տրվյալ ժամանակաշրջանի մտայնության, չարի ուժերն ավելի եռանդուն են գործում: Պետք էր կտրել-անցնել ջրի տարածությունը: Հին դարերում հրեաները վատ նավավարներ էին. նրանք հեշտությամբ վախենում էին ծովից. Հին Կտակարանում բազում անգամներ վկայված է այդ մտայնությունը, որի համաձայն դժոխքի հրեշները կամ դիվական կորությունները ապրում էին ջրերի խորքում: Ինչ վերաբերում է լճի մյուս ափին, ապա այն գտնվում է հեթանոսների երկրում. նրա բնակիչները չեն ճանաչում Իսրայելի Աստծուն: Միշտ էլ կարելի է պղծությամբ վարակվել՝ մոտիկից շփվելով նրանց հետ: Իսկ նրանց ընդունելությունը կարող է լինել վերապահ և նույնիսկ՝ թշնամական:

Նավակում այժմ արդեն անապահովության մի ծանր մթնոլորտ է տիրում: Թվում է, թե Հիսուս իր աշակերտներին ուսուցանելուց հետո, այժմ ուզում է փորձության ենթարկել նրանց: Գիշերային ճանապարհորդությունը լճի վրայով նրանց համար պիտի լինի չարի ուժերի հետ դեմ հանդիման գալու մի դժնդակ պահ, բավականին նման փորձության այն քառասուն օրերին, որ Հիսուս ճանաչեց անապատում իր քարոզությունն սկսելուց առաջ:

Արդյ, այնքան էլ հաճոյիչ չէ., թե նրանք

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1986 թվականի №№ Բ—Ե-ից:

կկարողանան դիմանալ այդ փորձությանը: Հենց որ ալիքներն սկսում են մոլեգնել, նրանք կորած են համարում իրենք իրենց և նույնիսկ մտածում, որ իրենց տերը լքել է իրենց: Նրանք սարսափել են փոթորկից (համար 39—40): Եվ վախը շարունակում է տևել նրանց մեջ նույնիսկ այն ժամանակ, երբ Հիսուս ցույց է տալիս չարի վրա իր ունեցած իշխանությունը՝ իր խոսքն ուղղելով ծովին, ինչպես պիտի ասեր դևերին՝ «Դադարի՛ր, լռի՛ր» (համար 39): Այս բառերը հիշեցնում են այն խոսքերը, որ Հիսուս արտասանում էր Կապառնայումի ժողովարանում, երբ առաջին անգամ բժշկում էր դիվահար հիվանդին՝ սաստելով պիղծ ոգուն. «Զայնդ կտրի՛ր և դո՛ւրս ել դրանից» (Մարկ. Ա 25): Հիսուս դևերին հանում է ծովից՝ դևերի որջից:

Սի տեսակ սրբական սարսափ է իջնում այն ժամանակ աշակերտների վրա ի տես այն մարդու հպորության, որի հետ իրենք նավակ էին նստել: Առաջին անգամ է, որ Մարկոսը խոսում է աշակերտների վախի մասին: Բայց դա հեռու է վերջինը լինելուց. մինչև ավետարանի վերջը նրանք պիտի մընան այդ վախի տիրապետության տակ, հենց որ Հիսուս հայտնի դարձնի նրանց իր անձի կամ իր առաքելության անծանոթ, անսպասելի մեկ կողմը: Լինելով հանդերձ Հիսուսի առանձնաշնորհյալ ուղեկիցները՝ նրանք անբուժելիորեն պիտի մնան վատ-հավատացյալներ: Հենց դա է, որի վրա կարմանում է իրենց տերը. «Ինչո՞ւ այդպես վախկոտ եք. դեռևս հավատ չունե՞ք» (համար 40):

Սակայն աշակերտների վախն իսկ դրական մի բան է բովանդակում իր մեջ: Այդ վախը նրանց մղում է Հիսուսի մասին մի հարց ուղղելու իրենք իրենց, որ կարելի է համեմատել նրա անձի մասին սուրբ Մարկոսի կողմից հիշատակված մյուս հարցերի հետ: Կապառնայումի ժողովարանում առաջին դիվահարի բժշկումից հետո ներկաները ասում էին.

— **Այս ի՞նչ նոր վարդապետություն է:**
(Մարկ. Ա 27)

Զարմանքը բավականին ամբողջական է. հարցը վերաբերում է տեղի ունեցած եղելությանը: Բայց այդ հարցը դեռևս շատ հեռու չի գնում... Ավելի ուշ, Նապարեթում, տեղի բնակիչները Հիսուսի մասին հարց պիտի տան իրենք իրենց՝ ասելով.

— **Այս բաները որտեղի՞ց են սրան:**
(Մարկ. Զ 2)

Սա արդեն փակ հարցի իսկական օրինակ է. ի՞նչ ծագում ունի այս մարդը, որո՞նք են նրա տիտղոսները: Մեկին բնութագրել ուզենալ իր ծագումով, իր միջավայրով, խոսելու իր իրավունքով՝ նշանակում է ուրանալ նրա մեջ ամեն ինչ, որ բացատրելի չէ արդեն ծանոթ տվյալներով: Այս պայմաններում ոչ մի հայտնագործում, ոչ մի առաջընթաց հնարավոր չէ: Նման վերաբերմունքի պատճառով է, որ դպիրներն ու փարիսեցիները նույնպես իրենք իրենց դուրս թողեցին Բարի լուրից (Մարկ, Գ 1—6):

Դրան հակառակ, այն հարցը, որ աշակերտներն ուղղում են իրենք իրենց, բաց հարց է.

— **Ո՞վ է արդյոք սա:** (Մարկ. Դ 41)

Նրանք դեռևս հեռու են իրենց հավատին տիրացած լինելուց, բայց նրանց հարցն արդեն խփում է էականին. ով որ ավելորեն է ձգտում բացահայտել իր խոսակցի անձնավորությունը, նա միաժամանակ ընդունակ է կասկածի տակ դնելու իր հավատը և այդտեղից մեկնելով՝ կարող է առաջ գնալ: Փոթորկի խաղաղեցման դրվագը ի հայտ է բերում այն վերաբերմունքը, որը թույլ է տալիս առաջ ընթանալ հավատի մեջ:

Հիշատակելով այս դրվագը՝ Մարկոսը հավանաբար մտածում է նաև Եկեղեցու կացության մասին, չարիքի և հալածանքների հարձակումներից վնասված այդ դյուրաբեկ նավակի մասին: Վախը կարծես անդամալուծել է փորձության ենթարկված քրիստոնյաներին: Բայց նրանք կարող են իրենց հայացքն ուղղել դեպի իրենց Տերը, որը քնած է թվում, և հարց տալ իրենք իրենց, թե ո՛վ է իսկապես նա, և նրանո՛վ ամրացնել իրենց երերուն հավատը:

30. ՀԻՍՈՒՍ ԳԵՐԳԵՍԱՑԻՆԵՐԻ ՄՈՏ
(Մարկ. Ե 1—20)

Ե 1 **Եվ Հիսուս եկավ ծովի հանդիպակաց կողմը, գերգեսացիների երկիրը:**
2 **Եվ երբ նա նավակից դուրս ելավ, գերեզմաններից նրա դեմն ելավ մի մարդ, որին բռնել էր մի պիղծ ոգի,**
3 **և որի բնակության տեղն իսկ գերեզմանների մեջ էր: Ոչ ոք նրան շղթաներով անգամ չէր կարող կապել,**
4 **որովհետև շատ անգամ ոտնակապերով և շղթաներով կապված էր, բայց շղթաները փշրել էր ու ոտնակապերը՝ ջարդել:**
5 **Ոչ ոք նրան չէր կարողանում ցսպել, որովհետև միշտ, գիշեր ու ցերեկ, գերեզմաններում և լեռներում, աղաղակում էր և ինքն իրեն քարերով ծեծում:**
6 **Երբ նա Հիսուսին հեռվից տեսավ, առաջ վազեց և երկրպագեց նրան.**

7 բարձրաձայն աղաղակեց և ասաց. «Ի՞նչ
ես ուզում ինձնից, Հիսո՛ւս, բարձրյալ
Աստուծո՛ Որդի: Երդվեցնում եմ քեզ
Աստուծով, ինձ մի՛ տանջիր».
8 քանի որ Հիսուս նրան ասում էր.
«Պի՛ղծ ոգի, դո՛ւրս ելիր այդ մարդուց»:
9 Եվ նրան հարցրեց. «Անունդ ի՞նչ է»:
Եվ նա ասաց նրան. «Իմ անունը Լե-
գեոն է, քանի որ մենք բազում ենք»:
10 Իսկ պիղծ ոգիները սաստիկ աղաչում
էին նրան, որ երկրից դուրս չուղարկի
իրենց:
11 Եվ այնտեղ, լեռան լանջին, խոզերի մի
մեծ երամակ կար, որ արածում էր:
12 Բոլոր դևերը աղաչեցին նրան և ասա-
ցին. «Մեզ խոզերի մեջ ուղարկիր, որ
մտնենք նրանց մեջ»:
13 Եվ նա հրամայեց նրանց: Երբ պիղծ ո-
գիները դուրս եկան, մտան խոզերի
մեջ, և երամակը, թվով մոտ երկու հա-
զար, դարավանդից դիմեց դեպի ծովը.
և խեղդվեցին ծովում:
14 Խոզարածները փախան և քաղաքում
ու ագարակներում պատմեցին. և մար-
դիկ դուրս ելան տեսնելու, թե ի՞նչ է
կատարված:
15 Եկան Հիսուսի մոտ և տեսան դիվա-
հարին, որ նստել էր՝ հագնված և զգաս-
տացած, նրան, որ լեգեոն ուներ. և
զարհուրեցին:
16 Եվ ովքեր որ տեսել էին, պատմեցին
նրանց, թե ինչ պատահեց այսպահարին
և ինչ՝ խոզերին:
17 Եվ սկսեցին աղաչել նրան, որ հեռանա
իրենց սահմաններից:
18 Եվ երբ նավակ մտավ, դիվահարը նրան
աղաչում էր, որ նրա հետ լինի:
19 Բայց Հիսուս նրան թույլ չտվեց, այլ
ասաց. «Գնա՛ քո տունը ընտանիքիդ
մոտ և պատմի՛ր նրանց այն ամենը, ինչ
Տերը քեզ արեց և թե ինչպես գթաց
քեզ»:
20 Եվ նա գնաց ու սկսեց տարածել Դեկա-
պոլսում, ինչ որ Հիսուս արել էր նրա
համար: Եվ ամենքը զարմանում էին:

Այսպիսի մի պատմություն կարող ենք անսխալ կերպով ասել, որ սուրբ Մարկոսի գրչին է պատկանում: Ավետարանիչների մեջ միայն նա ունի անփութություններով և թարմությամբ լի այս ոճը: Որպես պատմող, նա շատ է սիրում խոսել. առաջ է գնում, ետ գալիս, երկար կանգ է առնում այնպիսի նկարագրությունների վրա, որոնք լեցուն են որոշակի մանրամասնություններով: Տեսնում ենք, թե ինչպես խոզերը վազում-նետվում են լիճը, հեշտությամբ պատկերացնում ենք նաև այսպահարին՝ իր կապտած և ճանկռոտված մարմնով, մի իսկական կատաղած գիժ, հենց որ մեկնումեկը փորձում է մոտենալ նրան: Թվում է, թե մենք այնտեղ ենք գրտնվում:

Մարկոսն արդեն պատմել է մի դիվահարի բժշկման մասին Կապառնայումի ժողովարանում (Մարկ. Ա 21—28): Բայց նրա առաջին պատմության շարադրանքը շատ ավելի սեղմ էր: Այսուհանդերձ այս երկու դրվագների դևերը ընդհանուր շատ գծեր ունեն իրենց միջև: Նախ նրանք շատ լավ գիտեն, թե ով է Հիսուս: Լինելով գերբնական էակներ՝ նրանք աշխարհի և մարդկանց մասին ունեն գերպանց ճանաչում, հակադրվելով հանդերձ բարուն: Հիսուս հանդես է բերված որպես բարձրյալ Աստուծո Որդի և, զարմանալիորեն, այս անգամ լռություն չի պարտադրում դիվահարին, որը ճանաչում է նրան: Բացի այդ, ինչպես այստեղ, այնպես էլ Կապառնայումի ժողովարանում, դևը թե՛ եպակի է և թե՛ հոգնակի. հռոմեական մեկ լեգեոնն անում է մոտավորապես վեց հազար ռազմիկ: Նրանք, համենայն դեպս, բավականին շատ են բնակվելու համար երկու հազար խոզերից բաղկացած մի երամակի մեջ: Պայքարել չարի դեմ՝ նշանակում է բախվել մի վտանգավոր հակառակորդի:

Դրան հակառակ, այս դևը, որ «Լեգեոն» է կոչվում, մի առանձնահատկություն ունի. շատ է կապված պիղծ բաներին: Նա բնակվում է հեթանոսների երկրում՝ Գերգեսայում, Տիբերիական լճի արևելյան ափին և ոչ մի ցանկություն չունի դուրս գալու այնտեղից: Երբ նա բնակություն է հաստատում մի մարդու մեջ, նրան քարշ է տալիս գերեզմանները՝ դիակների աշխարհը, որը իսրայելացու համար նույնպես հանդիսանում է մի պիղծ վայր: Մի հրեա չի կարող դիպչել մի դիակի առանց իրեն պղծված զգալու: Եվ, վերջապես, այն վայրը, որտեղ նա ցանկություն է ունենում մնալու վտարվելուց հետո այն մարդուց, որի մեջ բնակություն էր հաստատել, խոզերի մի երամակ է, կենդանիներ, որոնց նկատմամբ եբրայեցիները գարշանք են զգում: Այս դևը չի ուզում թափառաշրջիկ լինել. նա կարիք ունի բնակվելու որևէ տեղ և հաճույք է զգում պիղծ միջավայրում ապրելուց:

Այսպիսին է այն շրջանը, որ գծել է սուրբ Մարկոսը: Հիսուս, որ կտրել-անցել էր լիճը՝ մուտք գործելու համար հեթանոսների երկիրը, դեմհանդիման է գալիս չարի հետ հանձին սաստիկ խռովության մատնված մի դիվահարի, որ փակում է նրա ճանապարհը:

Իր միջամտությամբ Հիսուս վերահաս-

տատում է դևի կողմից արարչագործության որոշ չափով խանգարված կարգը: Մարդը փրկվում է. դևերը դատապարտվում են գնալ ապաստան գտնելու պիղծ կենդանիների մի երամակի մեջ և նույնիսկ վերադառնալու այն խորխորատները, որտեղ բնակվում են սովորաբար: Խոզերը, որոնք իրենց մեջ են ընդունում նրանց, գահավեժ գնում են լճի հատակը, որը դժոխային զորությունների հայտնի բնակավայրն է: Չարիքն արդեն սանձված է:

Այս բոլորը, իհարկե, այդ երկրի բնակիչների արտովը չէ բնավ: Նրանք ավելի շուտ կնախընտրեին, որ իրենց եղբայրներից մեկը իր անձի մեջ կրեր աշխարհի ամբողջ դժբախտությունը, միայն թե իրենց խոզերը կարողանային հանգիստ արածել: Նրանց համար Հիսուսի արարքը խորապես կործանարար է: Այն նրանց վերադարձնում է յուրայիններից մեկին. այն միաժամանակ նրանց զրկում է իրենց ունեցվածքից: Ընդհանրապես այսպես է վերաբերվում Ավետարանը, բայց նաև սրա համար է, որ այն վատ է ընդունվում: Մարդիկ գերադասում են մի եղբայր զոհել ի խնդիր իրենց նյութական բարեկեցության, քան հակառակը:

Գալով բժշկված մարդուն՝ նա, գիտակցելով, թե ինչ արեց Հիսուս իր համար, ցանկանում է գնալ նրա ետևից: Նա շատ է ուզում ուղեկցել աշակերտներին և Հիսուսի հետ նստել նավակ ու միանալ Բարի լուրը քարոզողների խմբին: Տերը, սակայն, թույլ չի տալիս և հանձնարարում է նրան, որ գնա և իր երկրում հայտնի, թե ինչ է արել հրեաների Աստվածը իր համար. մի հրահանգ, որ բոլորովին հակառակն է այն պատվերների, որ ընդհանրապես տալիս է Հիսուս: Սովորաբար նա պահանջում է գաղտնապահություն և լռություն (տե՛ս Մարկ. Ա. 21—28 կամ Մարկ. Ե. 21—43):

Ինչո՞ւ այս տարբերությունը: Թվում է, թե այն բխում է երկու գլխավոր պատճառներից:

Նախ՝ դիվահարների բժշկումը կատարվեց հեթանոսական մի երկրում, այնպիսի մարդկանց մեջ, որոնք իսկապես չեն ճանաչում Իսրայելի Աստծուն: Ինչքան անհեթեթ է այն, որ հրեաների մեջ Հիսուս ըմբռնվի իբրև մակերեսային ոգևորություն առաջացնող մի հրաշագործ, նույնքան՝ պատճառ չկա, որ նման կասկածներ գոյություն ունենան հեթանոս ժողովուրդների մոտ: Նրանք դեռ նոր պիտի բացահայտեն ամեն ինչ Աստուծո մասին: Մի հին դիվահար, որի դրությունը պարզ կերպով ցույց է տալիս Աստուծո կատարած ընտրությունը ի նպաստ մարդկանց, ընդդեմ նյութական ունեցվածքի (լինի դա անասունների հոտ, թե այլ ստացվածք), կարող է հանդիսանալ մի լավ վկա: Մարկոսը չի մոռանում, որ Հռոմի համայնքը, որին ուղղում է իր խոսքը, մասամբ բաղկացած է հեթանոսական ծագում ունեցող քրիստոնյաներից, որոնք Աստվածաշնչի հետ միաժամանակ հայտնաբերել են Քրիստոսին:

Եվ երկրորդ՝ Հիսուս շուտով նավակ նստելով կհեռանա այդ երկրից: Գերգեսայի բնակիչների մակերեսային կապվածությունը նրա անձին՝ մտահոգություն չի պատճառի նրան, քանի որ նա արդեն մեկնած կլինի այդտեղից: Տեղում թողնելով մի մարդու, որ հանդիսանում է Աստուծո զորության և սիրո վկան, նա ցանում է ավետարանական մի սերմ, որ կարող է ունենալ իսկական մի ապագա:

31. ԿՅԱՆՔԻՆ ՎԵՐԱԴԱՐՁՎԱԾ ԵՐԿՈՒ ԿԱՆԱՅՔ

(Մարկ. Ե 21—43)

Ե 21 Եվ երբ Հիսուս նավակով նորից ծովի մյուս կողմն անցավ, նրա մոտ հավաքվեց բազում ժողովուրդ: Եվ ինքը ծովեզերքին էր:

22 Ահա եկավ ժողովրդապետներից մեկը, որի անունը Հայրոս էր. և երբ տեսավ նրան, նրա ոտքերն ընկավ.

23 սաստիկ աղաչում էր նրան ու ասում, որ իր դուստրը մահամերձ է, և որ նա գա ու նրա վրա իր ձեռքը դնի, որպեսզի փրկվի և ապրի:

24 Եվ Հիսուս գնաց նրա հետ. նրա ետևից գնում էր նաև բազում ժողովուրդ և նեղում էր նրան:

25 Եվ մի կին կար, որ տասներկու տարուց ի վեր արյունահոսություն ուներ:

26 Նա շատ էր տառապել բազմաթիվ բժիշկների ձեռքից և իր ամբողջ ունեցվածքը ծախսել էր, բայց որևէ օգուտ չէր գտել, այլ է՛լ ավելի վատացել էր:

27 Երբ նա լսեց Հիսուսի մասին, եկավ ամբոխի մեջ նրա ետևից և ձեռքը դիպցրեց նրա զգեստին,

28 որովհետև մտքում խորհում էր. «Եթե միայն դիպչեմ նրա զգեստներին, կըփրկվեմ»:

29 Եվ իսկույն նրա արյան աղբյուրը չորացավ, և իր մարմնի մեջ զգաց, որ տանջանքներից բժշկվեց:

30 Հիսուս իսկույն ինքն իր մեջ իմանալով իրենից դուրս ելած զորությունը, դարձավ դեպի ամբոխը և ասաց. «Ո՞վ դիպավ իմ զգեստներին»:

31 Աշակերտները նրան ասացին. «Տեսնում ես, որ ամբոխը նեղում է քեզ, և

ասում ես, թե՝ ո՞վ դիպավ իմ զգեստներին»:
32 Եվ նա իր շուրջն էր նայում՝ տեսնելու, թե ո՞վ արեց այդ:
33 Եվ այդ կինը, զարհուրած և դողալով նրա համար, որ գաղտնի էր արել,— որովհետև գիտեր, թե ինչ կատարվեց իր հետ,—եկավ-ընկավ նրա առաջ և ամեն ինչ ստուգությամբ ասաց:
34 Հիսուս ասաց նրան. «Դո՛ւստր, քո հավատը քեզ փրկեց, գնա՛ խաղաղությամբ և քո տանջանքներից բժշկված եղիր»:
35 Մինչ Հիսուս այս բանն էր խոսում, ժողովրդապետի տնից ոմանք եկան և ասացին. «Քո դուստրը մեռավ, էլ ի՞նչ ես նեղություն տալիս վարդապետին»:
36 Իսկ Հիսուս, երբ լսեց ասված խոսքերը, ժողովրդապետին ասաց. «Մի՛ վախեցիր, այլ միայն հավատա՛»:
37 Եվ ոչ ոքի թույլ չտվեց իր հետ գնալ, այլ միայն Պետրոսին, Հակոբոսին և նրա եղբորը՝ Հովհաննեսին:
38 Հիսուս ժողովրդապետի տուն եկավ և տեսավ մի մեծ ամբոխ, լացուկոծ անողներ և աղմուկ-աղաղակ:
39 Ապա ներս մտնելով՝ ասաց նրանց. «Ինչո՞ւ եք խռովված ու լաց եք լինում, մանուկը մեռած չէ, այլ ննջում է»:
40 Սակայն նրանք ծաղրում էին նրան: Իսկ նա, ամենքին դուրս հանելով, վերցրեց իր հետ մանկան հորն ու մորը և նրանց, որ իր հետ էին, և մտավ այնտեղ, ուր պառկած էր մանուկը:
41 Եվ բռնելով մանկան ձեռքից՝ ասաց նրան՝ «Տալի՛թա, կո՛ւմի», որ թարգմանվում է՝ աղջի՛կ, դո՛ւ, քե՛զ եմ ասում, արթնացի՛ր:
42 Եվ աղջիկը իսկույն վեր կացավ ու քայլում էր, քանի որ մոտ տասներկու տարեկան էր: Եվ ամենքը մեծապես զարմացան:
43 Նա նրանց խստիվ պատվիրեց, որ ոչ ոք այդ բանը չիմանա. և ասաց, որ նրան ուտելու բան տան:

Հիսուս և յուրայինները վերադարձան Հորեաստան, Տիբերիական լճի արևմտյան ափը: Կարճ ճանապարհորդությունը Հեթանոսների մոտ, որ վերջ էր գտել, կարելի է ասել՝ ձախողվեց. չարի զորությունները թեև սանձված էին, բայց գերգեսացիները շատ էին կապված իրենց անասունների հոտերին՝ կարողանալ իրենց հոգիները բանալու համար Ավետարանի լույսին: Հիսուս տեղում թողեց միայն բժշկված մի հին դիվահարի, որպեսզի վկայություն տար եղածի մասին. սակայն Մարկոսը չի ասում, թե ինչ պատահեց նրա հետ:

Կրկնակի բժշկման վերաբերող այս պատմությունը, որը նախորդի շարունակությունն է կազմում, իր ոճով շատ մոտ է նրան. նույն անփութությունները, պատմելիս հաճախակի ետ դառնալու նույն սովորությունը և այլն: Ավետարանիչն այստեղ ի հայտ է բերում ժողովրդական պատմողի իր ամբողջ տաղանդը: Նրա մտածման ուժեղ տարրերը գրեթե անհետանում են որոշակի մանրամասնությունների տակ, որոնք գլուխգործոցի հմայքն են կազմում:

Երկու տարբեր պատմություններ են պատմված: Դրանք, կղմինդրաշարի ձևով, ագուցված են մեկը մյուսի մեջ: Պատմությունն սկսվում և վերջանում է Հայրոսի աղջկա դրվագով, որը, իբրև մի տեսակ կենտրոնական կորիզ, իր մեջ է ներառնում արյունահոսությամբ տառապող հիվանդ կնոջ դրվագը: Մարկոսն այս հատվածը կառուցում է ըստ ներմուծման և ներփակման այն սեմական օրինակի, որը սովորական է նրա մոտ. պատմության երկու ծայրերը մեկ և մյուս կողմից հաղորդակցվում են միմյանց հետ միջին մի մասի միջոցով և այն շրջանակի մեջ են առնում: Այսպես՝

Ա. **Հայրոսի խնդրանքը** (համար 21—24).

Բ. **Արյունահոսությամբ տանջվող հիվանդ կնոջ բժշկումը** (համար 25—34).

Ա.[1] **Հայրոսի աղջկա հարությունը** (համար 35—43):

Այս երկու հրաշքները կապված են միմյանց: Ամեն անգամ նպաստավորվողը մի կին է լինում: Աղջիկը տասներկու տարեկան է. դա նվազագույն տարիքն է ամուսնության համար՝ ըստ այդ դարաշրջանի իսրայելական օրենքի, մինչդեռ մյուսը հիվանդ է նույն ժամանակից ի վեր: Երկուսն էլ անմաքուր են. տարիքով մեծը պիղծ է իր ախտագին արյունահոսության պատճառով, իսկ կրտսերն արդեն դիակ է դարձած այն պահին, երբ Հիսուս մոտենում է նրան: Երկու դեպքում էլ խնդրողի հավատը մեծ դեր է խաղում:

«Քո հավատը քեզ փրկեց», ասում է Հիսուս այն կնոջը, որը ետևից նրա զգեստին դիպչելով՝ համարյա թե գողությամբ է ձեռք բերում իր ապաքինումը (համար 34): Նա ասում է Հայրոսին՝ մեռած դեռատի աղջկա հորը. «Մի՛ վախեցիր, այլ միայն հավատա՛» (համար 36): Հիսուս գործում է այնպիսի հրաշքներ, որոնք կարծես դուրս են մնում իր հսկողությունից: Դրան հակառակ, այստեղ առաջնահերթ նշանակություն ունի խնդրողների տրամադրությունը. Հիսուսի

նկատմամբ իրենց ունեցած վստահությամբ է, որ նրանք կարողանում են յուրացնել այն ուժը, որ ճառագայթում է նրանից: Արյունահոսությամբ տառապող կնոջ բժշկումը ցույց է տալիս, որ Հիսուս մի հրաշք է գործում գրեթե հակառակ իր կամքին: Նրա առաքելության բուն էությունը կայանում է ոչ թե մարդկանց կորցրած մարմնական առողջությունը իրենց վերադարձնելու մեջ, այլ այն կյանքի մեջ, որի առաջ մարդ կարող է բաց անել իր հոգին ամբողջությամբ: «Քո հավատը քեզ **փրկեց**» (համար 34). **փրկեց** և ոչ պարզապես բժշկեց: Բժշկումը մի տեսակ ճարպկորեն գողացվել է Հիսուսից. բայց նա եռանդագին փնտրում է այն կնոջը, որն այդպիսի խոր հավատ էր ցուցաբերել, ասելու համար նրան, որ իր երջանկությունն ավելի մեծ է, քան վերագտնված առողջությունը:

Ինչ վերաբերում է փոքր աղջկան, նրա հայրը նույնպես հետամտում է նրա ամբողջական փրկությանը: Նա աղաչում է Հիսուսին, «որ գա ու նրա վրա իր ձեռքը դնի, որպեսզի **փրկվի** և ապրի» (համար 23):

Սկզբում, երբ աղջիկը դեռ չէր մահացել, Հիսուս համաձայն է լինում, որ բակամարդ ամբոխը ուղեկցի իրեն: Սակայն հենց որ իմանում է աղջկա մահը, նրա տոնը փոխվում է. ամբոխը ի վիճակի չէ հասկանալու տարողությունն այն բանի, ինչ տեղի է ունենալու: Հիսուս տեղում թողնում է բակամարդությունը: Մեռելի հետ դեմ-դիմաց գտնվելու համար իրեն պետք է ընկերակցեն միայն երեխայի հայրն ու մայրը, ինչպես նաև Պետրոսը, Հակոբոսը և Հովհաննեսը, այս երեքը, որոնց հետագայում նորից պիտի հանդիպենք Հիսուսի այլակերպության և Գեթսեմանիում նրա ծանր ապրումների վճռական պահերին (Մարկ. Թ 2—8 և ԺԴ 32—42):

Նույնիսկ լացուկոծ անողներին, որոնք դիակի շուրջը հավաքված՝ բարձր ճիչեր են արձակում վտարելու համար չար ոգիներին, Հիսուս փորձում է համոզել, որ սխալվում են, որ փոքրիկը պարզապես խոր քնի, թմբիրի մեջ է ընկել:

Պատմության ավարտը տեղի է ունենում մի փոքրիկ սենյակի մտերմության մեջ, որտեղ գտնվում են յոթ անձինք՝ փոքրիկ աղջիկն ու նրա ծնողները, Հիսուս և նրա երեք աշակերտները: Ամեն ինչ նկարագրված է վերին աստիճանի ժուժկալությամբ: Ավետարանիչը արամերեն լեզվով գրի է առնում այն երկու բառերը, որ Հիսուս ուղղում է երեխային, և ապա հունարենով տալիս է դրանց թարգմանությունը իր ընթերցողների համար: «Արթնացի՛ր» բայը, որ նա գործածում է, արտահայտում է սոսկ վաղանցուկ մի վերադարձ դեպի կյանքը. տասներկուամյա աղջնակը վերադարձվում է իր մահկանացու գոյությանը: Պարզ է, որ, ավելի ուշ, նա նորից պիտի մահանա, ինչպես բոլորը: Սակայն այդ «արթնանալ» բայը նմանապես եկեղեցական եզրերից մեկն է՝ նշելու համար վերջնական հարությունը: Հիսուսի մասին հետագայում պիտի ասվեր.

Նա արթնացավ երրորդ օրը: (Ա Կորընթացիս ԺԵ 4)

Հայրոսի տանը փոքրաթիվ վկաների ներկայությամբ տեղի ունեցած դեպքը նույնպես մարգարեական մի հայտնություն է Հիսուսի հարության մասին, որով ապրում են արդեն Մարկոսի ավետարանը կարդացող քրիստոնյաները: Հիսուս այնտեղ հանդես է բերված իբրև կյանքի և մահվան տերը, ամբողջապես մարդուն և բոլոր մարդկանց սահմանված փրկության տերը:

Եվ եթե նա կյանքն է փոխանցում, ապա իրոք այն պատճառով, որ մարդկությունը իրեն պատասխանատու զգա կյանքի նկատմամբ: Մինչ աշակերտներն ու աղջկա ծնողները, հիացումով տարված, այդ հրաշագործությունը աջ ու ձախ հրապարակելու մասին են մտածում միայն, Հիսուս նրանց վերադարձնում է պարզ իրականությանը: Թող նրանք լռեն: Նրանց շուրջը գտնվողներից ոչ ոք ներկայումս կարող չէ դրականապես ընդունել Հարության ավետիսը: Եվ թող չմոռանան կերակրել փոքրիկ աղջկան: Գեղեցիկ ու դյուրաբեկ այն կյանքը, որ նրանց վերադարձվեց, այժմ նրանց ձեռքում է: Նրա՛նց է մնում այն պահպանելն ու պտղաբեր դարձնելը:

32. ՀԻՍՈՒՍ ՆԱԶԱՐԵԹՈՒՄ
(Մարկ. Զ 1—6)

Զ 1 Եվ այնտեղից եկավ-գնաց իր գավառը. և իր աշակերտները գնում էին նրա ետևից:

2 Երբ շաբաթ օր եղավ, նա սկսեց ժողովարանում ուսուցանել. և շատերը, երբ լսում էին նրան, զարմանում էին նրա վարդապետության վրա և ասում. «Այս բաները որտեղի՞ց են սրան, կամ ի՞նչ է այս իմաստությունը, որ տրված է սրան, որ սրա ձեռքով այսպիսի զորավոր գործեր կատարվեն:

3 Սա հյուսնի տղան և Մարիամի որդին չէ՞ միթե, Հակոբի և Հովսեփի և Հուդայի և Սիմոնի եղբայրը. և սրա քույրերը այստեղ մեզ մոտ չե՞ն»: Եվ նրա վրա գայթակղվում էին:

4 Հիսուս նրանց ասաց. «Մարգարեն չընհարգված անձ չէ, բայց ոչ իր գավառում, իր ազգատոհմի և իր տան մեջ»:

5 **Եվ չէր կարողանում այնտեղ որևէ գործավոր գործ կատարել, այլ քիչ թվով հիվանդների վրա ձեռք դնելով՝ նրանց բժշկում էր:**

6 **Նա զարմանում էր նրանց անհավատության վրա: Եվ շրջում էր շրջակա գավառներում և ուսուցանում:**

«Ոչ ոք մարգարե չէ իր երկրում»: Իր հայրենի գյուղը վերադարձող Հիսուսի պատմությունը առակի կարգ է անցել: Հնարավոր է, որ Հիսուսի ապրած ժամանակ արդեն գոյություն ունեցած լիներ համանման մի ասացվածք՝ հիմնված Երեմիայի կամ Հին Կտակարանին անծանոթ մեկ ուրիշ մարգարեի փորձառության վրա: Հիսուս գուցե դրան է անդրադառնում, երբ ասում է. «Մարգարեն չհարգված անձ չէ, բայց ոչ իր գավառում, իր ազգատոհմի և իր տան մեջ» (համար 4):

Այն օրից, երբ Հիսուս սկսեց իր քարոզությունը, արդեն առիթ ունեցավ փորձառությամբ հաստատելու իր ընտանիքի անհասկացողությունը: Նրա մերձավոր ազգականներից մի պատվիրակություն Կափառնայում էր եկել՝ փնտրելու իր անգիտակից հարազատին, որը շատ էր վտանգի ենթարկում իրեն (Մարկ. Գ 20—21 և Գ 31—35):

Այժմ նա ինքն էր վերադառնում իր փարախը: «Իր գավառը» արտահայտությունը, անկասկած, նշում է Նազարեթ փոքրիկ ավանը (թեև Մարկոսն այստեղ չի տալիս նրա անունը), այն ավանը, որտեղից Հիսուս հեռացավ՝ հանդիպելու համար Հովհաննես Մկրտչին: Թվում է, թե այդ օրվանից նա չի վերադարձել այնտեղ (տե՛ս Մարկ. Ա 9—13): Ավանը շուրջ երեսուն կիլոմետր հեռու է Կափառնայումից, որտեղ Հիսուս բնակություն է հաստատել իր քարոզության սկզբից ի վեր:

Առաջին օրերին գյուղացիների կողմից ցույց տրված ընդունելությունը պետք է լավ եղած լիներ. ապացույց, որ ժողովարանում շաբաթ օրվա աղոթքի ժամանակ, Օրենքի և Մարգարեների գրքերի ընթերցումից հետո, Հիսուսին են հրավիրում տալու դրանց մեկնությունը: Եվ սակայն, ժողովականները, ըստ երևույթին, սպասում էին տափակ մի ճառի: Նրա իմաստությունը ուժեղ տպավորություն է թողնում և խանգարում նրանց: Նրանք կապ են տեսնում նրա ասածների և կատարած հրաշքների միջև, որոնց մասին լսել են, և սկսում են դիմադարձել նրան: Նրանք շատ լավ են ճանաչում նրան. իրենց գյուղի երեխաներից է. դպրոցական հատուկ դասընթացներ չի անցել. ոչ մի տիտղոս չունի՝ հեղինակությամբ արտասանելու համար այն խոսքերը, որ նա գործածում է:

Նազարեթի բնակիչները մերժում են Հիսուսի վարմունքը խորհրդածության առարկա դարձնել: Նրանք Հիսուսի մասին իրենք իրենց տալիս են մի փակ հարց, քանի որ ունեն արդեն դրա պատասխանը. «Այս բաները որտեղի՞ց են սրան» (համար 2): Նրանք ամեն ինչ գիտեն նրա անցյալի և ծագման մասին, գուցե նաև այն, որ Հովսեփը Հիսուսի իսկական հայրը չէ, որովհետև, զարմանալիորեն, նրան կոչում են «Մարիամի որդին», մինչդեռ մի հրեայի ընտանեկան պատկանելությունը ընդհանրապես նշվում է նկատի ունենալով հայրական կողմը: Ուրեմն նրանք ոչինչ չունեն սովորելու նրա մասին, ոչինչ չունեն հայտնաբերելու: Այստեղ արդեն մենք հեռու ենք այն հարցից, որ Հիսուսի աշակերտներն ուղղում էին միմյանց փոթորկի խաղաղեցման դրվագից հետո.

Ո՞վ է արդյոք սա: (Մարկ. Դ 41)

Հիսուսի հայրենակիցները չունեն այն տրամադրությունը, որը թույլ է տալիս հասնել հավատին: Մարկոսը որոշակի կերպով խոսում է նրանց թերահավատության, տառացիորեն նույնիսկ նրանց հավատի բացակայության մասին: Ավետարանում հավատը չի կայանում Աստուծո գոյությանը հավատալու մեջ, այլ՝ այն բանի մեջ, որ մարդ Հիսուսի նկատմամբ ունենա անկեղծ վստահության վերաբերմունք, եթե նույնիսկ այդ վստահությունը լինի անհաստատ և ոչ այնքան ապահով:

Նազարեթի մարդկանց թերահավատությունը մի տեսակ անխորտակելի պատնեշ է, որի վրա Հիսուս ինքն իսկ զարմանում է: Թեև նա տեղում կատարում է մի քանի բուժշկումներ, որ գրվածքը հրաշքների շարքը չի դասում, այնուամենայնիվ նա անկարող է լինում բառիս իսկական իմաստով հրաշքներ գործել նրանց համար:

Նման մի անկարողություն անշուշտ զարմանք է պատճառում քրիստոնյա ընթերցողին, որը սովոր է մտածելու, թե Հիսուս կարող է ամեն ինչ անել: Սակայն ավետարանիչն արդեն հասկացրել է, որ խնդրողի հավատը գլխավոր պայմանն է հրաշքի: Հարոսի և արյունահոսությամբ տառապող հիվանդ կնոջ պատմությունը դրա հաստատումն է (Մարկ. Ե 21—43): Առանց այդ հավատի Հիսուս մի տեսակ զուրկ է հրաշագործ կարողությունից: Որևէ կապ կամ հարաբերություն չի կարող հաստատվել երկու բևեռների միջև, եթե դրանցից մեկը մերժում է այն:

Ուրեմն Հիսուս այլևս ոչինչ չունի անելու Նազարեթում: Նա որոշում է նվիրվել շրջակա գյուղերի բնակիչներին:

(Շարունակելի)



«ЭЧМИАДЗИН»
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(ИЮНЬ 1986 г.)

1. Слово благословения Его Святейшества Католикоса Всех Армян армянам Ливана в связи с бедственными событиями и случаями насилия над сынами Армянской Церкви в Бейруте (4 июня 1986 г.) и ответная телеграмма Католикоса Киликийского Престола Гарегина II Его Святейшеству Католикосу Всех Армян (17 июня 1986 г.) (стр. 3—4).

2. **Диакон Александр Саркисян**—Посещение Католикоса Всех Армян монастыря Святого Гегарда 27 июня 1986 г. (стр. 5—6).

3. Конференция сторонников мира Советского Союза в Москве 11 июня 1986 г. (стр. 7).

4. Торжество по случаю закрытия учебного года в Духовной Академии (9 июня 1986 г.) и четырехдневное путешествие студентов Духовной Академии в Гугарк (11—15 июня 1986 г.) (стр. 8—14).

5. Церковная хроника, новости. Служение святых литургий в июне месяце в Кафедральном соборе, произнесенные проповеди и описание других торжеств в Первопрестоле (стр. 15).

6. Посещение Первопрестольного Эчмиадзина французскими студентами, 8 мая 1986 г. (стр. 16—17).

7. Описание ряда конференций в Советском Союзе и США, организованных Национальным Советом Христианских Церквей, Отделом Внешних Церковных Отношений и Конференцией Европейских Церквей (стр. 18—19).

8. **Нерсес Ванакан**—Видение вечное (стихотворение) (стр. 20—22).

9. **Священник Езник Петросян**—Традиция Армянской Церкви о праздновании Рождества Христова 6 января (исследование) (стр. 23—30).

10. **Ованес Такукян**—Религиозные представления и идея Бога в армянских пословицах (исследование) (стр. 31—36).

11. **Диакон Геворг Мкртчян**—Место Верхнего Нораванка (исследование) (стр. 37—41).

12. **Владимир Киракосян**—100-летие со дня рождения великого армянского поэта Мисака Мецаренца (исследование) (стр. 42—47).

13. **Абгарян Р. С.**—Новоявленный памятник армянской архитектуры (исследование) (стр. 48—53).

14. **Отец Мишель Кенел**—Как читать Евангелие (перевод с французского) (стр. 54—60).



"ETCHMIADZIN"
OFFICIAL JOURNAL OF HOLY ETCHMIADZIN
(JUNE 1986)

1. The word of blessing of the Catholicos of All Armenians to the Armenians of Lebanon, on the occasion of the disastrous events and violences perpetrated against the believers of the Armenian Church, which have taken place in Beirut (4th June 1986), and the cable of answer of the Catholicos Garegin II of Cilicia, addressed to His Holiness Vasken I (17th June 1986)—(pp. 3—4).

2. **Deacon Alexander Sarkisian**—The visit of His Holiness Catholicos of All Armenians Vasken I to the monastery of Geghard, 27th June 1986 (pp. 5—6).

3. The conference in Moscow of Soviet Union's partisans of peace, 11th June 1986 (p. 7).

4. The feast at the end of the scholar year in the Spiritual Seminary (9th June 1986) and the four days' excursion of the students of the Seminary in rhe region of Googark (11-15th June 1986)—(pp. 8—14).

5. Divine liturgy services and sermons delivered in the Holy Cathedral and description of church festivities in the Holy See during the month of June 1986 (p. 15).

6. The visit of the French pilgrims to Holy Etchmiadzin, 8th May 1986 (pp. 16—17).

7. Description of few sessions organized by the National Council of Christian Churches of Soviet Union and United States of America, of the External Church Relations' department and of the Christian Churches Conference (pp. 18—19).

8. **Nerses Vanakan**—The eternal vision (poetry)—(pp. 20—22).

9. **Father Yeznik Petrosian**—The Armenian Church's tradition to celebrate the Christmas feast on the 6th of January (study)—(pp. 23—30).

10. **Hovhannes Takoogian**—In the Armenian proverbs God's conception and envisagement (study)—(pp. 31—36).

11. **Deacon Gevorg Mekrtchian**—The place of the Verin Noravank (study)—(pp. 37—41).

12. **Vladimir Kirakossian**—The 100th birthday anniversary of the illustrious Armenian poet Missak Medzarentz (study)—(pp. 42—47).

13. **Rafik Sooren Abgarian**—A newly discovered monument of the Armenian architecture (study)—(pp. 48—53).

14. **Father Michel Quesnel**—How to read a gospel (Armenian translation from French)—(pp. 54—60).



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Օրհնութեան խօսք Լիբանանի հայութեան 3
Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ կաթողիկոսի պատասխան հեռագիրը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին 4
ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԱՐԿԱՎԱԳ ՍԱՐԳՍՅԱՆ—Վեհափառ Հայրապետը Ս. Գեղարդա վանքում 5
Սովետական Միության խաղաղության կողմնակիցների համաժողովը Մոսկվայում . 7
Ամավերջի հանդիսություն հոգևոր ճեմարանում և հոգևոր ճեմարանի ուսանողության չորսօրյա շրջապտույտ դեպի Գուգարաց աշխարհ 8
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ—Եկեղեցական բեմ. լուրեր 15
Ֆրանսիացի ուխտավորների այցը Մայր Աթոռ 16
Միջեկեղեցական կենդանի կապեր 18
ՆԵՐՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ—Տեսիլք Հավերժական 20
ԵԶՆԻԿ ՔՀՆ. ՊԵՏՐՈՍՅԱՆ—Քրիստոսի Ծննդյան տոնը հունվարի 6-ին տոնելու Հայ Եկեղեցու ավանդությունը 23
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹԱՔՈՒԿՅԱՆ—Աստծո գաղափարը և կրոնական պատկերացումները հայկական առածներում 31
ԳԵՎՈՐԳ ՍՐԿ. ՄԿՐՏՉՅԱՆ—Վերին Նորավանքի տեղը 37
ՎԼԱԴԻՄԻՐ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ—Միսաք Մեծարենց (Ծննդյան 100-ամյակի առթիվ) . 42
ՌԱՖԻԿ ՍՈՒՐԵՆԻ ԱԲԳԱՐՅԱՆ—Հայ ճարտարապետության նորահայտ հուշարձան . 48
ՀԱՅՐ ՄԻՇԵԼ ՔԵՆԵԼ—Ինչպես կարդալ Ավետարանը 54
«Эчмиадзин» официальный журнал Эчмиадзинского Католикосата 61
«Etchmiadzin» official journal of Holy Etchmiadzin 62

Академия наук Армянской ССР
Фундаментальная библиотека

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie, URSS

Հանձնված է արտադրության 26.06.1986 թ.: Ստորագրված է տպագրության 06.08.1986 թ.:
Տպագրական 4 մամուլ+6 ներդիր, թուղթ 60×84¹/₈, պատվեր 469:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1986 թ.